

Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԳԱՏԱՐԱՆ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆ**

Խմբագրական  
խորհուրդ՝

Գագիկ Նարոյթյունյան  
Վահե Սյրեփանյան  
Վորդյա Նովհաննիսյան  
Վալերի Դողոսյան  
Առուշան Նակոբյան

Խմբագրության հասցեն՝  
Երևան, Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 58-81-71

**ՏԵՂԵԿԱԳԻՐ**

3(87)  
2017

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## • ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1326-1338)

- \* ՀԱՅԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1326 - 6 դեկտեմբերի 2016 թվականի).....5
- \* 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՐԻԶՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1327 - 13 դեկտեմբերի 2016 թվականի).....21
- \* ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)» ՆԱՄԱԿ-ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1328 - 13 դեկտեմբերի 2016 թվականի) .....25
- \* ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ (ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1329 - 13 դեկտեմբերի 2016 թվականի).....35
- \* ԿԱՐԻՆԵ ԱՍԻՐԲԵԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 18-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1330 - 13 դեկտեմբերի 2016 թվականի).....40
- \* 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՄԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԹԻՎ CAM 1007 01 D ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1331 - 16 դեկտեմբերի 2016 թվականի) .....51

\* 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՐՈՐԴ ՎԱՐԿ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1332- 20 ղեկտեմբերի 2016 թվականի) .....57

\* ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 59-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 77-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1333 - 20 ղեկտեմբերի 2016 թվականի).....61

\* ՀԱՂԱՍԻ ՏԵՐ-ԵՍԱՅԱՆԻ ԵՎ ՆՇԱՆ ԻՍՊԻՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 52-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, 231-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 4-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 231-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1334 - 27 ղեկտեմբերի 2016 թվականի).....73

\* 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԱՏԱԿԱՐԱՐՎՈՂ ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՌԱՋԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1335 - 24 հունվարի 2017 թվականի).....97

\* ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖՐԱՆՍԻՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ՓԱՐԻԶՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՅ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻՅԻ) ՄԱՍԻՆ» 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1336 - 24 հունվարի 2017 թվականի).....105

* 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ՓԱՐԻԶՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1337 - 24 հունվարի 2017 թվականի).....	110
* 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ԲՈՒՐԱԲԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱՎՆԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1338 - 24 հունվարի 2017 թվականի).....	114

**• ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

* ՀԱՆՐԱԿԻՏԱՐԱՆԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԻՐՔ .....	118
* ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ .....	120
* ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ .....	120
* ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ .....	122
* «ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ .....	123
* ՍԵՄԻՆԱՐ ԳԵՐՄԱՆԱՅԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ .....	124
* ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ .....	126
* ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՉՈՐՐՈՐԴ ԿՈՆԳՐԵՍԸ ՎԻՆՅՈՒՍՈՒՄ .....	127
* ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՉՈՐՐՈՐԴ ԿՈՆԳՐԵՍՆ ԱՎԱՐՏԵՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ .....	128
* ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ԴԵՄՊԱՆԻ ՀՐԱԺԵՇՏԻ ԱՅՑԸ .....	129
* ԵՐԵՎԱՆՑԱՆ 22-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ .....	130
* ԵՐԵՎԱՆՑԱՆ 22-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆ ԱՎԱՐՏԵՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ .....	135



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

6 դեկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմող Հայկ Մարգարյանի ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի, Ա. Կիրակոսյանի, Ա. Ղազարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի, նույն վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի, համաձայն ՀՀ Սահմանադրության /2005թ. խմբագրությամբ/ 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց՝ «Հայկ Մարգարյանի դիմումի հիման վրա՝ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց

3(87)/2017  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՄԻ ԴԱՏԱՐԱՆ  
ՏԵՂԵԿՎՈՒՄ

սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 9-րդ հոդվածի 4-րդ մասի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հ. Մարգարյանի՝ 2016 թվականի օգոստոսի 2-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2014 թվականի փետրվարի 4-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2014 թվականի փետրվարի 13-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հուլիսի 1-ին:

Օրենքի «Պետական պաշտոն զբաղեցրած անձի և նրա ընտանիքի անդամների կենսաթոշակը հաշվարկելու կարգը» վերտառությամբ 5-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.

«3. Սույն օրենքով սահմանված կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է հիմնական կենսաթոշակի չափը, մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը, գործակիցը փոխվելու դեպքում»:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը փոփոխությունների չի ենթարկվել:

Օրենքի «Անցումային դրույթներ» վերտառությամբ 9-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի անդամին, դատավորին, դատախազին, հատուկ քննչական ծառայության ծառայողին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը նշանակված կենսաթոշակները, սույն օրենքի 9-րդ հոդվածով նշանակված կենսաթոշակները համարվում են սույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն նշանակված կենսաթոշակներ և հաշվարկվում են սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով՝ հաշվի առնելով հիմնական կենսաթոշակի չափը, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով անձի զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված գործակիցը և մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը:

Եթե հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է նախկին (սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված) չափից, ապա կենսա-

թոշակը վճարվում է նախկին (սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված) չափով»:

Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասը ենթարկվել է փոփոխությունների ՀՀ Ազգային ժողովի կողմից 01.12.2014թ. ընդունված՝ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-198-Ն և 04.03.2015թ. ընդունված՝ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-14-Ն ՀՀ օրենքներով:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

դիմողը կենսաթոշակի վերահաշվարկի կատարման խնդրանքով միաժամանակ դիմել է ՀՀ գլխավոր դատախազին և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին: Ի պատասխան՝ հայտնվել է, որ «Պետական պաշտոն զբաղեցրած անձանց սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով նշանակված կենսաթոշակի չափի վերահաշվարկ նախատեսված չէ, և կենսաթոշակը պետք է վերահաշվարկվի «Պետական պաշտոն զբաղեցրած անձանց սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության՝ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» 28.08.2014 թվականի թիվ 895-Ն որոշմամբ հաստատված կարգով:

Դիմողի հայցն ընդդեմ ՀՀ դատախազության՝ 2014 թվականի հուլիսի 1-ից սկսած կենսաթոշակի վերահաշվարկ կատարելուն և չվճարված գումարները միանվագ վճարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, մերժվել է ՀՀ վարչական դատարանի 09.06.2015 թվականի վճռով, դիմողի վերաքննիչ բողոքը մերժվել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 29.12.2015 թվականի որոշմամբ, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանը 24.02.2016թ. որոշում է կայացրել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին: Ընդ որում, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ «... նախկինում նշանակված կենսաթոշակի հաշվարկման համար ելակետային է համարվում հիմնական կենսաթոշակի չափը, անձի զբաղեցրած վերջին պաշտոնի համար օրենքով սահմանված գործակիցը, մասնագիտական ստաժի արժեքը և ՀՀ գլխավոր դատախազի կամ Հայցվորի պաշտոնակցի՝ ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազի պաշտոնային դրույքաչափերի բարձրանալը չի կարող հիմք հանդիսանալ նախկինում նշանակված կենսաթոշակի վերահաշվարկման համար»:

3. Դիմողը գտնում է, որ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասն այնքանով, որքանով դատախազներին նշանակված կենսաթոշակի վերահաշվարկման համար հիմք չի համարում պաշտոնային դրույքաչափերի բարձրանալը, հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 10-րդ, 60-րդ և 83-րդ հոդվածներին:

Անդրադառնալով «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասին՝ դիմողը գտնում է, որ նշված մասում ամրագրված՝ «... հաշվի առնելով հիմնական կենսաթոշակի չափը, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով անձի զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված գործակիցը և մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը» դրույթը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված բովանդակությամբ հանդերձ, հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 10-րդ, 60-րդ, 73-րդ, 78-րդ, 80-րդ և 83-րդ հոդվածներին:

Վկայակոչելով սեփականության իրավունքի օրինական ակնկալիքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներ և ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումներ, որոնցով, ըստ դիմողի, սոցիալական ապահովությանը վերաբերող իրավունքները ներկայացվում են որպես սեփականության իրավունքի դրսևորումներից մեկը, իր դիրքորոշումները դիմողը հիմնավորում է նրանով, որ վիճարկվող դրույթները հանգեցնում են անձի սոցիալական ապահովության իրավունքի այնպիսի սահմանափակման, որը չունի օրյեկտիվ և ողջամիտ հիմնավորում:

Մասնավորապես, ըստ դիմողի, եթե «Դատախազության մասին» ՀՀ օրենքով, «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով, «Ոստիկանությունում ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքով, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով դատախազի կենսաթոշակը վերահաշվարկվում էր դատախազի պաշտոնային դրույքաչափը փոփոխվելու դեպքում՝ նոր պաշտոնային դրույքաչափի բարձրացմանը համամասնորեն, ապա «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո սահմանափակվեց պաշտոնաթող դատախազների կենսաթոշակի վերահաշվարկման իրավունքը:

Ըստ դիմողի՝ դատախազի գործունեության անկախության ապահովումը ենթադրում է ոչ միայն նրան պատշաճ վարձատրության տրամադրումը, այլև նրա հետագա սոցիալական երաշխիքների օրենսդրական ձևակերպումը և կիրառումը, ինչը ոչ միայն արտոնություն է, այլ նաև



սոցիալական երաշխիք: Սակայն գործող իրավակարգավորումը նվազեցնում է դատախազի սոցիալական պաշտպանության երաշխիքները:

Դիմողը գտնում է, որ նոր իրավակարգավորման պայմաններում օրենսդրական նշված սահմանափակումը համաչափ չէ հետապնդվող նպատակին, չի ապահովում անձի սոցիալական իրավունքները, ավելին, ունենալով հետադարձ ուժ սոցիալական ապահովության ոլորտում՝ հետընթաց է գրանցում՝ վերացնելով արդեն իսկ ձևավորված և իրավակարգավորում ստացած, անձի հիմնարար իրավունքների իրացման գործիք հանդիսացող, անձի կենսաթոշակային իրավունքները երաշխավորող ինստիտուտի գոյությունը, ինչը հակասում է սոցիալական պետության սկզբունքներին:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, պնդում է, որ վիճարկվող դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին:

Անդրադառնալով վիճարկվող դրույթների՝ դատախազների անկախության սկզբունքին հակասելու վերաբերյալ դիմողի փաստարկներին և արձանագրելով, որ դատախազների անկախության ապահովման համար կենսաթոշակի հաշվարկման կոնկրետ միջազգային չափորոշիչներ առկա չեն, պատասխանողն իր դիրքորոշումները կառուցում է ըստ դատավորների անկախության երաշխիքների համապատասխան միջազգային սկզբունքների: Այս կապակցությամբ վկայակոչելով Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվության վերաբերյալ Rec(2010)12 հանձնարարականը, Դատավորների կարգավիճակի մասին եվրոպական խարտիան՝ պատասխանողը եզրահանգում է, որ դատավորի, կոնկրետ դեպքում՝ դատախազի կենսաթոշակի չափը միջազգային չափորոշիչներին համապատասխան պետք է հաշվարկվի իր աշխատանքի ժամանակ իրեն տրամադրված վարձատրությանը համարժեք, իսկ որևէ պահանջ առկա չէ, որ պաշտոնաթող դատավորի, հետևապես՝ դատախազի կենսաթոշակը վերահաշվարկվի ապագայում գործող դատավորների վարձատրության բարձրացման հետ մեկտեղ:

Հետևաբար, ըստ պատասխանողի՝ ոչ թե սահմանափակվել է պաշտոնաթող դատախազների կենսաթոշակի հաշվարկման իրավունքը, այլ փոխվել է կենսաթոշակի վերահաշվարկման բանաձևը, քանզի փոխվել է պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության ամբողջ համակարգը: Այս կապակցությամբ պատասխանողը, արձանագրելով, որ սոցիալական ապահովության իրավունքը չի կարող գերազանցել պետության ֆինանսատնտեսական հնարավորությունները, գտնում է, որ տվյալ դեպքում կարևորվում է այն հանգամանքը, որ կենսաթոշակային համա-

կարգի փոփոխությունների արդյունքում կենսաթոշակի չափը չլինի ավելի ցածր նախկինում ստացած կենսաթոշակից:

Անդրադառնալով վիճարկվող դրույթների՝ իրավական որոշակիության և լեզվատիպ ակնկալիքների հանդեպ հարգանքի սկզբունքներին հակասելու վերաբերյալ դիմողի փաստարկներին և վկայակոչելով իրավական որոշակիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած մի շարք իրավական դիրքորոշումները՝ պատասխանողը գտնում է, որ վիճարկվող դրույթներն ամբողջությամբ համապատասխանում են իրավական որոշակիության և կանխատեսելիության պահանջներին: Լեզվատիպ ակնկալիքների առնչությամբ պատասխանողը, վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, արձանագրում է, որ, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածը վերաբերում է միայն տվյալ պահին գոյություն ունեցող սեփականությանը և չի ներառում գույք ձեռք բերելու իրավունքը: Հետևաբար, ըստ պատասխանողի՝ դիմողը Կոնվենցիայի իմաստով սեփականության իրավունք չի ունեցել հետագայում գործող դատախազների վարձատրության հնարավոր փոփոխությամբ պայմանավորված լրացուցիչ դրամական միջոցների նկատմամբ, իրավաչափ սպասելիք չի կարող ունենալ պետության քաղաքականության, այդ թվում՝ կենսաթոշակի վերահաշվարկման որևէ բանաձևի անփոփոխելիության նկատմամբ:

Անդրադառնալով դիմողի կողմից վկայակոչված՝ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-723 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին՝ պատասխանողը գտնում է, որ Սահմանադրական դատարանի կողմից ՄԴՈ-723 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները վերաբերում են նրան, որ կենսաթոշակառուներն լեզվատիպ ակնկալիքի իրավունք է ձեռք բերում գործող իրավակարգավորմամբ կենսաթոշակի որևէ չափի նկատմամբ, որն այլևս նվազեցման ենթակա չէ հետագա իրավակարգավորումներով: Ըստ պատասխանողի՝ ՀՀ սահմանադրական դատարանի՝ դիտարկվող պահանջն արդեն իսկ ապահովված է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերությամբ:

Անդրադառնալով վիճարկվող դրույթների՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների հետադարձ ուժի մերժման սկզբունքին հակասելու վերաբերյալ դիմողի փաստարկներին և վկայակոչելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի դրույթները՝ պատասխանողը, արձանագրելով, որ օրենսդիրը վիճարկվող դրույթներին հետադարձ ուժ չի հաղորդել, գտնում է, որ վիճարկվող իրավադրույթները բացառապես տարածվում են օրենքի ուժի մեջ մտնե-

լուց հետո ծագած հարաբերությունների վրա, իսկ կենսաթոշակի վերահաշվարկի հետ կապված իրավահարաբերությունները պետության և դիմողի միջև ծագել են օրենքի ընդունումից հետո: Հետևաբար, ըստ դիմողի, սույն գործով անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների հետադարձ ուժի բացառման սկզբունքը վերաբերելի չէ:

5. Դիմումի և դիմումին կից ներկայացված նյութերի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ դիմողն իր իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորում է այն հանգամանքով, որ ինքը մինչև վիճարկվող դրույթների ուժի մեջ մտնելը գործող իրավակարգավորման պայմաններում ձեռք էր բերել իր զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույթաչափերի բարձրանալուն գուզրնթաց կենսաթոշակի չափի վերահաշվարկի օրինական ակնկալիք, սակայն վիճարկվող դրույթներն ուժի մեջ մտնելուց հետո այդ դրույթների հետևանքով խախտվել է իր օրինական ակնկալիքի իրավունքը, քանի որ, ի տարբերություն նախորդ իրավակարգավորման, գործող իրավակարգավորմամբ դատախազի կենսաթոշակի վերահաշվարկի համար հիմք է հանդիսանում ոչ թե դատախազի զբաղեցրած վերջին պաշտոնի համար նախատեսված **պաշտոնային դրույթաչափի փոփոխությունը**, այլ հիմնական կենսաթոշակի չափի, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով անձի զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված գործակցի և մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքի փոփոխությունը:

Դիմողի փաստարկների հաշվառմամբ՝ սույն գործի քննության շրջանակներում Սահմանադրական դատարանը նախ հարկ է համարում անդրադառնալ «կենսաթոշակի վերահաշվարկի իրավունք» և «օրինական սպասելիք»/«լեզիտիմ ակնկալիք» եզրույթների հարաբերակցության հարցին:

Միաժամանակ, սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում Սահմանադրական դատարանը կարևորում է հետևյալ հարցադրումները.

- որքանո՞վ է վիճարկվող դրույթներով սահմանափակվում սեփականության իրավունք ձեռք բերելու նկատմամբ լեզիտիմ ակնկալիքների հիմքով սեփականության իրավունքի պաշտպանության հնարավորությունը,

- որքանո՞վ է վիճարկվող դրույթներով ապահովվում անձի սոցիալական ապահովության իրավունքը,

- որքանո՞վ է վիճարկվող դրույթներով ամրագրված իրավակարգավորումը համապատասխանում ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի սկզբունքին,

- որքանո՞վ են վիճարկվող դրույթները համապատասխանում քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի վերաբերյալ ՀՀ միջազգային իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին,

- արդյո՞ք վիճարկվող դրույթները համապատասխանում են իրավական որոշակիության սահմանադրաիրավական սկզբունքին:

6. Կենսաթոշակի և սոցիալական ապահովության իրավունքի վերաբերյալ դիրքորոշումներ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է, մասնավորապես, իր ՄԴՈ-1142 որոշման մեջ: Նշված որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշել է հետևյալը. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ «կենսաթոշակ» հասկացությունը որևէ ձևով ամրագրված չէ: Սակայն «սոցիալական» եզրույթը դիտարկվում է որպես պետության սոցիալական բնույթի բնութագրիչ /հոդվ.1/, խտրականությունը բացառող հանգամանք /հոդվ. 14.1/, աշխատողի շահի դրսևորում /հոդվ. 32/, սոցիալական ապահովության իրավունքի բնութագրիչ /հոդվ. 37/, պետության հիմնական խնդիրների սահմանները բնորոշող ոլորտ /հոդվ. 48/, կառավարության կողմից իրականացվող քաղաքականության բնագավառ /հոդվ. 89/: Բոլոր դեպքերում էականն այն է, որ իրեն նաև սոցիալական հոչակած պետությունը սահմանադրորեն որդեգրում է մարդկանց սոցիալական կյանքին առնչվող խնդիրների նկատմամբ հստակ դիրքորոշումներ: Դրանց թվում՝ սոցիալական ապահովության իրավունքը ճանաչվել է որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հիմնական իրավունքներից մեկը և Սահմանադրության 3-րդ հոդվածի ուժով պետությունը սահմանափակված է նաև այս իրավունքով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 1966թ. դեկտեմբերի 16-ի միջազգային դաշնագիրը, նաև դրա 9-րդ հոդվածով է միջազգային պարտավորություն ստանձնել ճանաչելու յուրաքանչյուրի սոցիալական ապահովության իրավունքը»:

Սեփականության և սոցիալական ապահովության իրավունքներին սերտորեն առնչվում է սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում առանձնակի կարևորություն ունեցող՝ նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքի իրավունքը: Իր որոշումներում ՀՀ սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել է այս իրավունքին: Ի մասնավորի՝ ՄԴՈ-1238 որոշման շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը նշել է հետևյալը. «Դիմողը, փաստորեն, ձեռք է բերել ... սեփականության իրավունքի օրինական ակնկալիք, ինչի վրա տարածվում է սեփականության իրավունքին համարժեք պաշտպանության

ռեժիմ՝ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքի: Մասնավորապես, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի (տես՝ մասնավորապես, Տրզոն ընդդեմ Խորվաթիայի գործով 2009թ. հունիսի 11-ի վճիռը, կետ 44) գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաև նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը»: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նշված վճիռը վկայակոչված է նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2010թ. հուլիսի 7-ի ՍԴՈ-902 որոշման մեջ: Իսկ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-723, ՍԴՈ-741, ՍԴՈ-881 որոշումներում Սահմանադրական դատարանը փաստել է սեփականության իրավունք ձեռք բերելու նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների հիմքով սեփականության իրավունքի պաշտպանության հնարավորությունը: Ավելին, ՍԴՈ-741 որոշման 8-րդ կետում Սահմանադրական դատարանը նշել է. «Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ Սահմանադրության 31 հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանություն տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք»:

Հաշվի առնելով Սահմանադրական դատարանի՝ վերը նշված իրավական դիրքորոշումները՝ սույն գործի քննության շրջանակներում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սեփականության իրավունքի պաշտպանության իրավունքն անձի մոտ ծագում է երկու պարագայում, երբ.

- անձի սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է,
- անձինք օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք:

Երկրորդ հիմքի համատեքստում Սահմանադրական դատարանը փաստում է, որ սույն սահմանադրաիրավական վեճի լուծման համար հարկ է նկատի ունենալ անձի մոտ վերահաշվարկի իրավունքի ծագման և պաշտոնային դրույքաչափերի բարձրանալն այլևս հաշվի չառնելու պահերը: Նախկին իրավակարգավորումների պարագայում անձի մոտ պաշտոնային դրույքաչափի բարձրացմամբ պայմանավորված վերահաշվարկի լեգիտիմ ակնկալիք կարող էր առաջանալ պաշտոնային դրույքաչափի բարձրացման պահից: Մինչդեռ վեճի առարկա իրավադրույթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կենսաթոշակի նորովի վերահաշվարկի հնարավորությունը սահմանող դրույթը /օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մաս/ և ՀՀ գլխավոր դատախազի կամ դիմողի պաշտոնակցի՝ ՀՀ գլխավոր

դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազի պաշտոնային դրույքաչափերի բարձրանալը նախկինում նշանակված կենսաթոշակի վերահաշվարկման համար հիմք չհամարող դրույթը /օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մաս/ ուժի մեջ են մտել միաժամանակ, միննույն օրենքով: Ավելին, ներկա իրավակարգավորմամբ օրենքն անձի կենսաթոշակի վերահաշվարկի հիմք է համարում հիմնական կենսաթոշակի չափի, մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքի և/կամ գործակցի փոխվելը: Այլ կլիներ իրավիճակը, եթե խնդրո առարկա օրենքով անձի մոտ դատախազի պաշտոնային դրույքաչափի բարձրանալու հիմքով առաջանար կենսաթոշակի վերահաշվարկի իրավունք, այսինքն՝ օրենքի ուժով տվյալ անձն ունենար սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք, որից հետո ընդունվեր այդ իրավունքի իրականացումն արգելող նորմ:

Սեփականության իրավունքի օրինական ակնկալիքի հարցին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների (Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի, 07.05.2002 թվական, Բեյլերն ընդդեմ Իտալիայի, 05.01.2000 թվական)՝ «սեփականություն» հասկացությունը բովանդակում է ոչ միայն ֆիզիկական բարիքների սեփականությունը, այլև սեփականություն կարող են համարվել որոշ գույքային այլ իրավունքներ և շահեր, ինչպես նաև անվիճելի և կատարման ենթակա պահանջի իրավունքը: Եվրոպական դատարանի վճիռների համաձայն՝ «պահանջի իրավունքը ևս կարող է համարվել «սեփականություն» Կոնվենցիայի նշված դրույթի իմաստով, եթե հիմնավորապես հաստատվել է, որ այդ պահանջը ենթակա է կատարման»: Տվյալ դեպքում դատախազի պաշտոնային դրույքաչափի բարձրացմանը գուզընթաց կենսաթոշակի վերահաշվարկի պահանջի իրավունքը Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված անվիճելի և կատարման ենթակա իրավունքը չէ, քանի որ, ինչպես նշվեց, կենսաթոշակի նորովի վերահաշվարկի հնարավորություն սահմանող դրույթը /օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մաս/ և ՀՀ գլխավոր դատախազի կամ դիմողի պաշտոնակցի՝ ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազի պաշտոնային դրույքաչափերի բարձրանալը նախկինում նշանակված կենսաթոշակի վերահաշվարկման համար հիմք չհամարող դրույթը /օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մաս/ ուժի մեջ են մտել միաժամանակ, միննույն օրենքով:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմերը ձևակերպված են բավարար հստակությամբ, համապատասխանում են իրավական որոշակիության և կանխատեսելիության պահանջներին, իսկ անձի՝ նյութական միջոցը ձեռք բերելու

լեզվիտիմ ակնկալիքի իրավունքը վիճարկվող նորմերով որևիցե կերպ չի խախտվել կամ խոչընդոտվել, հետևապես, խոսք չի կարող լինել սեփականության իրավունքի կամ սոցիալական ապահովության իրավունքի սահմանափակման կամ այդ իրավունքների խոչընդոտի մասին:

7. Վիճարկվող իրավադրույթները դիտարկելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի սկզբունքի համատեքստում՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ Սահմանադրության՝ «Օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժը» վերտառությամբ 73-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է. «1. Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ «Իրավական ակտերի գործողությունը ժամանակի ընթացքում» վերտառությամբ 78-րդ հոդվածի 1-3 մասերով, մասնավորապես, սահմանվում է.

«1. Իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ միայն սույն օրենքով և այլ օրենքներով, ինչպես նաև տվյալ իրավական ակտով նախատեսված դեպքերում:

Հետադարձ ուժ չի կարող տրվել իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող, դրանց իրականացման կարգը խստացնող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող կամ պարտականությունների կատարման կարգ սահմանող կամ խստացնող, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ խստացնող, ինչպես նաև նրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող իրավական ակտերին:

2. Իրավախախտման համար սահմանված պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող կամ իրավախախտում կատարած իրավաբանական և ֆիզիկական անձանց դրությունն այլ կերպ բարելավող իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ, եթե օրենքով կամ այդ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

3. Իրավական ակտում կատարված փոփոխությունների կամ լրացումների, բացառությամբ նրա առանձին մասերը վերացված կամ անվավեր կամ չեղյալ ճանաչելու դեպքերի, գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա, եթե սույն օրենքով,

այլ օրենքներով, ինչպես նաև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Մինչև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտի ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա տարածվում են մինչև փոփոխությունները կամ լրացումներն ուժի մեջ մտնելը գործող նորմերը, եթե սույն օրենքով կամ փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Ուժը կորցրած իրավական ակտի գործողությունը տարածվում է մինչև դրա ուժը կորցնելու օրը ծագած հարաբերությունների վրա, եթե սույն օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ»:

Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև առկա իրավակարգավորումները, արտահայտել է մի շարք իրավական դիրքորոշումներ անձի իրավական վիճակի վատթարացման հարցի վերաբերյալ: Սույն գործի քննության շրջանակներում նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Սահմանադրական դատարանը հարկ է համարում պարզել, թե արդյոք ՀՀ Սահմանադրության տեսանկյունից վիճարկվող իրավակարգավորումը հանդիսանում է «անձի իրավական վիճակը վատթարացնող»:

Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանն իր 2012թ. դեկտեմբերի 14-ի ՍԴՈ-1061 որոշման մեջ արձանագրել է. «8. Սահմանադրական դատարանն իր՝ ՍԴՈ-649, ՍԴՈ-723, ՍԴՈ-758, ՍԴՈ-881, ՍԴՈ-1000 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներով բազմիցս, այդ թվում՝ կենսաթոշակային հարաբերությունները կարգավորող նորմերի սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ գործերով, արձանագրել է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքին և այլ իրավական ակտերին հետադարձ ուժ հաղորդելու անթույլատրելիությունը, կարևորելով, որ «... անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքը՝ իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ, կոչված է ապահովելու լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը», և որ անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելքը «... հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա: Նման պարտավորություն է նաև ստանձնել Հայաստանի Հանրապետությունը մի շարք միջազգային պայմանա-



գրերով»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում հաստատված չափանիշների համաձայն՝ «... սոցիալական օրենսդրության, այդ թվում՝ կենսաթոշակների ոլորտում, պետություններն ունեն հայեցողության լայն շրջանակ, որը ելնելով սոցիալական արդարության և տնտեսական բարեկեցության շահերից, կարող է իրավաչափորեն հանգեցնել բնակչությանը վճարվող կենսաթոշակի գումարի կարգավորմանը, հարմարեցմանը և նույնիսկ նվազեցմանը: Այնուամենայնիվ, ցանկացած այսպիսի միջոց պետք է կիրառվի ոչ խտրական ձևով և համապատասխանի համաչափության պահանջներին: Այդ պատճառով, օրենսդրին տրված հայեցողության շրջանակը քաղաքականության ընտրության հարցում պետք է լինի լայն, և նրա կողմից «հանրային շահի» գնահատումը պետք է հարգվի, եթե այն ակնհայտորեն գուրկ չէ ողջամիտ հիմնավորումից» (Carson and Others v. The United Kingdom [GC], cited above, p. 61; Andrejeva v. Latvia [GC], cited above, p. 83; as well as Moskal v. Poland, no. 10373/05, p. 61, 15 September 2009): Մեկ այլ գործով դատարանը կարևորել է, որ. «Չնայած 1-ին Արձանագրության 1-ին հոդվածը չի կարող սահմանափակել պետության ազատությունը սոցիալական ապահովության համակարգի շրջանակներում վճարվող գումարի չափի կամ տեսակի ընտրության հարցում, կարևոր է նաև ստուգել արդյոք դիմումատուի սոցիալական ապահովության համակարգի շրջանակներում գումար ստանալու իրավունքը խախտվել է այնպես, որը հանգեցրել է նրա կենսաթոշակի իրավունքի էության աղավաղմանը» (Stec and Others v. The United Kingdom [GC], no. 65731/01, p. 53, ECHR 2006-VI, Wiczeorek v. Poland, no. 18176/05, p. 57, 8 December 2009):

Ըստ կենսաթոշակային հարաբերությունների իրավակարգավորման բնագավառում ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ «... օրենսդիրն իրավասու է օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանելու կենսաթոշակի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման լիովին նոր համակարգ: Սակայն նման փոփոխությունները չեն կարող վերացնել այն կենսաթոշակները, այդ թվում՝ արտոնյալ կարգով նշանակվող, որոնք ստանալու իրավունքն անձը ձեռք է բերել նախկինում գործող օրենսդրության հիման վրա: Եթե օրենքն արդեն սահմանել է կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները, կենսաթոշակի չափը և վճարման պայմանները, պետության համար ծագում է պարտականություն երաշխավորելու կենսաթոշակի իրավունքի առնչությամբ լեզիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի և իրավական որոշակիության սկզբունքների իրացումը» (ՄԴՈ-723):

Իր ՍԴՈ-881 որոշման մեջ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «... Աշխատավարձը և կենսաթոշակը փոխկապակցված, սակայն տարբեր ինստիտուտներ են, որոնց իրավակարգավորման չափանիշները նույնպես կարող են տարբեր լինել: Դրանով են պայմանավորված նաև կենսաթոշակի նշանակման տարբերակված մոտեցումները տարբեր մասնագիտությունների համար:

Իսկ ինչ վերաբերում է դասային աստիճան ունեցող դատախազների համար՝ դատախազի, դատավորի և դատախազության քննիչի պաշտոնում աշխատած տարիներից էլնելով հավելավճարի սահմանմանը, ապա դա հենց այս պաշտոնների համար նախատեսված սոցիալական անկախության երաշխիք է և որևէ առնչություն չունի Սահմանադրության 14.1-րդ հոդվածի առաջին մասով սահմանված՝ օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի հետ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքը ենթադրում է օրենքի առջև հավասար պատասխանատվության, պատասխանատվության անխուսափելիության և իրավական պաշտպանության հավասար պայմանների ապահովում, և չի առնչվում իրավական տարբեր կարգավիճակ ունեցող սուբյեկտների համար որևէ իրավաչափ նպատակով պայմանավորված նախադրյալներ՝ տվյալ դեպքում սոցիալական անկախության երաշխիքներ նախատեսելուն կամ իրավունքի տվյալ կատեգորիայի սուբյեկտների համար լրացուցիչ պարտականություններ սահմանելուն»:

Սույն գործի քննության շրջանակներում զարգացնելով իր՝ 2008թ. հունվարի 15-ի ՍԴՈ-723 որոշման 8-րդ կետում ամրագրված իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքի տեսանկյունից Սահմանադրական դատարանի վերը նշված որոշման մեջ ամրագրված հինգ պայմաններից չորսը /կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, կենսաթոշակի չափը, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները/ կենսաթոշակային իրավունքի պարտադիր տարբեր են: Ընդ որում, ՍԴՈ-723 որոշման 8-րդ կետում ամրագրված՝ կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանների ներքո Սահմանադրական դատարանը նկատի է ունեցել կենսաթոշակի ձեռքբերման արտոնյալ պայմանները: Ինչ վերաբերում է վերջին տարրին՝ կենսաթոշակի վճարման պայմաններին, ապա այն ֆակուլտատիվ տարր է և կախված է կենսաթոշակի՝ նախկինում սահմանված կամ նշանակված չափից: Այսինքն՝ այդ տարրը կարող է դառնալ պարտադիր տարր միայն այն դեպքում, երբ կենսաթոշակային իրավահարաբերությունների նոր համակարգ սահմանելիս նվազեցվում է նախկինում սահմանված կամ նշանակված կենսաթոշակի չափը:

«Դատախազության մասին» ՀՀ նախկին և գործող օրենքների համեմատական վերլուծության արդյունքներով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործող օրենքի վիճարկվող դրույթը չի վերացնում մինչ այդ գոյություն ունեցող կենսաթոշակի տեսակը, չի սահմանափակում մինչ այդ սահմանված կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, չի նվազեցնում մինչ այդ սահմանված կենսաթոշակի չափը, չի առնչվում արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունքին:

Նոր իրավակարգավորման պայմաններում երաշխավորվում է նախկինում նշանակված կենսաթոշակի չափը: Մասնավորապես, «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի՝ սույն գործով վիճարկվող 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Եթե հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է նախկին (սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված) չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին (սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված) չափով»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթները չեն վերացնում մինչ այդ գոյություն ունեցող կենսաթոշակի տեսակը, չեն սահմանափակում մինչ այդ սահմանված կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, չեն նվազեցնում մինչ այդ սահմանված կենսաթոշակի չափը, չեն առնչվում արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունքին: Հետևաբար՝ վիճարկվող իրավակարգավորումը չի հանդիսանում որպես անձի վիճակը վատթարացնող:

8. Անդրադառնալով այն հարցադրմանը, թե որքանո՞վ են վիճարկվող դրույթները համապատասխանում քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի վերաբերյալ ՀՀ միջազգային իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին, Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն իր՝ «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի վերաբերյալ» թիվ Rec(2000)19 հանձնարարականի 5-րդ կետով սահմանել է, որ. «5. Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ երաշխավորելու, որպեսզի.

...

դ. Դատախազներն ապահովված լինեն աշխատանքի ողջամիտ պայմաններով, ներառյալ՝ իրենց առանցքային դերին համաչափ վարձատրությամբ, պաշտոնավարման և կենսաթոշակի պայմաններով, ինչպես նաև պատշաճ կենսաթոշակային տարիքով, և այս բոլոր պայմանները կարգավորվեն օրենքով»:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ

դատախազների անկախության ապահովման համար կենսաթոշակի հաշվարկման կոնկրետ միջազգային չափորոշիչներ առկա չեն, իսկ օրենքը, տվյալ դեպքում՝ «Դատախազության մասին» և «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքները սահմանել են կենսաթոշակի պայմանները և կենսաթոշակային տարիքը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005թ. խմբագրությամբ) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64, 68 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության /2005թ. խմբագրությամբ/ 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

6 դեկտեմբերի 2016 թվականի  
ՍԴՈ-1326



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՐԻԶՅԱՆ  
ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

13 դեկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ /գրավոր ընթացակարգի շրջանակներում/ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Ս. Պապյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության /2005թ. փոփոխություններով/ 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2015 թվականի դեկտեմբերի 12-ին ստորագրված Փարիզյան համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

21 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵԴԵԿՎԱԿՐ ♦ 3(87)/2017

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան 28.11.2016թ. մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. Փարիզյան համաձայնագիրն (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2015 թվականի դեկտեմբերի 12-ին: Համաձայնագիրը կնքվել է կայուն զարգացման եւ աղքատության վերացմանը միտված ջանքերի համատեքստում կլիմայի փոփոխության սպառնալիքին գլոբալ արձագանքն ամրապնդելու նպատակով: Համաձայնագիրն ուղղված է 1992 թվականի մայիսի 9-ին Նյու Յորքում ընդունված՝ Միավորված ազգերի կազմակերպության՝ «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) նպատակների իրականացմանը:

Հայաստանի Հանրապետության կողմից Համաձայնագիրն ստորագրվել է 2016 թվականի սեպտեմբերի 20-ին Նյու Յորքում՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի կողմից:

2. Համաձայնագիրը՝ խթանելով Կոնվենցիայի դրույթների իրականացումը՝ նպատակ ունի ամրապնդելու գլոբալ արձագանքը կլիմայի փոփոխության սպառնալիքին, ներառյալ գլոբալ միջին ջերմաստիճանի բարձրացումը պահելով նախաարդյունաբերական մակարդակները գերազանցող 2°C-ից բավականին ցածր եւ ջանքեր գործադրելով՝ սահմանափակելու համար ջերմաստիճանի բարձրացումը նախաարդյունաբերական մակարդակից 1.5°C-ով՝ գիտակցելով, որ դա զգալիորեն կկրճատի կլիմայի փոփոխության ռիսկերն ու ազդեցությունները: Ընդ որում, կլիմայի փոփոխության նկատմամբ դիմացկունությունն ու ջերմոցային գազերի արտանետումների ցածր մակարդակի ապահովումը պետք է իրականացվի այնպիսի եղանակով, որ չվտանգվի պարենի արտադրությունը:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

• որպես ազգային մակարդակում սահմանված՝ կլիմայի փոփոխությանը գլոբալ արձագանքման գործողություններ՝ նախաձեռնել եւ գործադրել Համաձայնագրով սահմանված հավակնոտ ջանքերը՝ նպատակ ունենալով իրագործելու Համաձայնագրի 2-րդ հոդվածում սահմանված նպատակը,

• յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ ներկայացնել ազգային մակարդակում սահմանված գործողությունները,

• ըստ ազգային մակարդակում սահմանված ՀՀ գործողությունների՝ մարդածին արտանետումների եւ կլանիչների հաշվառման ժամանակ ապահովել շրջակա միջավայրի ամբողջականությունը, գործողությունների թափանցիկությունը, ճշգրտությունը, ավարտվածությունը, համեմատելիությունն ու հետեւողականությունը եւ կրկնակի հաշվառումից խուսափումը,

• ներկայացնել ջերմոցային գազերի ցածր արտանետումների երկարաժամկետ ռազմավարություն, որը հաշվի է առնում կողմերի ընդհանուր, սակայն տարբերակված պատասխանատվությունը եւ համապատասխան կարողությունները՝ ազգային տարբեր պայմանների լույսի ներքո,

• ըստ անհրաժեշտության՝ միջոցներ ձեռնարկել ջերմոցային գազերի կլանիչներն ու կուտակիչները, ներառյալ՝ անտառները, պահպանելու եւ ընդլայնելու համար,

• համագործակցության եւ օժանդակության սկզբունքների հիման վրա ամրապնդել կլիմայի փոփոխության անբարենպաստ հետեւանքների հետ կապված կորուստների ու վնասների վերաբերյալ փոխըմբռնումը, գործողություններն ու աջակցությունը,

• հաշվի առնելով տեխնոլոգիաների կարելոթությունը Համաձայնագրի շրջանակում հետեւանքների մեղմացման ու հարմարվողականության գործողությունների իրականացման համար եւ ընդունելով տեխնոլոգիաների ներդրման ու տարածման առկա ջանքերը՝ ամրապնդել տեխնոլոգիաների մշակման եւ փոխանցման շուրջ համագործակցությունը,

• ըստ նպատակահարմարության՝ միջոցներ ձեռնարկել կլիմայի փոփոխության վերաբերյալ կրթությունը, ուսուցումը, հանրությանն իրազեկումը, հանրության մասնակցությունը եւ հանրության համար տեղեկությունների հասանելիությունը բարելավելու նպատակով,

• կանոնավոր կերպով տրամադրել Համաձայնագրի 13-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված տեղեկությունները, ինչպես նաեւ, ըստ անհրաժեշտության, տեղեկություններ տրամադրել նաեւ Համաձայնագրի 7-րդ հոդվածի ներքո կլիմայի փոփոխության ազդեցությունների եւ հարմարվողականության վերաբերյալ:

4. Համաձայնագրի դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 13-րդ հոդվածով սահմանված պահանջներին, որոնց համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության /2005թ. փոփոխություններով/ 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. 2015 թվականի դեկտեմբերի 12-ին ստորագրված Փարիզյան համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

13 դեկտեմբերի 2016 թվականի  
ՍԴՈ-1327





**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ԵՎ 2016  
ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՎԱՐԿԱՅԻՆ  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ (ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)» ՆԱՄԱԿ-  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

13 դեկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Հայրապետյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2016 թվականի

հոկտեմբերի 17-ին և 2016 թվականի նոյեմբերի 11-ին ստորագրված՝ «Վարկային համաձայնագրերում փոփոխություններ կատարելու մասին (հատուկ գործառնություններ)» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2016 թվականի դեկտեմբերի 5-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով նամակ-համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Վարկային համաձայնագրերում փոփոխություններ կատարելու մասին (հատուկ գործառնություններ)» նամակ-համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է՝ Ասիական զարգացման բանկի (այսուհետ՝ ԱԶԲ) կողմից 2016 թվականի հոկտեմբերի 17-ին, իսկ Հայաստանի Հանրապետության կողմից 2016 թվականի նոյեմբերի 11-ին:

2. Քննության առարկա Համաձայնագրի կողմերի կողմից ստորագրման նախապատմությունը հանգում է հետևյալին.

ա) 2014 թվականի օգոստոսի 15-ին ԱԶԲ Տնօրենների խորհուրդը հաստատել է, որ պաշտոնապես ավարտվել է Ասիական զարգացման հիմնադրամից (այսուհետ՝ ԱԶՀ) արտոնյալ պայմաններով Հայաստանի Հանրապետությանը վարկային միջոցների տրամադրումը, և որոշումն ուժի մեջ է մտնելու 2017 թվականի հունվարի 1-ից (1-ին կետ),

բ) նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության՝ մեկ շնչին ընկնող համախառն ազգային եկամուտը 2010-2014թթ. Գերազանցել է ԱԶԲ-ի կողմից սահմանված շեմը, ուստի 2006 թվականի հունվարի 1-ով թվագրված՝ ԱԶԲ Հատուկ գործառնությունների վարկային կանոնակարգի 3.05-րդ բաժնի դրույթների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը՝ որպես Վարկառու, պետք է ԱԶՀ-ից ստացված վարկային միջոցները մարի արագացված ժամանակացույցով,

գ) 2014 թվականի օգոստոսի 15-ի որոշման արդյունքում 2016 թվականի փետրվարի 2-ին ԱԶԲ Տնօրենների խորհուրդը լիազորել է ԱԶԲ-ին՝ կատարելու Վարկառուին տրված կամ նրա կողմից երաշխավորված՝ ԱԶՀ

չմարված վարկերի մարման պայմանների վերանայում՝

կամ 100%-ով ավելացնելով այսուհետև վճարման ենթակա յուրաքանչյուր մարման գումարը մինչև այդ վարկի մայր գումարի ամբողջական մարումը,

կամ էլ ԱԶՀ վարկից առհանված և չմարված մայր գումարի նկատմամբ գանձելով տարեկան տոկոսադրույքով տոկոսավճար այնպիսի եղանակով և այն չափով, որպեսզի ապահովվի նումինալ և փաստացի արժեքների նույն տարբերությունը, որը կստացվեր մարման գումարի ավելացման հետևանքով (1-ին կետ),

դ) Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2016 թվականի ապրիլի 22-ին ԱԶԲ-ին հասցեագրված նամակով նախընտրել է չմարված վարկերի մարման հիշատակված տարբերակներից երկրորդը՝ տոկոսադրույքների ճշգրտման տարբերակը, և արդյունքում՝ ԱԶԲ-ն համաձայնել է փոփոխել Հայաստանի Հանրապետությանը տրված կամ նրա կողմից երաշխավորված՝ ԱԶՀ չմարված յուրաքանչյուր վարկի նկատմամբ կիրառելի տոկոսադրույքը:

3. Համաձայնագրով փոփոխություններ են կատարվում Առդիրում նշված թվով 11 վարկային համաձայնագրերում: Այսպես՝

Ա) 2007թ. հոկտեմբերի 31-ին և 2007թ. նոյեմբերի 15-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Գյուղական ճանապարհահատվածի ծրագիր (հատուկ գործառնություններ)» վարկային համաձայնագրի (ՄԴՈ-724, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2008 թվականի փետրվարի 5-ին՝ Ազգային ժողովի Ն-038-4 որոշմամբ) 2.02-րդ բաժինը նախատեսվում է շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Վարկառուն ԱԶԲ-ին վճարում է տոկոսավճար տարեկան 2.93% տոկոսադրույքով՝ ժամանակ առ ժամանակ Վարկային հաշվից առհանված և չմարված Վարկի գումարի դիմաց»,

Բ) 2007 թվականի դեկտեմբերի 18-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2363-ARM (SF) վարկային համաձայնագրի (ջրամատակարարման և ջրահեռացման սեկտորի ծրագիր) (ՄԴՈ-738, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2008 թվականի ապրիլի 10-ին՝ Ազգային ժողովի Ն-071-4 որոշմամբ) 2.02-րդ բաժինը նախատեսվում է շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Վարկառուն ԱԶԲ-ին վճարում է տոկոսավճար տարեկան 2.93% տոկոսադրույքով՝ ժամանակ առ ժամանակ Վարկային հաշվից առհանված և չմարված Վարկի գումարի դիմաց»,

Գ) 2008 թվականի նոյեմբերի 18-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև վարկա-

յին պայմանագրի (գյուղական ճանապարհների հատվածի ծրագիր (լրացուցիչ) (ՄԴՈ-785, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2008 թվականի դեկտեմբերի 26-ի՝ Ազգային ժողովի Ն-119-4 որոշմամբ) 2.02-րդ բաժինը նախատեսվում է շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Վարկառուն ԱԶԲ-ին վճարում է տոկոսավճար տարեկան 2.93% տոկոսադրույքով՝ ժամանակ առ ժամանակ Վարկային հաշվից առհանված և չմարված Վարկի գումարի դիմաց»,

Դ) 2009 թվականի հուլիսի 15-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Ճգնաժամի հաղթահարման աջակցության ծրագիր (հատուկ գործառնություններ)» վարկային համաձայնագրի (ՄԴՈ-820, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2009 թվականի սեպտեմբերի 16-ին՝ Ազգային ժողովի Ն-159-4 որոշմամբ) 2.02-րդ բաժինը նախատեսվում է շարադրել հետևյալ բովանդակությամբ. «ա) Վարկային հաշվից ժամանակ առ ժամանակ առհանված և չմարված Ա Վարկի առնչությամբ՝ Վարկառուն ԱԶԲ-ին վճարում է տոկոսավճար տարեկան 2.85% տոկոսադրույքով: Բ) Վարկային հաշվից ժամանակ առ ժամանակ առհանված և չմարված Բ Վարկի առնչությամբ՝ Վարկառուն ԱԶԲ-ին վճարում է տոկոսավճար տարեկան 2.96% տոկոսադրույքով»,

Ե) 2013 թվականի հունվարի 25-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Կանանց ձեռներեցության աջակցման հատվածի զարգացման ծրագիր (հատուկ գործառնություններ)» վարկային համաձայնագրի (ՄԴՈ-1095, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2013 թվականի հունիսի 20-ին՝ Ազգային ժողովի ԱԺՈ-073-Ն որոշմամբ) 2.02-րդ բաժինը նախատեսվում է շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Վարկառուն ԱԶԲ-ին վճարում է տոկոսավճար տարեկան 2.18% տոկոսադրույքով՝ ժամանակ առ ժամանակ Վարկային հաշվից առհանված և չմարված Վարկի գումարի դիմաց»,

Զ) 2014 թվականի հոկտեմբերի 3-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագիր» վարկային համաձայնագրի (հատուկ գործառնություններ) (ՄԴՈ-1183, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2014 թվականի դեկտեմբերի 16-ին՝ Ազգային ժողովի ԱԺՈ-134-Ն որոշմամբ) 2.02-րդ բաժինը նախատեսվում է շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Վարկառուն ԱԶԲ-ին վճարում է տոկոսավճար տարեկան 2.90% տոկոսադրույքով՝ ժամանակ առ ժամանակ Վարկային հաշվից առհանված և չմարված Վարկի գումարի դիմաց»,

Է) 2009 թվականի հոկտեմբերի 12-ին ստորագրված՝ Հայաստանի

Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև վարկային համաձայնագրի (հատուկ գործողություններ) Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-ԾՐԱԳԻԸ 1) (ՄԴՈ-861, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2010 թվականի փետրվարի 2-ին՝ Ազգային ժողովի ԱԺՈ-187-Ն որոշմամբ) 2.02-րդ բաժինը նախատեսվում է շարադրել հետևյալ բովանդակությամբ. «ա) Վարկառուն ԱԶԲ-ին արտոնյալ ժամանակահատվածի ընթացքում և դրանից հետո վճարում է տոկոսավճար տարեկան 2.69% տոկոսադրույքով՝ ժամանակ առ ժամանակ Վարկային հաշվից առհանված և չմարված Վարկի գումարի դիմաց: Վարկառուն ընդունում է և համաձայնում, որ Վարկային կանոնակարգի 3.05-րդ բաժնի համաձայն՝ Վարկի վերոնշյալ տոկոսավճարը ենթակա է վերանայման այն դեպքում, երբ Վարկի որևէ գումար չեղարկվել է»,

Ը) 2011 թվականի մայիսի 19-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր - ծրագիր 1 (հատուկ գործողություններ)» վարկային համաձայնագրի (ՄԴՈ-978, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2011 թվականի հունիսի 23-ին՝ Ազգային ժողովի ԱԺՈ-282-Ն որոշմամբ) 2.02-րդ բաժինը նախատեսվում է շարադրել հետևյալ բովանդակությամբ. «ա) Վարկառուն ԱԶԲ-ին արտոնյալ ժամանակահատվածի ընթացքում և դրանից հետո վճարում է տոկոսավճար տարեկան 2.51% տոկոսադրույքով՝ ժամանակ առ ժամանակ Վարկային հաշվից առհանված և չմարված Վարկի գումարի դիմաց: Վարկառուն ընդունում է և համաձայնում, որ Վարկային կանոնակարգի 3.05-րդ բաժնի համաձայն՝ Վարկի վերոնշյալ տոկոսավճարը ենթակա է վերանայման այն դեպքում, երբ Վարկի որևէ գումար չեղարկվել է»,

Թ) 2012 թվականի մայիսի 3-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Ջրամատակարարման և ջրահեռացման սեկտորի ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրի (ՄԴՈ-1032, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2012 թվականի հունիսի 22-ին՝ Ազգային ժողովի ԱԺՈ-018-ն որոշմամբ) 2.02-րդ բաժինը նախատեսվում է շարադրել հետևյալ բովանդակությամբ. «ա) Վարկառուն ԱԶԲ-ին արտոնյալ ժամանակահատվածի ընթացքում և դրանից հետո վճարում է տոկոսավճար տարեկան 2.31% տոկոսադրույքով՝ ժամանակ առ ժամանակ Վարկային հաշվից առհանված և չմարված Վարկի գումարի դիմաց: Վարկառուն ընդունում է և համաձայնում, որ Վարկային կանոնակարգի 3.05-րդ բաժնի համաձայն՝ Վարկի վերոնշյալ տոկոսավճարը ենթակա է վերանայման այն դեպքում, երբ Վարկի որևէ գումար չեղարկվել է»,

Ժ) 2014 թվականի սեպտեմբերի 5-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերականգնման ծրագիր» վարկային համաձայնագրի (հատուկ գործառնություններ) (ՄԴՈ-1182, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2014 թվականի դեկտեմբերի 17-ին՝ Ազգային ժողովի ԱԺՈ-135-Ն որոշմամբ) 2.02-րդ բաժինը նախատեսվում է շարադրել հետևյալ բովանդակությամբ. «ա) Վարկառուն ԱԶԲ-ին արտոնյալ ժամանակահատվածի ընթացքում և դրանից հետո վճարում է տոկոսավճար տարեկան 3.14% տոկոսադրույքով՝ ժամանակ առ ժամանակ Վարկային հաշվից առհանված և չմարված Վարկի գումարի դիմաց: Վարկառուն ընդունում է և համաձայնում, որ Վարկային կանոնակարգի 3.05-րդ բաժնի համաձայն՝ Վարկի վերոնշյալ տոկոսավճարը ենթակա է վերանայման այն դեպքում, երբ Վարկի որևէ գումար չեղարկվել է»,

Ի) 2015 թվականի հոկտեմբերի 19-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Մեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր-արդյունքների վրա հիմնված փոխառություն» (հատուկ գործառնություններ) վարկային համաձայնագրի (ՄԴՈ-1245, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2015 թվականի դեկտեմբերի 18-ին՝ Ազգային ժողովի ԱԺՈ-193-Ն որոշմամբ) 2.02-րդ բաժինը նախատեսվում է շարադրել հետևյալ բովանդակությամբ. «ա) Վարկառուն ԱԶԲ-ին արտոնյալ ժամանակահատվածի ընթացքում և դրանից հետո վճարում է տոկոսավճար տարեկան 2.91% տոկոսադրույքով՝ ժամանակ առ ժամանակ Վարկային հաշվից առհանված և չմարված Վարկի գումարի դիմաց: Վարկառուն ընդունում է և համաձայնում, որ Վարկային կանոնակարգի 3.05-րդ բաժնի համաձայն՝ Վարկի վերոնշյալ տոկոսավճարը ենթակա է վերանայման այն դեպքում, երբ Վարկի որևէ գումար չեղարկվել է»:

4. Հանաձայնագրի 3-րդ կետը սահմանում է, որ՝ բացառությամբ վարկային համաձայնագրերի՝ սույն Համաձայնագրի առդիրում սահմանված և նախկինում համաձայնեցված փոփոխությունների՝ Վարկային համաձայնագրերը մնում են անփոփոխ:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի կողմից 2016 թվականի դեկտեմբերի 12-ին ներկայացված 04/5-2/27290-16 թվակիթ բացատրության բովանդակությունից հետևում է, որ՝ եթե ներկայիս մարման ժամանակացույցի համաձայն Հայաստանի Հանրապետությունն իր պարտքի մարումը պետք է ավարտեր 2044 թվականին, ապա.

1) վարկի մայր գումարի կրկնապատիկի չափով՝ մինչև վարկի ամբողջական մարման դեպքում, պարտքի մարումը ավարտվելու է 2032 թվականին՝ տոկոսավճարի գծով տնտեսումը կազմելով շուրջ 40.1 մլն ԱՄՆ դոլար,

2) յուրաքանչյուր վարկի համար սահմանված տոկոսադրույքի փոփոխման դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունը 2016-2044 թվականների համար պետք է վճարի լրացուցիչ տոկոսավճար շուրջ 61,5 մլն ԱՄՆ դոլարի չափով:

Միաժամանակ, նշյալի կապակցությամբ Սահմանադրական դատարանն ընդունում է ի գիտություն Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի հետևյալ բացատրությունը, ըստ որի՝ «ՀՀ կողմից ընտրվել է երկրորդ տարբերակը, քանի որ առաջին տարբերակի ընտրության դեպքում առաջ կգան պարտքի վերաֆինանսավորման հետ կապված մի շարք խնդիրներ, մասնավորապես՝

1. Առաջիկա տարիներին ՀՀ կառավարության պարտքի մարման գծով վճարումները շեշտակիորեն աճելու են. ՀՀ կառավարության արտաքին պարտքի մայր գումարի մարումները սփռված են մինչև 2054 թվականը և 2020 թվականից մինչև 2030 թվականը մարումների տարեկան ծավալներն արդեն իսկ գերազանցում են 250 մլն ԱՄՆ դոլարը: Հիշյալ ժամանակահատվածում առկա են նաև մարումների պիկային տարիներ՝ 2020թ. և 2025թ., որոնք պայմանավորված են արտարժույթային պետական պարտատոմսերի մարումներով: Մինչդեռ I տարբերակի ընտրության դեպքում՝ 2017-2029թթ. մայր գումարների մարումների տարեկան բեռը կավելանա միջին հաշվով մոտ 13 մլն ԱՄՆ դոլարով, այդ թվում 2020-2025թթ. համար 17 մլն ԱՄՆ դոլարով:

2. Քանի որ տարիներ շարունակ Հայաստանը հանդիսանում է պարտք ներգրավող երկիր և այդ միտումն առաջիկա տարիներին կունենա շարունակական բնույթ, I տարբերակի ընտրության դեպքում ՀՀ կառավարությունը հարկադրված կլինի վերաֆինանսավորել նաև արագացված ժամանակացույցով մարվող պարտքը, որի վերաֆինանսավորման այլընտրանքային լավագույն աղբյուր կարող են հանդիսանալ Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) ու ԱԶԲ-ի Սովորական կապիտալ ռեսուրսների միջոցներից (ԱԶԲ/OCR) տրամադրվող վարկերը: Հաշվի առնելով, որ առ 31.12.2015թ. ձևավորված ԱԶՀ-ի վարկերի գծով պարտքի մինչև մարումը մնացած միջին ժամկետը կազմում է 12.8 տարի, ապա հիշյալ վարկատուների կողմից վերը նշված ժամկետայնությամբ տրամադրվող վարկերի տոկոսադրույքների ֆիքսման (17.02.2016թ. դրությամբ) պարագայում ՎԶՄԲ-ի և ԱԶԲ-ի Սովորական կապիտալ ռեսուրսների միջոցներից վարկերի տոկոսադրույքները կկազմեն համապատաս-

խանաբար՝ մոտ 3,1% և 2,4%, մինչդեռ II տարբերակի ընտրության դեպքում՝ առ 31.12.2015թ. գործող ԱԶԲ-ի վարկերի միջին տոկոսադրույքը կկազմի մոտ 2,8%:

ԱԶԲ-ի վարկերի վճարման ժամանակացույցի վերանայման երկրորդ տարբերակի ընտրության դեպքում ՀՀ կառավարության արտաքին պարտքի սպասարկման ծախսերն էականորեն չեն շեղվի գործող վճարման ժամանակացույցով նախատեսված ծախսերից և չեն ծանրացնի ՀՀ կառավարության պարտքի սպասարկման բեռը պետական բյուջեի վրա առաջիկա տարիների ընթացքում»:

6. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես, նախընտրելով 2006 թվականի հունվարի 1-ով թվագրված՝ ԱԶԲ Հատուկ գործառնությունների վարկային կանոնակարգի 3.05 կետով նախատեսված երկրորդ, այն է՝ տոկոսադրույքների ճշգրտման տարբերակը, համաձայնում է փոփոխություններ կատարել ԱԶԲ-ի հետ կնքված և Համաձայնագրի Առդիրում թվարկված թվով 11 վարկային համաձայնագրերից յուրաքանչյուրում, պարտավորվելով վարկային տոկոսները վճարել ԱԶԲ-ին նոր՝ փոփոխված տոկոսադրույքներով, ընդ որում, ԱԶԲ-ի Հատուկ գործառնությունների կանոնակարգի 3.05 կետի համաձայն.

ա) եթե Ասիական զարգացման բանկն իր տնօրենների խորհրդի որոշմամբ սահմանում է, որ (I)Վարկառուի՝ հինգ տարի անընդմեջ մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքը գերազանցում է ԱԶԲ-ի կողմից մեկ շնչի հաշվով ԱԶԲ հատուկ ֆոնդերի միջոցների առնչությամբ սահմանված օպերատիվ շեմը և (II)Վարկառուն հասել է ԱԶԲ-ի սովորական կապիտալ միջոցներից վարկ վերցնելու ունակությանը, ԱԶԲ-ն տեղեկացնելով Վարկառուին՝ կարող է փոփոխել վճարման պայմանները՝ 100%-ով ավելարցնելով այնուհետև վճարման ենթակա յուրաքանչյուր մարման գումարը՝ մինչև Վարկի մայր գումարի ամբողջական մարումը:

Այնուամենայնիվ, Վարկառուի խնդրանքով, ԱԶԲ-ն կարող է մարման գումարը նման կերպ ավելացնելու փոխարեն ժամանակ առ ժամանակ ԱԶԲ վարկից առհանված և չմարված մայր գումարի նկատմամբ գանձել Վարկառուի և ԱԶԲ-ի մինչև համաձայնեցված տարեկան տոկոսադրույքով տոկոսավճար այնպիսի եղանակով և այն չափով, որպեսզի ապահովվի գումարի այն չափը, որը կստացվեր մարման գումարի վերոնշյալ ավելացման հետևանքով,

բ) եթե ա) պարագրաֆի համաձայն վարկավորման պայմանների փոփոխությունից հետո ցանկացած պահի ԱԶԲ-ի տնօրենների խորհրդի կայացված որոշմամբ սահմանվի, որ Վարկառուի տնտեսական պայման-



ներն էականորեն վատթարացել են, ԱԶԲ-ն կարող է Վարկատուի խնդրանքով վերականգնել վարկավորման նախնական պայմանները Վարկի մայր գումարի մնացած չափի նկատմամբ:

Քննության առարկա Համաձայնագրով նաև նախատեսվում է, որ Առդիրի 7, 8, 9, 10 և 11-րդ կետերով Վարկատուն ընդունում և համաձայնում է, որ Վարկային կանոնակարգի 3.05-րդ բաժնի համաձայն՝ Վարկի նոր հաշվարկված տոկոսավճարը ենթակա է վերանայման այն դեպքում, երբ Վարկի որևէ գումար չեղարկվել է:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ԱԶԲ Տնօրենների խորհրդի 2014 թվականի օգոստոսի 15-ի որոշման ընդունումից հետո ընկած ժամանակահատվածում, երբ արդեն իսկ հաստատվել էր, որ պաշտոնապես ավարտվել է արտոնյալ պայմաններով Հայաստանի Հանրապետությանը վարկային միջոցների տրամադրումը, այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման Բանկի միջև ստորագրվել են թվով 3 վարկային համաձայնագրեր (3.10.2014թ., 5.09.2014թ. և 19.10.2015թ.), որոնցով նախատեսված վարկի տոկոսադրույքների չափերը ևս ենթակա են ավելացման: Սույն համաձայնագրի վավերացման նպատակահարմարության հարցը քննարկելիս այս հանգամանքը պետք է ուշադրության արժանանա:

8. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող պարտավորությունները վերաբերելի են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և կառավարության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված լիազորություններին:

Սահմանադրական դատարանն ինչպես իր որոշումներում, այնպես էլ իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում բազմիցս անդրադարձել է վարկային միջոցներով ֆինանսավորվող ծրագրային միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին: Սույն Համաձայնագրի առնչությամբ կարևորվում է այն հանգամանքը, թե ինչպես է կառավարության կողմից հիմնավորվում տարբերակների ընտրության նպատակահարմարությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, հաշվի առնելով

սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**.

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2016 թվականի հոկտեմբերի 17-ին և 2016 թվականի նոյեմբերի 11-ին ստորագրված՝ «Վարկային համաձայնագրերում փոփոխություններ կատարելու մասին (հատուկ գործառնություններ)» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

13 դեկտեմբերի 2016 թվականի  
ՍԴՈ-1328



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
«ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԾՐԱԳԻՐ. ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ (ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)»  
ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

13 դեկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլում-  
յանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի  
(զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնա-  
կան ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների  
նախարարի տեղակալ Ա. Հայրապետյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության  
(2005թ. փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդ-  
վածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի  
Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2016 թվականի  
նոյեմբերի 11-ին ստորագրված՝ «Ենթակառուցվածքների կայունության  
աջակցության ծրագիր. երկրորդ փուլ (ընթացիկ գործառնություններ)»

3(87)/2017

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦

վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2016թ. դեկտեմբերի 5-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վարկային համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագիր. երկրորդ փուլ (ընթացիկ գործառնություններ)» վարկային համաձայնագիրն (այսուհետ՝ Վարկային համաձայնագիր) ստորագրվել է 2016 թվականի նոյեմբերի 11-ին՝ ճանապարհային, ջրամատակարարման և էլեկտրաէներգիայի ոլորտների (Ծրագիր) կառավարման ու կայունության բարելավման նպատակով:

2. Վարկային համաձայնագիրն ունի չորս Առդիր՝ Առդիր 1. «Ծրագրի նկարագրություն», Առդիր 2. «Վարկի մարման ժամանակացույց», Առդիր 3. «Վարկի միջոցների առհանումը», Առդիր 4. «Ծրագրի իրականացում և այլ հարցեր», իսկ 3-րդ Առդիրն իր հերթին ունի 2 Հավելված՝ 3-րդ Առդիրի 1-ին Հավելված. «Արգելված ծախսերի ցանկ» և 3-րդ Առդիրի 2-րդ Հավելված. «Երկրորդ տրանշի հատկացման համար պահանջվող՝ քաղաքականությանն առնչվող գործողություններ»:

3. Ծրագրի հիմնական նպատակն է ճանապարհային, ջրամատակարարման և էլեկտրաէներգիայի ոլորտների կառավարման ու կայունության բարելավումը, որի շրջանակն ընդգրկում է՝ հանրային ֆինանսների կառավարման և հանրային ծառայությունների կարգավորման բարելավումը, ճանապարհային ոլորտում ֆինանսավորման ավելացումը և գործառնությունների բարելավումը, ջրային ոլորտում ֆինանսավորման ավելացումը և գործառնությունների բարելավումը և էլեկտրաէներգիայի ոլորտի եկամուտների ձևավորման և մրցակցության մակարդակի բարձրացումը:

4. Ըստ Վարկային համաձայնագրի՝ Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) սովորական կապիտալ միջոցներից համաձայնում է Հայաստանի

Հանրապետությանը տրամադրել 90,000,000 (իննսուն միլիոն) ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ (այսուհետ՝ Վարկ), և այդ գումարը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել արժույթի փոխարկման միջոցով՝ Վարկային համաձայնագրի 2.06-րդ բաժնի դրույթներին համապատասխան: Ծրագիրը կավարտվի մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ը:

Վարկն ունի մայր գումարի մարման 12 տարի ժամկետ և արտոնյալ ժամանակահատված՝ մինչև 2019թ. նոյեմբերի 15-ը: Վարկի փակման ամսաթիվը 2017թ. դեկտեմբերի 31-ն է կամ այլ ամսաթիվ, որի մասին ժամանակ առ ժամանակ կարող են համաձայնության գալ Հայաստանի Հանրապետությունը և Ասիական զարգացման բանկը:

5. Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, ի թիվս այլնի, ստանձնում է, հետևյալ պարտավորությունները.

- կիսամյակային կտրվածքով՝ ամեն տարվա նոյեմբերի 15-ին և մայիսի 15-ին Ասիական զարգացման բանկին վճարել տոկոսներ Վարկի մայր գումարի առհանձնված և դեռևս չմարված գումարի դիմաց, որը հավասար է LIBOR և 0.60%, ինչպես սահմանված է Վարկային կանոնակարգի 3.02-րդ բաժնում, հանած 0.10%-ի չափով վարկը, ինչպես նախատեսված է Վարկային կանոնակարգի 3.03-րդ բաժնում (հոդված II, բաժիններ 2.02 ա) և 2.03),

- ապահովել, որպեսզի Վարկի միջոցներն օգտագործվեն Ծրագրի ծախսերը ֆինանսավորելու նպատակով՝ Վարկային համաձայնագրում սահմանված դրույթներին համապատասխան (հոդված III, բաժին 3.01),

- Ծրագիրն իրականացնելիս կատարել Վարկային համաձայնագրի 4-րդ Առդիրի մեջ սահմանված բոլոր պարտավորությունները կամ ապահովել դրանց կատարումը (հոդված IV, բաժին 4.01բ),

- ի լրումն Վարկային միջոցների՝ ըստ անհրաժեշտության, պատշաճ ժամկետում և Ասիական զարգացման բանկի համար ընդունելի պայմաններով հասանելի դարձնել Ծրագրի իրականացման և Ծրագրի ենթակառուցվածքների շահագործման և պահպանման համար պահանջվող ֆինանսական միջոցները, հողը և այլ միջոցները (հոդված IV, բաժին 4.02),

- ապահովել, որպեսզի ՀՀ գերատեսչությունների և մարմինների՝ Ծրագրի իրականացմանն առնչվող գործունեությունն իրականացվի և համակարգվի վստահելի վարչական քաղաքականությանը և ընթացակարգերին համապատասխան (հոդված IV, բաժին 4.03),

- որպես Վարկային կանոնակարգի 7.04-րդ բաժնում նշված հաշվետվությունների և տեղեկատվության մի մաս՝ Ասիական զարգացման բանկին տրամադրել կամ ապահովել, որպեսզի Ասիական զարգացման բանկին տրամադրվեն Ծրագրի իրականացմանն առնչվող բոլոր այն հաշվետվություններն ու տեղեկությունը, որոնք Ասիական զարգացման

բանկը կարող է ողջամիտ կերպով պահանջել, ներառյալ Քաղաքականության վերաբերյալ գրության մեջ նշված թիրախների կատարողականը և սահմանված գործողությունների իրականացումը, ինչպես նաև առանց սահմանափակելու վերը նշվածը կամ Վարկային կանոնակարգի 7.04-րդ բաժնի ընդհանրությունը՝ Ասիական զարգացման բանկին տրամադրել կամ ապահովել, որպեսզի Ասիական զարգացման բանկին տրամադրվեն եռամսյակային հաշվետվություններ Ծրագրի իրականացման, Քաղաքականության վերաբերյալ գրության մեջ նշված թիրախների կատարողականի և սահմանված գործողությունների իրականացման վերաբերյալ (հոդված IV, բաժին 4.04),

- Ծրագրի իրականացման ընթացքում կատարել եռամսյակային պարբերական ուսումնասիրություններ՝ Ծրագրի շրջանակը, իրականացման կարգավորումները, առաջընթացը և նպատակների իրականացումը գնահատելու նպատակով, և ի հավելումն պարբերական ուսումնասիրությունների՝ 2017թ. առաջին եռամսյակում իրականացնել միջնաժամկետ ուսումնասիրություն, ինչպես նաև ապահովել, որպեսզի Ասիական զարգացման բանկը հնարավորություն ունենա մասնակցելու նման՝ պարբերական և միջնաժամկետ ուսումնասիրություններին, և, որպես յուրաքանչյուր նման ուսումնասիրության մաս, Ասիական զարգացման բանկին գրավոր հաշվետվություն տրամադրել Ծրագրում ներառված բարեփոխումների առաջընթացի և իրականացման վերաբերյալ (Առդիր 4, կետ 7):

6. Վարկային համաձայնագրի նկատմամբ կիրառելի են դառնում 2001թ. հուլիսի 1-ով թվագրված Ասիական զարգացման բանկի սովորական կապիտալ միջոցներից տրամադրվող, LIBOR-ի վրա հիմնված վարկերի նկատմամբ կիրառվող՝ Սովորական գործառնությունների վարկային կանոնակարգի («Վարկային կանոնակարգ») բոլոր դրույթները՝ Վարկային համաձայնագրում սահմանված փոփոխություններով:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2016 թվականի նոյեմբերի 11-ին ստորագրված՝ «Ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագիր. երկրորդ փուլ (ընթացիկ գործառնություններ)» վարկային համաձայնագրում ամրագրված պար-

տավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

13 դեկտեմբերի 2016 թվականի  
ՍԴՈ-1329



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԿԱՐԻՆԵ ԱՍԻՐԲԵԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԴԱՏԱԿԱՆ  
ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 18-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

13 դեկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով.

Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի  
(զեկուցող),

Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ.  
Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի  
շրջանակներում)

դիմողի ներկայացուցիչ Ա. Մուքիսայանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի  
պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի  
իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի եւ նույն վարչության  
իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 100-  
րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմա-  
նադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,  
դռնբաց նիստում քննեց «Կարինե Ամիրբեկյանի դիմումի հիման վրա՝

3(87)/2017

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴՏԵԿՎԱԳԻՐ



«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Կ. Ամիրբեկյանի՝ 2016 թվականի օգոստոսի 8-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաեւ հետազոտելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ օրենք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հունիսի 3-ին եւ ուժի մեջ մտել 1999 թվականի հունվարի 1-ին:

Օրենքի՝ «Կատարողական թերթ տալը» վերտառությամբ 18-րդ հոդվածը գործող խմբագրությամբ, սահմանում է.

«1. Կատարողական թերթը տալիս է ակտն ընդունած առաջին ատյանի դատարանը՝ պահանջատիրոջ կամ դրա համար հատուկ լիազորված նրաներկայացուցչի դիմումի հիման վրա:

2. Կատարողական թերթը տրվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ դիմումն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում, իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ անհապաղ:

3. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա պետության դատարանի վճիռների եւ որոշումների կատարման վերաբերյալ կատարողական թերթը տալիս է Հայաստանի Հանրապետության այն դատարանը, որը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով որոշում է կայացրել տվյալ օտար երկրյա պետության դատարանի վճիռը եւ որոշումը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու վերաբերյալ:

Եթե կատարման ենթակա է օտար երկրյա պետության դատարանի դատավճիռը՝ վնասի հատուցման կամ այլ գույքային բռնազանձման մասով, ապա կատարողական թերթը տալիս է Հայաստանի Հանրապետու-

թյան քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով այդ դատավճիռը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու վերաբերյալ որոշում կայացրած Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանը:

4. Եթե Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ (մասնակցությամբ) գործող միջազգային դատարանի հիմնադրման վերաբերյալ միջազգային պայմանագրով կամ դրա կանոնակարգերով նախատեսված է այդ դատարանի դատավճիռների կամ որոշումների կատարում, ապա դրանց վերաբերյալ կատարողական թերթը տալիս է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը՝ պահանջատիրոջ կամ նրա լիազոր ներկայացուցչի դիմումը ներկայացնելուց հետո անհապաղ, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ միջազգային դատարանը, իր կանոնակարգերով սահմանված կարգով, տվել է համապատասխան կատարողական թերթ, որը պարտադիր է Հայաստանի Հանրապետության համար»:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004 թվականի փետրվարի 4-ին ընդունված, ՀՀ Նախագահի կողմից 2004 թվականի փետրվարի 25-ին ստորագրված եւ 2004 թվականի մարտի 11-ին ուժի մեջ մտած՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-32-Ն ՀՀ օրենքով օրենքի վիճարկվող 18-րդ հոդվածը լրացվել է 3-4-րդ մասերով:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված, ՀՀ Նախագահի կողմից 2007 թվականի դեկտեմբերի 20-ին ստորագրված եւ 2008 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ մտած՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-279-Ն ՀՀ օրենքով օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը «ընդունած» բառից հետո լրացվել է «առաջին ատյանի» բառերով:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին:

2016 թվականի մայիսի 23-ին Կ. Ամիրբեկյանը, ներկայացուցչի միջոցով, դիմել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան ԼԴ/1360/02/14 քաղաքացիական գործով նույն դատարանի կողմից իր վերաբերյալ 2015 թվականի հունիսի 25-ին կայացված վճռի՝ օրինական ուժի մեջ թողնված 3.3 կետի մասով իրեն կատարողական թերթ տալու համար: Դատարանը 2016 թվականի մայիսի 26-ի որոշմամբ դիմումը մերժել է՝ նշելով, որ որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից: Այդ

որոշման դեմ նույն օրը դիմողի ներկայացուցչի կողմից վերաքննիչ բողոք է բերվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2016 թվականի հունիսի 21-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձրել է՝ պատճառաբանելով, որ կատարողական թերթ տրամադրելու դիմումը մերժելու մասին որոշումը բողոքարկման ենթակա չէ: Վերաքննիչ դատարանն իր որոշման եզրափակիչ մասում նշել է, որ այն կարող է երկշաբաթյա ժամկետում բողոքարկվել վճռաբեկության կարգով, սակայն այդ որոշման դեմ վճռաբեկ բողոք չի բերվել:

3. Դիմողը գտնում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը հակասում է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով ամրագրված **դատական պաշտպանության իրավունքին** այնքանով, որքանով սահմանելով դատարանի կողմից կատարողական թերթ տալու կարգավորումները՝ չի նախատեսում կատարողական թերթ տրամադրելու դիմումը մերժելու մասին որոշումը բողոքարկելու հնարավորություն:

Դիմողի կարծիքով՝ կատարողական թերթ տրամադրելու դիմումը մերժելու մասին որոշումը հանդիսանում է գործն ըստ էության լուծող դատական ակտ, իսկ ընդհանուր կանոնի համաձայն՝ դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերը ենթակա են վերանայման վերաքննության կարգով:

Դիմողը պնդում է, որ վիճարկվող հոդվածը, չսահմանելով կատարողական թերթ տրամադրելու դիմումը մերժելու մասին դատարանի որոշումը բողոքարկելու ընթացակարգ, սահմանափակել է իր դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը՝ «...հնարավորություն չտալով իրացնել դատարանի՝ գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտը բողոքարկելու սահմանադրական իրավունքը՝ դրանով անձին զրկելով դատարանի ոչ արդարացի դատական ակտը բողոքարկելու իրավունքից եւ ստորադաս դատարանի հնարավոր ոչ արդարացի դատական ակտով իր խախտված կամ սահմանափակված իրավունքի վերականգնման հնարավորությունից»:

Դիմողը կարծում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում առկա է **իրավական բաց**, քանի որ այն կատարողական թերթ տրամադրելու կամ կատարողական թերթ տրամադրելը մերժելու վերաբերյալ կարգավորումներ չի սահմանում, իսկ դատարանի կողմից կիրառված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետը եւ 5-րդ մասի 4-րդ կետը եւս չեն սահմանում այնպիսի իրավադրույթներ, որոնք դատարանին իրավունք վերապահեն

օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա կատարողական թերթի տրամադրումը մերժել:

4. Պատասխանողը, վերլուծելով կատարողական թերթի նշանակությունը բացահայտող օրենսդրական կանոնակարգումները, եզրահանգել է, որ կատարողական թերթը հարկադիր ծառայության կատարման համար հանդիսանում է պաշտոնական ծանուցում առ այն, որ դատական ակտն օրինական ուժի մեջ է, իսկ պարտապանը կամովին չի կատարում դատական ակտի պահանջները: Հետեւաբար, կատարողական թերթ տալը **տեխնիկական գործընթաց** է, իսկ կողմերի միջեւ իրավական վեճն արդեն իսկ լուծված է լինում դատական ակտով: Այդ իսկ պատճառով օրենսդիրը չի սահմանել կատարողական թերթի մերժման հիմքեր եւ ընթացակարգ. դատարանը յուրաքանչյուր դեպքում պարզելով դատական ակտի օրինական ուժի մեջ լինելու հանգամանքը՝ իրավունքի ուժով պարտավոր է տալ կատարողական թերթ: Պատասխանողն արձանագրում է, որ դատարանի նման տեխնիկական բնույթի պարտականությունները, որպես կանոն, ենթակա չեն բողոքարկման: Եթե նույնիսկ դատարանը կամայականորեն չտրամադրի կատարողական թերթ՝ անձը զրկված չէ կրկին անգամ դատարան դիմելու հնարավորությունից, դատարանի հնարավոր կամայականության դեպքում կարող է կատարողական թերթ ստանալ նաեւ նոտարին դիմելու միջոցով, որպիսի հնարավորությունը ՀՀ քաղաքացիներին ընձեռվել է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2016թ. հոկտեմբերի 19-ի ՀՕ-180-Ն օրենքով:

Պատասխանողի կարծիքով՝ դիմողի պնդումն իր սահմանադրական իրավունքի խախտման վերաբերյալ՝ հիմնագուրկ է, քանի որ այս պարագայում խոսք չի կարող գնալ դատարանի որոշման արդարացի կամ ոչ արդարացի լինելու մասին, քանզի դատարանը միայն ստուգում է ակտի օրինական ուժի մեջ մտնելու հանգամանքը՝ առանց ապացույցների հետազոտման, իսկ քաղաքացին դատական ակտի օրինական ուժի մեջ մտած լինելու մասին պաշտոնական փաստաթուղթ կարող է ստանալ նաեւ այլ մարմնից՝ նոտարից:

Պատասխանողի համոզմամբ՝ դիմողը, ձեւականորեն վիճարկելով սույն գործով սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթները, բարձրացնում է տվյալ դրույթների կիրառման իրավաչափության հարց: Պատասխանողը պնդում է, որ վիճարկվող իրավադրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը եւ միջնորդում է կարճել գործի վարույթը:

5. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կարող է դիտարկվել որպես անձի դատական պաշտպանության իրավունքի խախտում, քանի որ դիմողին զրկում է իր խախտված իրավունքների վերականգնման, իրեն հասանելիք դրամական միջոցներն ստանալու հնարավորությունից, որոնք ստանալու համար նա **իրավաչափ ակնկալիքներ** է ունեցել:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը որպես հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմք սահմանում է կատարողական թերթը եւ կատարողական մակագրության թերթը, ինչպես նաեւ «Վարչարարության նիւնուքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումը:

Նույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին կետը, ի թիվս այլնի, նախատեսում է կատարողական թերթի տրամադրումը դատարանի վճիռների, դատավճիռների, որոշումների եւ դատարանի արձակած վճարման կարգադրությունների հիման վրա: **ՀՀ օրենսդրությամբ կատարողական թերթի տրամադրումը մերժելու որեւէ հիմք նախատեսված չէ, եւ կատարողական թերթ ստանալու պահանջատիրոջ իրավունքը կապված է բացառապես դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու հանգամանքի հետ, ինչը նշանակում է, որ նրա դիմումի հիման վրա կատարողական թերթի տրամադրումը դատարանի հայեցողական լիազորություն չէ, եւ նշված ժամկետից հետո՝ այսինքն, դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո, դատարանն իրավունքի ուժով պարտավոր է պահանջատիրոջը կատարողական թերթ տրամադրել:**

Այսպիսով, կատարողական վարույթ հարուցելու կամ հարկադիր կատարման ընթացակարգ սկսելու եւ համապատասխան հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը հանդիսանում է **կատարողական թերթը**: Հարկադիր կատարողն օրենքով սահմանված հարկադիր կատարման միջոցները կարող է կիրառել բացառապես կատարողական թերթի հիման վրա կատարողական վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելուց հետո:

Հետեւաբար, **քանի դեռ քաղաքացուն կատարողական թերթ չի տրամադրվել՝ հարկադիր կատարման փուլն սկսված համարվել չի կարող, եւ դրան առնչվող խնդիրներն անհրաժեշտ է դիտարկել ոչ թե հարկադիր կատարման, այլ քաղաքացիական դատավարության շրջանակներում:**

Մահմանադրական դատարանը գտնում է, որ դատական պրակտիկան պետք է առաջնորդվի սույն կետում արտահայտված իրավական դիրքո-

րոշումներով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) ցանկացած դատարանի վճռի կամ դատավճռի կատարումը դիտում է որպես 6-րդ հոդվածով երաշխավորված դատաքննության անբաժանելի մաս (**Burdov v. Russia, application no. 59498/00, 07/05/2002**).

ՄԻԵԴ-ն անդրադառնալով դատական ակտերի կատարման հարցին՝ գտել է, որ «ցանկացած դատարանի կայացրած վճռի կատարումը պետք է 6-րդ հոդվածի իմաստով դիտվի որպես «դատական քննության» անբաժանելի մաս»: Եթե դատական ակտը մնում է թղթի վրա, ապա խախտվում է արդարդատաքննության իրավունքը (**Hornsby v. Greece, application no. 18357/91, ECHR 1997, §40**):

6. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ինչպես կատարողական թերթ տրամադրելու դիմումը մերժելու մասին որոշման, այնպես էլ քաղաքացիական դատավարության շրջանակներում վճռի հարկադիր կատարման հարցերին առնչվող՝ առաջին ատյանի դատարանի այլ դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ **հատուկ իրավակարգավորումներ** նախատեսված չեն: Միեւնույն ժամանակ հարկ է նաեւ նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում բացակայում է կատարողական թերթ տրամադրելու դիմումը մերժելու որոշման բողոքարկումն արգելող նորմ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտերի բողոքարկումը» վերտառությամբ 1401-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը կարող են բողոքարկվել միայն վերաքննության կարգով:

2. Ընդհանուր իրավասության դատարանի բողոքն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել միայն սույն օրենսգրքով եւ այլ օրենքներով նախատեսված դեպքերում»:

Օրենսգրքի հիշյալ հոդվածից բխում է, որ օրենսդիրը քաղաքացիական դատավարության շրջանակներում նախատեսել է առաջին ատյանի դատարանի **գործն ըստ էության լուծող բոլոր դատական ակտերի վերաքննիչ բողոքարկման հնարավորություն**, իսկ միջանկյալ դատական ակտերի համար օրենսդիրը սահմանել է **անմիջական բողոքարկման** հնարավորություն միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով կամ այլ օրենքներով նախատեսված դեպքերում, ինչը չի բացառում միջանկյալ դատական ակտերի **հետաձգված բողոքարկումը**:



րություն, եւ չի բարձրացնում վիճարկվող հողվածով ամրագրված իրավակարգավորումների ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ այլ հարցեր:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը վկայում է այն մասին, որորոշակի ակտերի առանձին տեսակների բողոքարկմանն առնչվող իրավակարգավորումներ առկա են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում: Այսպէս, օրինակ, ըստ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի՝ բողոքարկման ենթակա են դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, կատարման եղանակի եւ կարգի փոփոխման որոշումները /22-րդ հոդված/, կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետի վերականգնման վերաբերյալ որոշումը /24-րդ հոդված/, վճռի կատարման շրջադարձի հարցը լուծելու վերաբերյալ որոշումը/27-րդ հոդված/, կատարողական թերթի պարզաբանման որոշումը /35-րդ հոդված/: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ բողոքարկման ենթակա հիշյալ որոշումները դատական ակտի հարկադիր կատարման հարցն ըստ էության չեն լուծում եւ վերաբերելի են արդէն տրված կատարողական թերթի առկայության պայմաններում կատարողական վարույթի կազմակերպման միջանկյալ հարցերին:

8.Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009 թվականի ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներն երկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայնորի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68 հոդվածի 7-րդ մասում նշված որեւէ հատկանիշով: Անհատական դիմումին ներկայացված այս պահանջը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել եւ ինչ անմիջական պատճառահետեւանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի եւ իր իրավունքների խախտման փաստի միջեւ»:

Քննության առարկա դիմումին կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ թիվ ԼԴ/1360/02/14 քաղաքացիական գործի շրջանակներում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված



Իրավակարգավորումներին հղում է կատարվել միայն ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ կատարողական թերթ տրամադրելու դիմումը մերժելու մասին 26.05.2016 թվականի որոշման մեջ, մինչդեռ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին 21.06.2016 թվականի որոշման կայացման համար հիմք է հանդիսացել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով ամրագրված իրավակարգավորումը, այն է՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման, ինչպես նաև ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի այն դիրքորոշումը, ըստ որի՝ կատարողական թերթ տրամադրելու դիմումը մերժելու մասին որոշման «...բողոքարկման ենթակա լինելու մասին որևէ նորմ նախատեսված չէ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում, այլ օրենքներով եւ /կամ/ այլ իրավական ակտերով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի՝ «Կատարողական թերթ տալը» վերտառությամբ 18-րդ հոդվածով ամրագրված դրույթներից հետևում է, որ հիշյալ հոդվածի կարգավորման առարկան կատարողական թերթ տալու հետ կապված հարցերն են, եւ այդ հոդվածի խնդիրը չէ կարգավորել կատարողական թերթ տրամադրելու դիմումը բավարարելու կամ մերժելու մասին դատարանի որոշումը բողոքարկելու հետ կապված հարաբերությունները:

ԼԴ/1360/02/14 քաղաքացիական գործի շրջանակներում ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի կողմից «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի՝ դիմողի նկատմամբ կիրառման եւ դիմողի համար առաջացած բացասական հետեւանքների, այն է՝ վերաքննության կարգով կատարողական թերթ տրամադրելու դիմումը մերժելու մասին դատարանի որոշումը բողոքարկելու հնարավորության բացակայության միջեւ առկա չէ անմիջական պատճառահետեւանքային կապ:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ դիմողը չի դիմել վճռաբեկ դատարան եւ չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը՝ գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են նույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր: Վերջին հոդվածի 6-րդ կետին համապատասխան այդպիսի հիմքերից են նույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված դեպքերը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության /2005թ. փոփոխություններով/ 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետի, 60-րդ հոդվածի 1-ին կետի, ինչպես նաև 69-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**.

1. «Կարինե Ամիրբեկյանի դիմումի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

13 դեկտեմբերի 2016թվականի  
ՍԴՈ-1330



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԹԻՎ CAM 1007 01 D  
ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան 16

դեկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Հայրապետյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի նոյեմբերի 30ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև թիվ CAM 1007 01 D վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համա-

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 3(87)/2017  
51

պատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2016 թվականի դեկտեմբերի 8-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունը, հետազոտելով վարկային համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Քննության առարկա վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2016թ. նոյեմբերի 30-ին Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ Վարկատու) և Զարգացման ֆրանսիական գործակալության (այսուհետ՝ Վարկատու) միջև:

Համաձայնագրի նպատակն է ֆինանսավորել Վարկատուի բյուջեն և աջակցել Համաձայնագրի 2-րդ հավելվածում նկարագրված ծրագրի իրականացմանը (այսուհետ՝ Ծրագիր):

Համաձայնագրի բաղկացուցիչ մասն են կազմում. 1Ա Հավելվածը՝ «Սահմանումներ», 1Բ Հավելվածը՝ «Շինարարություն», Հավելված 2ը՝ «Ծրագրի նկարագրություն», Հավելված 3ը՝ «Ինդիկատիվ քաղաքականության աղյուսակ», «Հավելված 4ը՝ «Նախապայմաններ», 5Ա հավելվածը՝ «Մասհանման հայտի ձև», 5Բ Հավելվածը՝ «Մասհանման և դրույքաչափի հաստատման ձև», Հավելված 6ը՝ «Տեղեկություններ, որոնք կարող են հրապարակվել Ֆրանսիայի կառավարության և վարկատուի կայքերում» վերտառություններով:

2. Համաձայնագրով Վարկատուն Վարկատուին է տրամադրում քառասուն միլիոն եվրո գումարի չափով վարկ (այսուհետ՝ Վարկ): Վարկը տրամադրվելու է Վարկատուին մեկ առհանումով, որի վերջնաժամկետը 2017 թվականի հունիսի 30-ն է: Ֆինանսավորվող ծրագրի տեխնիկական ավարտի վերջնաժամկետը 2017 թվականի դեկտեմբերի 31-ն է:

Համաձայնագրի 6-րդ կետի համաձայն՝ Վարկի հիմնական գումարի առաջին մասնաբաժինը ենթակա է վճարման 15.06.2023թ., իսկ վերջինը՝ 15.12.2036թ.:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները.

- մինչև ստորագրման օրը Վարկատուին ներկայացնել Համաձայնագրի 4-րդ հավելվածի I մասով սահմանված բոլոր փաստաթղթերը (2.4 «ա»),
- Համաձայնագրի 4-րդ հավելվածի II մասի համաձայն նշանակել առհանման հայտ ներկայացնելու և առհանման հաստատման մասին նամակ ստանալու համար իրավասու անձանց (3.3),

- վճարել առհանման նկատմամբ կուտակված տոկոսները (4.2),
- վճարել Համաձայնագրի 4.3 կետով (Ժամկետանց վճարման և պարտավորությունների չկատարման տոկոս) նախատեսված ցանկացած չվճարված տոկոս Վարկատուի պահանջից անմիջապես հետո կամ չվճարված գումարի վճարման համար սահմանված օրվան հաջորդող յուրաքանչյուր վճարման օրը,
  - ստորագրման օրվանից չորս (4) ամիսը լրանալուց հետո առաջին օրվանից Վարկատուին վճարել տարեկան զրո ամբողջ հինգ տասնորդական (0.5%) տոկոս պարտավճար (5.1),
  - նախքան առաջին առհանումը և ստորագրման օրվանից ոչ ուշ, քան չորս (4) ամիս հետո Վարկատուին վճարել գնահատման վճար զրո ամբողջ հինգ տասնորդական (0.5%) տոկոսի չափով, որը հաշվարկվում է Վարկի առավելագույն գումարի նկատմամբ, ինչպես նաև այն բոլոր ծախսերի և ծախսերի գումարը (ներառյալ իրավաբանական վճարը), որոնք Վարկատուն կատարել է Համաձայնագրի վերաբերյալ բանակցությունների, դրա նախապատրաստման, ստորագրման առնչությամբ (5.2),
  - արտոնյալ ժամանակահատվածը լրանալուց հետո Վարկատուին վերադարձնել Վարկի մայր գումարը քսանութ (28) կիսամյակային մասնաբաժիններով, որոնք ենթակա են վճարման յուրաքանչյուր վճարման օր (6.),
  - ստորագրման օրվանից յոթանասուներկու ամիս ժամանակահատվածում վաղաժամ մարում իրականացնելիս վճարել Համաձայնագրի 8.3 կետի (Վաղաժամ մարման տույժ) համաձայն վճարման ենթակա՝ վաղաժամ մարման տույժերի ամբողջ գումարը (7.1),
  - անմիջապես կատարել Վարկի ամբողջական կամ մասնակի վաղաժամ մարում՝ ստանալով Վարկատուից ծանուցում՝ Համաձայնագրի 7.2 կետով նախատեսված դեպքերի վերաբերյալ,
  - չվերափոխառել Վարկի ամբողջ կամ մի մասը, որը վաղաժամ մարել է կամ չեղարկել (7.5),
  - Վարկառուի կողմից Համաձայնագրում էական փոփոխությունների հանգեցնող փոփոխություն պահանջելու դեպքում Վարկատուին փոխհատուցել այդ պահանջին պատասխանելու, այն գնահատելու, բանակցելու կամ բավարարելու հետ կապված բոլոր ողջամիտ ծախսերը (ներառյալ իրավաբանական վճարները) (8.1.1),
  - փոխհատուցել Համաձայնագրով նախատեսված՝ Վարկատուի որևէ իրավունքի իրականացման կամ պահպանման հետ կապված բոլոր ծախսերը և ծախսերը (ներառյալ իրավաբանական վճարները) (8.1.2),
  - ուղղակիորեն վճարել կամ, կիրառելիության դեպքում, փոխհատուցել Վարկատուի բոլոր ծախսերը և ծախսերը՝ կապված Փարիզից դրամական միջոցները Վարկառուին կամ նրա անունով Վարկատուի հետ համաձայ-

նեցված այլ վայր փոխանցելու հետ, ինչպես նաև Վարկի շրջանակում վճարման ենթակա բոլոր գումարների վճարման հետ կապված փոխանցման վճարներն ու ծախսերը (8.1.3),

- Համաձայնագրի 7.3 կետի դրույթների և/կամ 7.4 կետի (ա), (բ) և (գ) պարբերությունների համաձայն ամբողջ Վարկի կամ դրա մի մասի չեղարկման դեպքում վճարել չեղարկման տույժ՝ չեղարկված գումարի 2.5%-ի (երկու ամբողջ հինգ տասնորդական) չափով (8.2),

- Համաձայնագրի 7.1 կետին և/կամ 7.2 կետին համապատասխան՝ Վարկի ամբողջական կամ մասնակի վաղաժամ մարման հետևանքով Վարկատուի կրած ցանկացած կորստի առնչությամբ Վարկատուին վճարել տույժ՝ Համաձայնագրի 8.3 կետի համաձայն,

- ուղղակիորեն վճարել կամ, կիրառելիության դեպքում՝ Վարկատուի կողմից տրված կանխավճարի դեպքում փոխհատուցել վճարման ենթակա բոլոր դրոշմատուրքերի, գրանցման և նմանատիպ այլ հարկերի հետ կապված ծախսերը՝ վարկային համաձայնագրի կամ դրանում հնարավոր փոփոխությունների մասով (8.4.1),

- Համաձայնագրի 8.2 կետի համաձայն Վարկատուին վճարվող բոլոր վճարումների դեպքում չկիրառել Պահվող հարկ, փոխհատուցել Վարկատուին Վարկառուի հաշվի հետ կապված բոլոր ծախսերը և (կամ) հարկերը, որոնք վճարել է Վարկատուն (կիրառելիության դեպքում) բացառությամբ Ֆրանսիայում վճարման ենթակա որևէ հարկի (8.4.2),

- Վարկատուին վճարել պատշաճ կերպով հիմնավորված բոլոր լրացուցիչ ծախսերը, որոնք կատարվել են Վարկատուի կողմից նոր օրենքի կամ կանոնակարգի ուժի մեջ մտնելու կամ գործող օրենքի կամ կանոնակարգի փոփոխության, գործող օրենքի կամ կանոնակարգի մեկնաբանման կամ կիրարկման փոփոխության հետևանքով կամ ստորագրման օրվանից հետո ընդունված օրենքի կամ կանոնակարգի հետ համապատասխանությունն ապահովելու հետևանքով (8.5),

- Համաձայնագրի 8.6 կետի համաձայն փոխհատուցել փոխարկումից ծագող կամ դրա հետևանքով առաջացած ցանկացած ծախսի, կորստի կամ պատասխանատվության հետևանքով պայմանավորված գումարը, եթե Համաձայնագրի կամ որևէ հրամանի, վճռի կամ որոշման առնչությամբ Վարկառուի կողմից վճարման ենթակա գումարը վճարման արժույթից պետք է փոխարկվի այլ արժույթի՝ Վարկառուի դեմ հայց կամ ապացույց ներկայացնելու նպատակով կամ դատական, արբիտրաժային ընթացակարգերի առնչությամբ որևէ հրաման, որոշում կամ վճիռ ստանալու կամ դրանք կիրարկելու համար,

- ապահովել համապատասխանություն բոլոր առումներով՝ այն օրենքների ու կարգավորումների հետ, որոնք տարածվում են իր և/կամ Ծրագրի վրա, մասնավորապես, շրջակա միջավայրի պաշտպանության, անվտան-

գույքան ու աշխատանքի վերաբերյալ կիրառելի օրենսդրությունը, և Վարկային համաձայնագրով նախատեսված իր բոլոր պարտավորությունների հետ (10.1),

- Համաձայնագրի 10.5 կետի համաձայն Վարկատուին փոխհատուցել ցանկացած ծախս կապված Վարկատուի կամ նրա ներկայացուցիչների կողմից տարեկան մեկ անգամ իրականացվող ստուգման հետ,

- ապահովել, որ Ծրագրի իրականացմանը մասնակցող որևէ անձ, խումբ կամ կազմակերպություն ներառված չլինի Ֆինանսական պատժամիջոցների ենթարկվածների որևէ ցանկում (այդ թվում՝ հատկապես ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարը), և չֆինանսավորի Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպական միության կամ Ֆրանսիայի կողմից արգելանքի ենթարկված մատակարարումները կամ հատվածները (10.7),

- Վարկատուին տրամադրել Համաձայնագրի 11 հոդվածով նախատեսված տեղեկությունները:

4. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից վարկատուին հասցեագրված՝ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներպետական ընթացակարգերն ավարտելու մասին գրավոր ծանուցումն ստանալու օրը:

5. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քննության առարկա Համաձայնագրին վերաբերելի են «Հայաստանի Հանրապետության կառավարության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև 2016 թվականի հունվարի 26-ին ստորագրված վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանի 2016թ. ապրիլի 29-ի ՍԴՈ-1269 որոշման մեջ արտահայտված բոլոր այն իրավական դիրքորոշումները, որոնք առնչվում են տվյալ կազմակերպության կողմից վարկի տրամադրման և հնարավոր վեճերի լուծման իրավապայմաններին: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում շեշտադրել, որ.

քննության առարկա Համաձայնագրի 16.2-րդ կետով ստանձնված պարտավորությունը կարող է մեկնաբանվել միայն որպես Համաձայնագրի կատարումից բխող մասնավոր իրավական հարաբերություններով պայմանավորված դատավարական անձեռնմխելիությունից հրաժարում («Պետությունների և նրանց գույքի դատավարական անձեռնմխելիության մասին» ՄԱԿ-ի 2004 թվականի դեկտեմբերի 2-ի կոնվենցիայի 10-րդ հոդվածի իմաստով, ինչն արտացոլում է այս հարցում ձևավորված միջազգային սովորույթային իրավունքը),

Համաձայնագրի 9.7, 14.2, 14.5, 16.1, 16.2 և 16.3-րդ կետերով ստանձն-

ված պարտավորությունները կարող են Հայաստանի Հանրապետության համար կոնկրետ իրավական հետևանքներ առաջացնել միայն այնքանով, որքանով դրանք կճանաչվեն որպես միջազգային մասնավոր իրավունքի սուբյեկտի հետ կնքված համաձայնագրով ստանձնված պարտավորություններ:

6. ՀՀ սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի կողմից 12.12.2016թ. թիվ 04/5.2/27630-16 գրությամբ ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված այն դիրքորոշումը, որ տվյալ Համաձայնագրով ստանձնված պարտավորություններով կարգավորվում են իրենց բնույթով որպես մասնավոր իրավական առևտրային հարաբերություններ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները գնահատելի են որպես ՀՀ Սահմանադրությամբ պետության առջև դրված սահմանադրաիրավական խնդիրների համահունչ և իրավակիրառ պրակտիկայում կիրառելի են սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Ելնելով գործի քննության արդյունքներից, հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2016 թվականի նոյեմբերի 30ին ստորագրված` Հայաստանի Հանրապետության կառավարության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև թիվ CAM 1007 01 D վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

16 դեկտեմբերի 2016 թվականի  
ՄԴՈ-1331





**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՋԱՐԳԱՑՄԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՎԱՐԿ» ՎԱՐԿԱՅԻՆ  
ՀԱՄԱՋԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

20 դեկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Հայրապետյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի դեկտեմբերի 9-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Զարգացման

քաղաքականության չորրորդ վարկ» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 13-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վարկային համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Զարգացման քաղաքականության չորրորդ վարկ» վարկային համաձայնագիրն (Վարկային համաձայնագիր) ստորագրվել է 2016 թվականի դեկտեմբերի 9-ին:

Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Զարգացման քաղաքականության առաջին վարկ» վարկային համաձայնագիրն ստորագրվել է 2013 թվականի նոյեմբերի 8-ին, որով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել է երեսունմեկ միլիոն (31.000.000) ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ: Հիշյալ վարկային համաձայնագիրը, ելնելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2013 թվականի նոյեմբերի 19-ի ՍԴՈ-1126 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումից, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2013 թվականի դեկտեմբերի 4-ի ԱԺՈ-096-Ն որոշմամբ:

Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Զարգացման քաղաքականության երկրորդ վարկ» վարկային համաձայնագիրն ստորագրվել է 2014 թվականի նոյեմբերի 19-ին, որով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել է յոթանասունհինգ միլիոն (75.000.000) ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ: Հիշյալ վարկային համաձայնագիրը, ելնելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 2-ի ՍԴՈ-1177 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումից, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2014 թվականի դեկտեմբերի 16-ի ԱԺՈ-133-Ն որոշմամբ:

Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Զարգացման քաղաքականության երրորդ վարկ» վարկային համաձայնագիրն ստորագրվել է 2015 թվականի դեկ-

տեմբերի 10-ին, որով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել է հիսուն միլիոն (50.000.000) ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ: Հիշյալ վարկային համաձայնագիրը, ելնելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 15-ի ՍԴՈ-1248 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումից, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2015 թվականի դեկտեմբերի 18-ի ԱԺՈ-192-Ն որոշմամբ:

2. Սույն գործով քննության առարկա Վարկային համաձայնագրով Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (Բանկ) Հայաստանի Հանրապետությանը (Վարկառու) տրամադրում է հիսուն միլիոն (50.000.000) ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ (Վարկ), Վարկային համաձայնագրով սահմանված կարգով և ժամկետներում, Վարկային համաձայնագրով նախատեսված ծրագրին օժանդակելու համար ֆինանսավորում տրամադրելու նպատակով:

3. Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

ա) Վարկային համաձայնագրով սահմանված չափով և կարգով վճարել սկզբնավճար և պարտավճար.

բ) Վարկային համաձայնագրով սահմանված չափով և կարգով վճարել տոկոսագումար՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին.

գ) վարկային միջոցները չօգտագործել Բացառված ծախսերի ֆինանսավորման համար: Եթե Բանկը որևէ պահի որոշում է, որ Վարկի որևէ գումար օգտագործվել է Բացառված ծախսի դիմաց վճարում կատարելու համար, ապա Վարկառուն պետք է Բանկից ծանուցում ստանալուց անմիջապես հետո Բանկին վերադարձնի այդ վճարմանը համարժեք գումար: Նման պահանջով Բանկին վերադարձված գումարները չեղարկվում են.

դ) Վարկի մայր գումարը վճարել սկսած 2031 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2041 թվականի մայիսի 15-ը ներառյալ՝ 4.76 տոկոսի չափով, իսկ 2041 թվականի նոյեմբերի 15-ին՝ 4.8 տոկոսի չափով:

4. Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրության համաձայն՝ Վարկն ուղղված է բյուջետային աջակցությանը և նպատակ ունի օժանդակելու հարկաբյուջետային, սոցիալական և շրջակա միջավայրի կայունության խթանմանը և մրցունակության ամրապնդմանը:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետության պարտավորություն-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ների ստանձնման նպատակահարմարության հարցը վերաբերելի է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և կառավարության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված լիազորություններին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2016 թվականի դեկտեմբերի 9-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Զարգացման քաղաքականության չորրորդ վարկ» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

20 դեկտեմբերի 2016 թվականի  
ՍԴՈ-1332



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ  
ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 59-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ  
77-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

20 դեկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի և նույն վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 71-րդ հոդ-

3(87)2017  
◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ  
◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ  
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

վածներին,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասի և 77-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 12-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել է 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ին:

Օրենսգրքի՝ «Տուժողի իրավունքները և պարտականությունները» վերտառությամբ 59-րդ հոդվածի վիճարկվող 4-րդ մասն ամրագրում է.

«Տուժողն իրեն պատկանող իրավունքներից օգտվում և իր վրա դրված պարտականությունները կատարում է անձամբ կամ ներկայացուցչի միջոցով, եթե դա համապատասխանում է համապատասխան իրավունքների և պարտականությունների բնույթին: Անչափահաս կամ անգործունակ տուժողի իրավունքները սույն օրենսգրքով սահմանված կարգով նրա փոխարեն իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչը»:

Վիճարկվող հոդվածում փոփոխություններ են կատարվել «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 18.02.04թ. ՀՕ-34-Ն և 25.05.06թ. ՀՕ-91-Ն ՀՀ օրենքներով, որոնք, սակայն, սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճին վերաբերելի չեն:

Օրենսգրքի՝ «Տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցչի իրավունքները և պարտականությունները» վերտառությամբ 77-րդ հոդվածն ամրագրում է.

«1. Տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչը, սույն օրենսգրքով, սահմանված կարգով, իրավունք ունի՝

1) ծանոթանալ առաջադրված մեղադրանքին, իսկ կասկածյալի օրինական ներկայացուցիչը՝ նաև իմանալ՝ ինչու է կասկածվում ներկայացվող անձը.

2) իմանալ դատավարությանը ներկայացվող մասնակցին քրեական վարույթն իրականացնող մարմին կանչելու մասին և ուղեկցել նրան.

3) առանձին, կոնֆիդենցիալ, անարգել տեսակցել դատավարության ներկայացվող մասնակցի հետ՝ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ.

4) քրեական հետապնդման մարմնի առաջարկով մասնակցել իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողություններին.

5) տալ բացատրություններ.

6) ներկայացնել նյութեր քրեական գործին կցելու և հետազոտելու համար.

7) հայտնել բացարկներ.

8) հարուցել միջնորդություններ.

9) առարկել քրեական հետապնդման մարմինների գործողությունների դեմ և պահանջել իր առարկությունները մտցնել քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրության մեջ.

10) ծանոթանալ քննչական և այլ դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց նա կամ դատավարությանը՝ իր կողմից ներկայացվող մասնակիցը մասնակցել կամ ներկա է գտնվել, դիտողություններ ներկայացնել արձանագրությունում գրառումների ճշտության և լրիվության կապակցությամբ, քննչական և այլ դատավարական գործողությանը մասնակցելու, դատարանի նիստին ներկա գտնվելու դեպքում պահանջել նշված գործողության կամ դատարանի նիստի արձանագրության մեջ գրառումներ կատարել այն հանգամանքների մասին, որոնք իր կարծիքով, պետք է նշվեն, ծանոթանալ դատական նիստի արձանագրությանը և ներկայացնել դրա մասին իր դիտողությունները.

11) նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանել և գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություն.

12) ստանալ մեղադրական եզրակացության պատճենը.

13) մասնակցել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նիստերին և գործի նյութերի հետազոտմանը, իր կողմից ներկայացվող քաղաքացիական հայցվորի և մեղադրյալի համապատասխանաբար ներկայացուցչի կամ պաշտպանի բացակայության դեպքում՝ հանդես գալ ճառով և ռեպլիկով.

14) իր խնդրանքով անվճար ստանալ այն որոշումների պատճենները,

որոնք դատավարությանը՝ իր կողմից ներկայացվող մասնակիցը սույն օրենսգրքով ստանալու իրավունք ունի.

15) բողոքարկել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի գործողությունները և որոշումները, այդ թվում՝ դատավճիռը և դատարանի այլ վերջնական որոշումը.

16) հետ վերցնել իր ներկայացրած բողոքը.

17) դատավարության՝ իր կողմից ներկայացվող մասնակցի շահերին առնչվող մասով առարկություններ ներկայացնել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից իրեն տեղեկացված կամ այլ հանգամանքների արդյունքում իրեն հայտնի դարձած դատավարության այլ մասնակիցների բողոքների վերաբերյալ.

18) դատարանի նիստում կարծիք հայտնել դատավարության այլ մասնակիցների միջնորդությունների և առաջարկությունների առիթով.

19) բողոքել մյուս կողմի անօրինական գործողությունների դեմ.

20) առարկել նախագահողի գործողությունների դեմ.

21) իր կողմից ներկայացվող անձի համար հրավիրել համապատասխանաբար պաշտպան և ներկայացուցիչ, դադարեցնել իր կողմից հրավիրված պաշտպանի և ներկայացուցչի լիազորությունները.

22) հետ ստանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից որպես իրեղեն ապացույց կամ այլ հիմքերով իրենից վերցված գույքը, ինչպես նաև իրեն պատկանող պաշտոնական փաստաթղթերի բնօրինակները:

2. Անգործունակ տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչը քրեական գործով վարույթի ընթացքում իրականացնում է նրանց իրավունքները, բացի այն իրավունքներից, որոնք անբաժանելի են նրանց անձից:

3. Սահմանափակ գործունակ տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչն իրավունք ունի՝

1) դատավարությանը՝ իր կողմից ներկայացվող սահմանափակ գործունակ մասնակցի համաձայնությամբ դադարեցնել պաշտպանի լիազորությունները.

2) իմանալ իր կողմից ներկայացվող սահմանափակ գործունակ մասնակցի մտադրության մասին՝

հետ վերցնելու նրա նկատմամբ քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելու վերաբերյալ բերված բողոքը.

հաշտվելու տուժողի, կասկածյալի, մեղադրյալի հետ.



հրաժարվելու իր ներկայացրած քաղաքացիական հայցից կամ ընդունելու իրեն ներկայացված քաղաքացիական հայցը.

հետ վերցնելու նրա շահերի պաշտպանության համար ներկայացված բողոքը.

3) համաձայնվել կամ չհամաձայնվել իր կողմից ներկայացվող անձի՝ սույն հոդվածի երրորդ մասի 2-րդ կետում թվարկված որոշումներին:

4. Անգործունակ տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչն իրավունք չունի դատավարությանը՝ իր կողմից ներկայացվող սահմանափակ գործունակ մասնակցի անունից՝

1) հետ վերցնել նրա նկատմամբ քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելու վերաբերյալ բերված բողոքը.

2) հայտարարել հանցանքի կատարման մեջ իր կողմից ներկայացվող մեղադրյալի մեղավորության մասին.

3) հաշտվել տուժողի, կասկածյալի, մեղադրյալի հետ.

4) ընդունել մեղադրյալին ներկայացված հայցը և հրաժարվել քաղաքացիական հայցվորի ներկայացրած հայցից.

5) հետ վերցնել դատավարությանը՝ իր կողմից ներկայացվող մասնակցի ներկայացրած բողոքը:

5. Տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչն իրավունք չունի կատարել դատավարությանը՝ իր կողմից ներկայացվող մասնակցի շահերին հակասող որևէ գործողություն, մասնավորապես՝ մեղադրյալի անունից հրաժարվել պաշտպանից:

6. Տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչը պարտավոր է՝

1) քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել օրինական ներկայացուցչի իր լիազորությունները հաստատող փաստաթղթերը.

2) իր կողմից ներկայացվող անձի շահերը պաշտպանելու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով.

3) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ներկայացնել իր մոտ եղած առարկաները և փաստաթղթերը.

4) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին.

5) դատարանի նիստում պահպանել կարգուկանոն:

7. Տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչը կարող է կանչվել որպես վկա:

8. Տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչն ունի նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ:

9. Տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչն իր իրավունքներից օգտվում և իր վրա դրված պարտականությունները կատարում է անձամբ»:

Վիճարկվող հոդվածում փոփոխություններ են կատարվել «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 18.02.04թ. ՀՕ-34-Ն և 25.05.06թ. ՀՕ-91-Ն ՀՀ օրենքներով, որոնք, սակայն, նույնպես չեն առնչվում սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճին:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

2016 թվականի հունվարի 8-ին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 32150116 քրեական գործը, իսկ 2016 թվականի հունվարի 26-ին Սամսոն Խուրշուդյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով: 2016 թվականի մարտի 30-ին Սամսոն Խուրշուդյանի վերաբերյալ թիվ 32150116 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որտեղ քրեական գործին շնորհվել է ՄԴ2/0005/01/16 համարը:

Արձանագրելով, որ Ռուզաննա Խուրշուդյանը՝ որպես տուժող, ինչպես նաև որպես տուժող Լիանա Խուրշուդյանի օրինական ներկայացուցիչ, հայտարարել է, որ հաշտվել է ամբաստանյալ Սամսոն Խուրշուդյանի հետ, որ ամբաստանյալ Սամսոն Խուրշուդյանը հայտնել է, որ հաշտվել է տուժողներ Ռուզաննա Խուրշուդյանի և Լիանա Խուրշուդյանի հետ, և ցանկանում է, որպեսզի քրեական գործի վարույթը կարճվի, դատարանը գտել է, որ ամբաստանյալ Սամսոն Խուրշուդյանի հետ հաշտվելու վերաբերյալ տասնչորս տարին չլրացած անչափահաս (երեխա) տուժող Լիանա Խուրշուդյանի մտադրությունը պարզելու կապակցությամբ պետք է կիրառվեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասի և 77-րդ հոդվածի դրույթները, և որոշում է կայացրել թիվ ՄԴ2/0005/01/16 քրեական գործի վարույթը կասեցնելու և ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ սովյալ քրեական գործով կիրառման ենթակա 59-րդ հոդվածի 4-րդ մասի և 77-րդ հոդվածի դրույթները հակասում են 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներին այնքանով, որքանով դրանք իրավունք չեն տալիս տասնչորս տարին չլրացած անչափահաս (երեխա) տուժողներին, իրենց տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, դիրքորոշում (կարծիք) հայտնել կասկածյալի կամ մեղադրյալի հետ հաշտվելու վերաբերյալ, ինչպես նաև բացառում են տասնչորս տարին չլրացած անչափահաս (երեխա) տուժողների շահերից բխելու դեպքում հաշտության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հնարավորությունը:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը, կատարելով օրենսգրքի 59-րդ, 76-րդ և 77-րդ հոդվածների դրույթների համեմատական վերլուծություն, արձանագրում է, որ օրենսգիրքը, ի տարբերություն տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահաս (երեխա) տուժողների, տասնչորս տարին չլրացած անչափահաս (երեխա) տուժողներին որևէ հնարավորություն չի տալիս, իրենց տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, դիրքորոշում (կարծիք) հայտնել կասկածյալի կամ մեղադրյալի հետ հաշտվելու վերաբերյալ նույնիսկ այն դեպքում, երբ հաշտությունը բխում է անգործունակ (տասնչորս տարին չլրացած) տուժողի շահերից (օրինակ, երբ կասկածյալը կամ մեղադրյալը հանդիսանում է տուժողի ծնողը կամ այլ անձ, ով ամբողջությամբ կամ որոշակի չափով տուժողի համար ապահովում է անհրաժեշտ կենսապայմաններ):

4. Պատասխանողը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասով և 77-րդ հոդվածով սահմանված դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանողը, կատարելով քաղաքացիաիրավական և քրեաիրավական նորմերի համեմատական վերլուծություն, գտնում է, որ մինչև տասնչորս տարեկան երեխաներն իրենց գիտակցական մակարդակում օրենսդրորեն հավասարեցված են անգործունակ ճանաչված քաղաքացիներին: Այդ տրամաբանությամբ առաջնորդվելով՝ պատասխանողը կարծում է, որ տասնչորս տարին չլրացած երեխաների կողմից հանցագործությունների հանրային վտանգավորության չգիտակցումը և այդ հիմքով վերջիններիս նկատմամբ քրեական պատասխանատվության բացառումը խոսում են այն մասին, որ

այդ կատեգորիայի երեխաները հանցագործության զոհ լինելու դեպքում ի վիճակի չեն գիտակցելու իրենց շահը հանցագործին քրեական պատասխանատվության ենթարկելու կամ ազատելու հարցերում: Հետևաբար, օրենսդիրն իրավաչափորեն սահմանել է, որ մինչև տասնչորս տարին լրացած երեխաների, ինչպես նաև անգործունակների հաշտվելը կասկածյալի, մեղադրյալի հետ հիմք չէ գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու համար, ինչը երաշխիք է այս խոցելի կատեգորիայի անձանց իրավունքների և շահերի դատական պաշտպանության համար:

Անդրադառնալով դիմողի այն պնդմանը, որ վիճարկվող դրույթները բացառում են տասնչորս տարին չլրացած անչափահաս (երեխա) տուժողների շահերից բխելու դեպքում հաշտության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հնարավորությունը, պատասխանողը նկատում է, որ տասնչորս տարին չլրացած անչափահաս (երեխա) տուժողների շահերի հավասարակշռությունն արդեն իսկ հաստատված է օրենքով՝ այն տեսքով, որ դատարանն է վերջնական դատական ակտով որոշում կայացնում, այդ թվում՝ անչափահաս տուժողների շահերից ելնելով, ի թիվս այլնի, հաշվի առնելով տուժող երեխայի վերաբերմունքը հանցանքը կատարած անձի նկատմամբ, ներառյալ՝ քրեական գործի վարույթը չբացառող և քրեական հետապնդումը չդադարեցնող հանգամանք հանդիսացող՝ երեխայի հաշտեցումը մեղադրյալի հետ:

5. Մինչև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթներին անդրադառնալով՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ օրենսգրքի 77-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին պարբերությունում առկա է ներքին հակասություն. **նախ**, օրենսգրքի 77-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին պարբերությամբ ամրագրված նախադասությունն սկսվում է «անգործունակ տուժողի» բառակապակցությամբ, մինչդեռ նույն նախադասությունում հետագայում օգտագործվում է «սահմանափակ գործունակ մասնակցի անունից» բառակապակցությունը, **երկրորդ**՝ դրա հետևանքով պարզ չէ, թե օրենսգրքի 77-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետում կասկածյալի, մեղադրյալի հետ հաշտվելու արգելքը վերաբերում է անգործունակ, թե սահմանափակ գործունակ տուժողին:

Վերոգրյալի կապակցությամբ, հաշվի առնելով օրենսգրքի ընդհանուր տրամաբանությունը, Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 77-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին պարբերությունում «սահմանափակ գործունակ մասնակցի անունից» բառակապակցությունը վերաբերում է անգործունակ մասնակցին:

6. Հաշվի առնելով դիմողի փաստարկները՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բարձրացված սահմանադրաիրավական վեճը վերաբերում է բացառապես անգործունակ տուժողին, որի ներքո դիմողը նկատի է ունեցել տասնչորս տարին չլրացած անձանց: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ դիմողը, ըստ էության, բարձրացնում է երկու հիմնախնդիր. առաջին՝ օրենքի բաց, որը, ըստ դիմողի, դրսևորվում է նրանում, որ օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասում և 77-րդ հոդվածում բացակայում է անհրաժեշտ նորմը, որն իրավունք կվերապահեր տասնչորս տարին չլրացած անչափահաս (երեխա) տուժողներին իրենց տարիքին և հասունության մակարդակին համապատասխան դիրքորոշում (կարծիք) հայտնել կասկածյալի կամ մեղադրյալի հետ հաշտվելու վերաբերյալ, և երկրորդ՝ օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասը և 77-րդ հոդվածը բացառում են տասնչորս տարին չլրացած անչափահաս (երեխա) տուժողների շահերից բխելու դեպքում հաշտության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հնարավորությունը: Վերջին հիմնախնդրի կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ դիմողը, ըստ էության, վիճարկում է օրենսգրքի 77-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով սահմանված նորմը, քանի որ միայն վերջինս է, որ արգելում է անգործունակ, այսինքն, ըստ դիմողի, տասնչորս տարին չլրացած անչափահաս (երեխա) տուժողների շահերից բխելու դեպքում հաշտության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հնարավորությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը սույն գործի քննության շրջանակներում վիճարկվող նորմերը քննության առարկա է դարձնում **բացառապես անգործունակ տուժողի մասով, ինչպես նաև օրենսգրքի 77-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով սահմանված արգելքի իրավաչափության մասով:**

7. Նկատի ունենալով, որ դիմողը և պատասխանողը փորձում են իրենց դիրքորոշումները հիմնավորել հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նախ անդրադառնալ այդ դրույթների սահմանադրաիրավական բովանդակությանը:

ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

«1. Երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում:

2. Երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջ-

նահերթ ուշադրության արժանանան»:

Սահմանադրական վերոնշյալ նորմերից հետևում է, որ սահմանադիրը տվյալ նորմով երեխային վերապահել է.

- ոչ միայն իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք, այլ նաև, ի թիվս այլնի, իրեն վերաբերող դատական գործընթացներում լավելու իրավունք,

- լավելու իրավունքի շրջանակներում՝ դատական մարմինների կողմից իր կարծիքը հաշվի առնելու իրավունք:

Միաժամանակ, Սահմանադրության տվյալ հոդվածը չի նախատեսում տարիքային կամ այլ որևէ սահմանափակում: «Հաշվի առնողի» համար է պարտականություն սահմանված՝ ելնել երեխայի տարիքից և հասունության աստիճանից: Բացի դրանից, ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասը հանրային իշխանության վրա դնում է հստակ պարտականություն՝ առաջնահերթ ուշադրության արժանացնել երեխայի շահերին՝ նրան վերաբերող հարցերում: Հետևաբար, սահմանադրի նպատակն է երեխային վերաբերող հարցերում տարբեր շահերի առկայության դեպքում առաջնահերթ պաշտպանել երեխայի շահերը, այնուհետև՝ առկա մյուս շահերը, իսկ այդ շահերի հակասության դեպքում հանրային իշխանությունը պարտավոր է պաշտպանել երեխայի շահերը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն 37-րդ հոդվածի, մասնավորապես՝ 1-ին և 2-րդ մասերի դրույթները գործում են անմիջականորեն, և դատական պրակտիկան պարտավոր է առաջնորդվել այդ պահանջով:

Վերոգրյալից ելնելով՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառ պրակտիկայում չպետք է փորձել երեխայի լավելու իրավունքը պայմանավորել տարիքային սահմանափակումով, ինչն ուղղակիորեն առկա չէ վեճի առարկա հոդվածներում և չի բխում Սահմանադրության 37-րդ հոդվածի պահանջներից: Վարույթն իրականացնող մարմինն է պարտավոր ապահովել երեխայի լավելու իրավունքի իրացումը՝ անկախ տարիքից, հաշվի առնել այն և առաջնահերթ կարգով երեխայի շահերից ելնելով որոշում կայացնել:

8. Երեխայի տարիքի, հասունության մակարդակի և նրան առաջադրված հարցի բարդության միջև հարաբերակցության, երեխայի շահերն առաջնահերթ ուշադրության արժանացնելու հարցերին է նվիրված նաև ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1989 թվականի նոյեմբերի 20-ի 44/25 բանաձևով ընդունված և 1990 թվականի սեպտեմբերի 2-ին ուժի մեջ մտած՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան: Նշված կոնվեն-

ցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին»:

Նույն կոնվենցիայի 12-րդ հոդվածը սահմանում է. «1. Իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն»:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն 2013թ. մայիսի 29-ին հատուկ անդրադարձ կատարելով երեխայի լավագույն շահերի ապահովմանը՝ մասնավորապես արձանագրում է, որ բոլոր երկրներն են պարտավոր երաշխավորել, որպեսզի երեխայի լավագույն շահերն առաջնահերթության կարգով հաշվի առնվեն նրա վերաբերյալ որոշումներ կայացնելիս՝ ինչպես դատարանների, վարչական մարմինների կողմից, այնպես էլ իրավակարգավորման գործընթացում:

9. ՀՀ գործող օրենսդրության ընդհանուր տրամաբանությունն իրավակիրառ պրակտիկայի կողմից ընկալվել և իրացվում է այնպես, որ համաձայն քաղաքացիական, քրեական, վարչական պատասխանատվության համար տարիք սահմանող նորմերի (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ և 1067-րդ հոդվածներ, ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ հոդված, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 12-րդ հոդված)՝ տասնչորս տարին չլրացած անչափահասները և հոգեկան խանգարման հետևանքով դատարանով անգործունակ ճանաչված անձինք դիտարկվում են միևնույն կատեգորիայում: Քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետում ամրագրված նորմով արգելվել է անգործունակ տուժողի օրինական ներկայացուցչին հաշտվել կասկածյալի, մեղադրյալի հետ՝ հետևություն է արվում, որ տասնչորս տարին չլրացած անձի տարիքը և հասունության մակարդակը չեն համապատասխանում կասկածյալի, մեղադրյալի հետ հաշտվելու վերաբերյալ հարցի բարդությանը: Միաժամանակ, չի բացառվում այնպիսի հնարավոր իրավիճակներ, ինչպիսիք են, մասնավորապես, կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակում հենց **փոքրահասակի** ծնողի հայտնվելը, որպիսի պարագայում **փոքրահասակի** մյուս ծնողն է հանդես գալիս որպես օրինական ներկայացուցիչ: Նման իրավիճակում ծնողների

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

միջև հնարավոր հաշտությունը՝ կախված տարբեր օրյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներից, կարող է բխել կամ չբխել երեխայի լավագույն շահերից: **Վերջինիս գնահատման պարտականությունը վարույթն իրականացնող մարմնին է վերապահված:**

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածը՝ վեճի առարկայի և սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

20 դեկտեմբերի 2016 թվականի  
ՍԴՈ-1333





**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԱՂԱՍԻ ՏԵՐ-ԵՍԱՅԱՆԻ ԵՎ ՆՇԱՆ ԻՍՊԻՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ  
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ  
52-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, 231-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 4-ՐԴ  
ԿԵՏԻ ԵՎ 231-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**27 դեկտեմբերի 2016թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողների ներկայացուցիչներ Կ. Մեժլումյանի, Զ. Հայրապետյանի, Կ. Աղաջանյանի, Է. Հակոբյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի և նույն վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Աղասի Տեր-Եսա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 3(87)/2017  
73

յանի և Նշան Իսախրյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի, 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի և 231-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Ադասի Տեր-Եսայանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 1-ին և Նշան Իսախրյանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 5-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2016 թվականի հոկտեմբերի 28-ի ՍԴԱՈ-99 աշխատակարգային որոշմամբ որոշել է վերը նշված դիմումների հիման վրա քննության ընդունված գործերը միավորել:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Ապացուցելուց ազատվելու հիմքերը» վերտառությամբ 52-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասն օրենսգրքում ամրագրվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 28.11.07թ. ՇՕ-277-Ն ՀՀ օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքի բովանդակությունը» վերտառությամբ 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը սահմանում է.

«2. Վճռաբեկ բողոքը սույն օրենսգրքի 234 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ներկայացնելու դեպքում բողոքը բերած անձը պետք է հիմնավորի, որ դրա վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կնպաստի օրենքի միատեսակ կիրառության ապահովմանը, մասնավորապես վճռա-

բեկ բողոքում հիմնավորելով, որ՝ ... 4) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը՝ կցելով այդ դատական ակտերը և մեջբերելով դրանց հակասող մասերը՝ կատարելով համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի և նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքի բովանդակությունը» վերտառությամբ 231-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.

«3. Վճռաբեկ բողոքը սույն օրենսգրքի 234 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով ներկայացնելու դեպքում վճռաբեկ բողոք բերած անձը վճռաբեկ բողոքում պետք է նշի այն նյութական կամ դատավարական իրավունքի նորմը, որը խախտվել է՝ հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա»:

ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածում կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ (28.11.07թ. ՀՕ-277-Ն, 26.12.08թ. ՀՕ-233-Ն և 10.06.14 ՀՕ-49-Ն ՀՀ օրենքներ), իսկ վիճարկվող դրույթները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածում ամրագրվել են «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.14 ՀՕ-49-Ն ՀՀ օրենքով:

2. Միավորված գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

Ա) Ադասի Տեր-Եսայանի դիմումի մասով.

Դիմելով դատարան՝ Ադասի Տեր-Եսայանը պահանջել է Երևան համայնքի (քաղաքապետարանի) գործողությունները, որոնցով իր անվամբ վարձակալության իրավունքով գրանցված 0,0020 հա մակերեսով հողամասից քանդվել է «Երևանի Գլխավոր պողոտայի» և Մարգարյանի անվան հիվանդանոցի հարակից տարածքում սեփականության իրավունքով իրեն պատկանող 19,0 քմ մակերեսով առևտրի կրպակը, ճանաչել ապօրինի: Որպես հետևանք՝ նա պահանջել է Երևան համայնքին պարտավորեցնել հատուցել ապօրինի գործողությունների արդյունքում իրեն պատճառված վնասը՝ բռնագանձելով 4.750.000 դրամ՝ որպես գույքի կորստի գումար, 1.705.000 դրամ՝ որպես բաց թողնված օգուտ, ինչպես նաև 2011թ. օգոստոս ամսից սկսած 4.750.000 դրամի նկատմամբ հաշվարկել ՀՀ քաղաքա-

ցիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված՝ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքին համապատասխան տոկոսներ: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 17.06.2015թ. վճռով հայցը մերժվել է:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի հիշյալ վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացվել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.11.2015թ. որոշմամբ Աղասի Տեր-Եսայանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 17.06.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 27.11.2015թ. որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացվել, իսկ 10.02.2016թ. ՀՀ վճռաբեկ դատարանը կայացրել է «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշում՝ մասնավորապես պատճառաբանելով, որ «...թեև բողոքաբերը բերված վճռաբեկ բողոքում վկայակոչել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.06.2013 թվականի թիվ ԵՄԴ/0599/02/12 որոշումը, ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի թիվ ԱՐԱԴ/0209/02/13 և 18.07.2014 թվականի թիվ ՍԴՅ/0055/02/13 որոշումները և մեջբերել է դրանց և բողոքարկվող դատական ակտի ենթադրյալ հակասող մասերը, սակայն չի կատարել բավարար համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի և վերոնշյալ դատական ակտերում կիրառված միևնույն նորմի՝ իրար հակասող մեկնաբանության վերաբերյալ: Հետևաբար բերված բողոքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքը նույնպես հիմնավորված չէ»:

Բ) Նշան Իսպիրյանի դիմումի մասով.

Հասմիկ Բաղայանը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Նշան Իսպիրյանի՝ պահանջելով ճանաչել հայրությունը, բռնագանձել ալիմենտ և պարտավորեցնել որոշակի ժամանակահատվածում զբաղվել երեխայի խնամքով և դաստիարակությամբ (քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/3052/02/14): Դատարանի 17.09.2015թ. վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն:

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի հիշյալ վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացվել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 23.12.2015թ. որոշմամբ Նշան Իսպիրյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի՝

17.09.2015թ. վճիռը թողնվել է անփոփոխ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 23.12.2015թ. որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացվել, իսկ 30.03.2016թ. ՀՀ վճռաբեկ դատարանը կայացրել է «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշում՝ պատճառաբանելով, մասնավորապես, հետևյալ կերպ.

- «... սույն գործով բողոք բերած անձի ներկայացրած փաստարկները բավարար չեն դատական սխալի առկայությունը և գործի էլքի վրա դրա ազդեցությունը հիմնավորված համարելու համար»,

- «... թեև բողոք բերած անձը վճռաբեկ բողոքում վկայակոչել է ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-1167(ՎԴ) քաղաքացիական գործով և թիվ 3-1519(ՎԴ) քաղաքացիական գործով 10.10.2007 թվականի, թիվ 3-1580 քաղաքացիական գործով 12.12.2007 թվականի, թիվ ԵԱՆԴ/2775/02/08 քաղաքացիական գործով 04.12.2009 թվականի, թիվ ԵՄԴ/0826/02/12 քաղաքացիական գործով 18.07.2014 թվականի որոշումները և մեջբերել է դրանց ու բողոքարկվող որոշման ենթադրյալ հակասող մասերը, սակայն չի կատարել բավարար համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի և վերոնշյալ դատական ակտերում կիրառված միևնույն նորմի՝ իրար հակասող մեկնաբանության վերաբերյալ...»:

3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի առումով դիմող Ադասի Տեր-Եսայանը բարձրացնում է իրավական անորոշության հարց՝ այն համատեքստում, որ վիճարկվող դրույթի՝ «դատարանի վճռով» արտահայտությունը ձևակերպված է ոչ բավարար հստակությամբ, ամրագրված չէ անհրաժեշտ փաստակազմ՝ «կարճման վճիռ» արտահայտությունը, որը հնարավորություն կտար իրավակիրառողին կարճման վճռի առկայության պայմաններում կիրառել վիճարկվող դրույթը: Ըստ այդմ, վիճարկվող դրույթի առնչությամբ դիմողի փաստարկները հանգում են նրան, որ «դատարանի վճռով» արտահայտության ոչ հստակ ձևակերպումը, միաժամանակ նաև օրենսդրական բացը իրավակիրառ պրակտիկայում բացառում են կարճման մասին վճռով հաստատված հանգամանքները որպես նախադատելի փաստ ընդունելը, ինչն առաջ է բերում արդար դատաքննության իրավունքի խախտում: Դիմողը նշում է նաև, որ այդ անորոշությունը հնարավորություն չի տալիս անձին իրավական նորմին համապատասխանեցնել իր վարքագիծը և դատական կարգով արդյունավետ պաշտպանել իր սահմանադրական իրավունքները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի առումով դիմողները նշում են, որ այդտեղ օգտագործվող՝ «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, որը, իր

հերթին, իրավակիրառ պրակտիկայում հանգեցնում է կամայական և տարածական մեկնաբանության՝ հանգեցնելով դատական պաշտպանության արդյունավետ միջոցի և անձի՝ արդար դատաքննության իրավունքի խախտմանը: Դիմողները նշում են նաև, որ իրավունքն իրացնողի համար անհասկանալի և անկանխատեսելի է թե՛ այդ նորմի բովանդակությունը, թե՛ կիրառելիությունը, քանի որ օրենսդիրը չի սահմանել, թե համեմատական վերլուծությունն ինչպես պետք է կատարել, այն ինչ չափանիշների և պայմանների պետք է համապատասխանի, որպեսզի վճռաբեկ դատարանի համար բավարար լինի և հիմք հանդիսանա բողոքը վարույթ ընդունելու համար: Այսինքն, «համեմատական վերլուծություն» եզրույթը ձևակերպված չէ բավարար հստակությամբ, ինչի արդյունքում իրավունքն իրացնող սուբյեկտը չի կարողանում իր վարքագիծը կարգավորել այդ իրավանորմին համապատասխան, քանի որ պարզ չէ, թե համեմատական վերլուծությունը, ինչպես նաև դատական ակտերի միջև առկա հակասությունն ինչպես պետք է մատնանշվի վճռաբեկ բողոքում, որպեսզի վճռաբեկ դատարանի համար դիտվի և հանդիսանա բավարար բողոքը վարույթ ընդունելու համար:

Դիմողները, վկայակոչելով վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներ, եզրահանգում են, որ վճռաբեկ դատարանը նույնպես չի բացահայտում «համեմատական վերլուծություն» եզրույթի չափանիշները, ինչն էլ վերջինիս հնարավորություն է տալիս գործել բացարձակ հայեցողությամբ, հայեցողական և սուբյեկտիվ մեկնաբանություն տալ բողոքում համեմատական վերլուծություն կատարած լինելու փաստի հետ կապված: ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխանաբար մի շարք որոշումներում և վճիռներում ամրագրված իրավական դիրքորոշումների տրամաբանությանը հիմնվելով՝ դիմողները կարծում են, որ «համեմատական վերլուծություն» եզրույթի ընդհանուր և վերացական ձևակերպված լինելը հանգեցնում է իրենց դատական պաշտպանության արդյունավետ միջոցի և դատարանի մատչելիության իրավունքի խախտմանը, քանի որ վերջիններս բողոքում կատարում են համեմատական վերլուծություն, որը, սակայն, վճռաբեկ դատարանի համար բավարար չէ բողոքը վարույթ ընդունելու համար: Հետևաբար, այդ հիմքով վճռաբեկ բողոք բերելը դառնում է անարդյունավետ և անիմաստ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասի առումով դիմող Նշան Իսպիրյանը, կրկին շեշտադրելով իրավական որոշակիության վերաբերյալ ներկայացված վերլուծությունը, գտնում է, որ համանման իրավական խնդիր առկա է նաև այս պարագայում: Մասնավորապես, օրենսդիրը չի բացահայտել, թե որոնք են այն չափանիշները և պայմանները, որոնք բավարար են փաստելու դատական սխալի առ-

կայությունը և գործի ելքի վրա դրանց ազդեցությունը, և որոնք պետք է պահպանված լինեն դատական սխալի վերաբերյալ հիմնավորումները և վերլուծությունները շարադրելիս: Դիմողը կարծում է նաև, որ հնարավոր չէ հասկանալ, թե ինչպես պետք է ներկայացնել հիմնավորումները, որպեսզի այն վճռաբեկ դատարանի համար համարվի բավարար:

Վերլուծելով վիճարկվող դրույթները՝ դիմողները եկել են այն եզրահանգման, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը, 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը և 231-րդ հոդվածի 3-րդ մասը հակասում են ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 92-րդ հոդվածին, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 1-ին, 61-րդ, 63-րդ, 79-րդ հոդվածներին:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողների փաստարկներին, գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասում առկա «դատարանի վճռով» արտահայտությունը վերաբերում է միայն քաղաքացիական գործերով օրինական ուժի մեջ մտած վճիռներին, իսկ 52-րդ հոդվածի 3-րդ մասը քաղաքացիական դատավարության կողմերին ազատում է ապացուցման բեռից քրեական գործերով դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված փաստերի (ըստ որոնց՝ հաստատված են որոշակի գործողություններ և դրանք կատարած անձինք) համար: Օրենսգրքի 52-րդ հոդվածում առկա է օրենսդրական բաց այնքանով, որքանով որպես նախադատելի փաստեր չեն սահմանվել վարչական գործերով դատարանի վճռով հաստատված հանգամանքները, ինչն արդեն շտկվել է ՀՀ Ազգային ժողովի նիստերի օրակարգ ընդգրկված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի նախագծով:

Ինչ վերաբերում է կարճված գործերի վճիռներով հաստատված հանգամանքների նախադատելիությանը, ապա պատասխանողը նշում, որ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով գործի վարույթի կարճման հիմքերն այնպիսին են, որ օբյեկտիվորեն կարճման վճիռի շրջանակներում չեն կարող հաստատվել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի և ապացուցման ենթակա փաստերի շրջանակում ներառված փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Հետևաբար, ըստ պատասխանողի, իրավական որոշակիության խնդիր սահմանադրաիրավական վեճի առարկա քննարկվող դրույթում առկա չէ, քանի որ բացակայում է օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասում կարճման վճիռներով հաստատված հանգամանքների նախադատելիության սահմանման անհրաժեշտությունը:

Մեջբերելով իրավական որոշակիության սկզբունքի հետ կապված ՀՀ սահմանադրական դատարանի, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք դիրքորոշումներ՝ պատասխանողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ համեմատական վերլուծության բավարար լինելն առանձին գործերով թողնված է իրավակիրառ պրակտիկային: Ըստ պատասխանողի՝ համեմատական վերլուծության բավարար աստիճան պետք է համարվի ենթադրյալ հակասող դատական ակտերում (բողոքարկվող դատական ակտում և նորմի մեկնաբանության և վճռաբեկ դատարանի որոշման մեջ) տեղ գտած միևնույն իրավական դրույթների մեկնաբանությունների համադրման և իրավական վերլուծությունների այնպիսի մակարդակը, որը գործի ելքով չչահագրգռված անձին օբյեկտիվորեն կհամոզի, որ բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանության և վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանության միջև առերևույթ առկա է հակասություն: Միևնույն ժամանակ, պատասխանողը համարում է, որ գործնական մեկնաբանման արդյունքում ձևավորված օբյեկտիվ չափանիշներն անհրաժեշտ է կիրառել առանց որևէ խտրականության: Հետևաբար, որևէ դատական ատյան, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, իրավունք չունի առանց որևէ օբյեկտիվ հիմքի, առաջնորդվելով կամայականությամբ՝ ընտրողաբար վարույթ ընդունել դատական գործերը: Ընդ որում, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումները պետք է պատշաճ պատճառաբանված լինեն:

Օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև 231-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտման և այդ խախտման՝ գործի ելքի վրա ազդեցության հիմնավորման պարտականության բեռը բողոքաբերին վճռաբեկ դատարանից փոխանցելը, պատասխանողի կարծիքով, իրավաչափ է, քանզի պայմանավորված է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ սահմանադրաիրավական ինքնատիպ կարգավիճակով, ՀՀ դատական համակարգում ունեցած ուրույն դերով և բխում է նաև միջազգային լավագույն պրակտիկայից:

Այս առումով խնդրո առարկա դրույթները, ըստ պատասխանողի, համապատասխանում են իրավական օրենքին ներկայացվող իրավական որոշակիության, օրենքում օգտագործվող ձևակերպումների հստակության, բավարար մատչելիության պահանջներին:

Ամփոփելով իր դիրքորոշումը՝ պատասխանողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասով, 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և 231-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմա-



նադրության պահանջներին, իսկ վերջին երկու դրույթների կիրառման պրակտիկան խնդրահարույց է հաշվի առնելով 2016 թվականի նոյեմբերի 22-ի թիվ ՍԴՈ-1322 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

5. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

- դիմող Ադասի Տեր-Եսայանը, խնդրելով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը, բարձրացնում է միայն «դատարանի վճռով» եզրույթի սահմանադրականության հարցը, և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ է պարունակում միայն այդ եզրույթի վերաբերյալ,

- դիմողները, խնդրելով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, բարձրացնում են միայն «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթի սահմանադրականության հարցը, և դիմումները «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ են պարունակում միայն այդ եզրույթի վերաբերյալ,

- դիմող Նշան Իսպիրյանը, խնդրելով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասը, բարձրացնում է միայն «... հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա» արտահայտության սահմանադրականության հարցը, և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ է պարունակում միայն այդ արտահայտության վերաբերյալ:

Հետևաբար, հաշվի առնելով հիշյալ հանգամանքը՝ Սահմանադրական դատարանը սույն գործը քննության է առնում միայն «դատարանի վճռով» եզրույթի, ինչպես նաև «կատարելով համեմատական վերլուծություն» և «... հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա» արտահայտությունների սահմանադրականության բացահայտման շրջանակներում:

6. Ելնելով դիմումներում առաջադրված հարցադրումների բովանդակությունից՝ սույն գործով սահմանադրաիրավական վեճի լուծման նպատակով ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

- արդյոք միայն վեճն ըստ էության լուծող դատարանի վճռով հաստատված փաստերը նախադատելի փաստեր համարելը չի խոչընդոտում անձի ՀՀ Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացմանը,

- արդյոք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասում կիրառված՝ «դատարանի վճռով» հասկացությունը չի խախտում ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված որոշակիության սկզբունքն այնքանով, որ անձը հնարավորություն չունենա կանխատեսելու իրավական հետևանքները և ընտրելու իր վարքագիծը,

- արդյոք վճռաբեկ բողոքում հիմնավորման պահանջը՝ համեմատական վերլուծություն կատարելու միջոցով, ինչպես նաև խախտման հիմնավորման պահանջը, որ այն ազդել է գործի ելքի վրա, չի սահմանափակում անձի ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային փաստաթղթերով երաշխավորված դատական պաշտպանության արդյունավետ իրականացման հնարավորությունը, ինչպես նաև համապատասխանում է իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին:

7. Անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքը նախատեսված է ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածներով, որոնց համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության, անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Իր մի շարք որոշումներում (ՄԴՈ-690, ՄԴՈ-719, ՄԴՈ-873, ՄԴՈ-942, ՄԴՈ-1037, ՄԴՈ-1190, ՄԴՈ-1192, ՄԴՈ-1197, ՄԴՈ-1257, ՄԴՈ-1289 և այլն) Սահմանադրական դատարանը հանգամանորեն անդրադարձել է արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին՝ դրանք դիտարկելով որպես դատական պաշտպանության իրավունքի անհրաժեշտ բաղադրատարրեր՝ հավասարապես ընդգծելով դրանց կարևորությունը դատարնթացակարգային բնագավառներում: Սահմանադրական դատարանը վերոթվարկյալ որոշումներում կարևորել է իրավակարգավորման մի շարք սկզբունքներ (չափանիշներ), որոնք սույն գործով վեճի առարկա նորմերի սահմանադրականության գնահատման տեսանկյունից ունեն սկզբունքային նշանակություն: Մասնավորապես.

« - դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրել ՀՀ Սահմանա-

դրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով» (ՄԴՈ-1257),

- «իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և չհանգեցնի իրավունքի էության խախտման» (ՄԴՈ-1192),

- «ինքնին խնդրահարույց չէ վճռաբեկ բողոքի ընդունելիության այնպիսի պահանջներ սահմանելը, որոնք կարող են ավելի խիստ լինել» (ՄԴՈ-1192),

- «նախապայմանների խստացումը չպետք է տեղի ունենա անհամաչափ՝ անձանց համար ստեղծելով իրավունքների պաշտպանության խոչընդոտներ: Բացի դրանից, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ օրենսդրորեն նախատեսված, հստակ, և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն» (ՄԴՈ-690),

- անդրադառնալով վերադաս դատական աստիճանում դիմումի թույլատրելիության պահանջներին՝ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ. «Այլ է իրավիճակը վերադաս դատական աստիճաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս աստիճաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն» (ՄԴՈ-719):

Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումների վերաբերյալ որոշակի դիրքորոշումներ է արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որոնց համաձայն.

- այս իրավունքը բացարձակ չէ, և պետությունները կարող են այն իրացնելու հնարավորությունը պայմանավորել որոշակի պահանջներով և չափանիշներով (Case of Stanev v. Bulgaria, application no. 36760/06, 17/12/2012),

- պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կա-

րող է սահմանել որոշակի պայմաններ, «...պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (Case of Khalfaoui v. France, application no. 34791/97, 14/03/2000),

- սահմանափակումները չեն կարող համապատասխանել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, եթե չեն հետապնդում իրավաչափ նպատակ կամ բացակայում է ընտրված միջոցների և հետապնդվող իրավաչափ նպատակի միջև պատճառական կապը (Case of Marini v. Albania, application no. 3738/02, 18/12/2007):

ՄԻԵԴ-ը բազմաթիվ վճիռներում նշել է, որ վճռաբեկ դատարան տրվող գանգատին ներկայացվող պահանջները կոչված են ապահովելու արդարադատության լավագույն կառավարում, սակայն ազգային դատարանների կողմից գանգատների ձևակերպման նկատմամբ **չափազանց ձևական մոտեցումը** վճռաբեկ գանգատների ընդունման հարցում կարող է հանգեցնել դատարանի մատչելիության իրավունքի խախտման: Վճռաբեկ գանգատի հստակ ձևակերպված չլինելու հիմքով վարույթ չընդունելը, ըստ ՄԻԵԴ-ի, կարող է հանգեցնել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման (Case of Reichman v. France, application no. 50147/11, 12/07/2016):

ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքից հետևում է, որ պետք է խուսափել ավելորդ ձևականությունից, «բայց միաժամանակ չլինել չափազանց ճկուն, որպեսզի վճռաբեկ գանգատին ներկայացվող պահանջները չդառնան անիմաստ» (Case of Dumitru Gheorghe v. Romania, application 33883/06, 12/04/2016):

ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի ուսումնասիրության արդյունքներով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՄԻԵԴ-ը հնարավոր է համարում, որ ներպետական դատավարական կարգի համաձայն դիմողից պահանջվի հայցը կամ գանգատը, այդ թվում՝ փաստական հիմքերն ու իրավական փաստարկները ներկայացվեն գրավոր՝ որոշակի ձևանմուշին համապատասխան: Այդուհանդերձ, այս պահանջը չպետք է հանգեցնի ծայրահեղ ձևականության, և հարկ է, որ ներպետական դատարանները սեփական նախաձեռնությամբ գործի հանգամանքների որոշակի ուսումնասիրություն կատարեն՝ դիմողի փաստարկներն ըստ

էության *proprio motu* կարգով գնահատելու համար, եթե նույնիսկ դրանք ձևակերպված չեն եղել բացարձակ պարզորոշ կամ ճշգրիտ կերպով (Case of Dattel-2 v. Luxembourg, application no.18522/06, 10/12/2009):

Սահմանադրական դատարանը փաստում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր վճիռներում բազմիցս անդրադարձել է խնդրո առարկա հարցին և նշել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը, որի մասնավոր տարր է հանդիսանում դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ իրավունք չէ և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես՝ բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ, քանի որ այն իր էությամբ պահանջում է պետության կողմից կարգավորում, որը կարող է փոփոխվել՝ կախված ժամանակից և տեղից, ինչպես հասարակության, այնպես էլ կոնկրետ անձանց պահանջմունքներին և միջոցներին համապատասխան: Պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես և այն սահմաններով, որ վնասի նրա էությունը, և դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, եթե ունեն օրինական նպատակ և կիրառված միջոցների ու դրված նպատակի միջև գոյություն ունի արդար հավասարակշռություն (Case of Golder v. United Kingdom, 21 feb. 1975, Case of Garcia Manibardo v. Spain, 15 feb. 2000, Case of Bellet v. France, 20 nov. 1995 և այլն):

Նշված դիրքորոշումները կարևորվում են հատկապես ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերով նախատեսված՝ մարդու արդարադատական իրավունքների իրացման օրենսդրական երաշխիքների ապահովման համար:

8. Համաձայն ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 79-րդ հոդվածի՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Իր բազմաթիվ որոշումներում (ՄԴՈ-630, ՄԴՈ-731, ՄԴՈ-753, ՄԴՈ-984, ՄԴՈ-1142, ՄԴՈ-1176, ՄԴՈ-1213, ՄԴՈ-1270 և այլն) Սահմանադրական դատարանն անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին՝ նշելով, մասնավորապես.

- «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի

կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը» (ՄԴՈ-630),

- «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը» (ՄԴՈ-753),

- «... իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության» (ՄԴՈ-1176),

- «Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ» (ՄԴՈ-1213),

- «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով» (ՄԴՈ-1270),

- «... իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է նաև դատարանների որոշումների հստակություն և կանխատեսելիություն, ինչը թույլ է տալիս իրավահարաբերությունների մասնակիցներին համապատասխան պատկերացում կազմել իրենց վարքագծի հնարավոր հետևանքների մասին» (ՄԴՈ-1270):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես իր վճիռ-

ներում բազմիցս անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին: Մասնավորապես, Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի գործով (Case of Busuioc v. Moldova, application no. 61513/00, 21/12/2004) վճռում, Եվրոպական դատարանը գտել է, որ «օրենքով նախատեսված» արտահայտության պահանջներից մեկն այն է, որ համապատասխան միջոցը պետք է լինի կանխատեսելի: Նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի անձին հնարավորություն տա կարգավորելու իր վարքագիծը. անձը պետք է կարողանա տվյալ հանգամանքներում ողջամիտ կերպով կանխատեսել իր տվյալ գործողության հետևանքները: Այդ հետևանքները չեն կարող կանխատեսելի լինել բացարձակ որոշակիությամբ: Թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է:

9. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածում օրենսդիրը սահմանել է ապացուցման կարիք չունեցող փաստերի այն հիմքերը, որոնց հիման վրա գործին մասնակցող անձն ազատվում է տվյալ փաստի ապացուցման պարտականությունից: Այդպիսի հիմք է նաև քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթը, համաձայն որի՝ նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում: Դիմողներից Ադասի Տեր-Եսայանի դիմումի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա՝ սույն գործի քննության շրջանակներում բարձրացված սահմանադրաիրավական վեճն ըստ էության վերաբերում է վիճարկվող դրույթում ամրագրված՝ «դատարանի վճռով» եզրույթին՝ կապված այն դեպքերի հետ, երբ դատարանը վեճը դատարանին ընդդատյա չլինելու հիմնավորմամբ կարճում է գործի վարույթը:

Ադասի Տեր-Եսայանի դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի համար որպես նախկինում քննված օրինական ուժի մեջ մտած դատարանի վճիռ է հանդիսանում ՀՀ վարչական դատարանի՝ 03.10.2013թ. ՎԴ/3088/05/12 վարչական գործով դատական ակտը: Այդ վճռով ՀՀ վարչական դատարանը վարչական գործի վարույթն ըստ հայցի Ադասի Տեր-Եսայանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի՝ պատասխանողների գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, կարճել է՝ վեճը

վարչական դատարանին ընդդատյա չլինելու հիմնավորմամբ:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում առկա է անհամապատասխանություն. մասնավորապես, մի կողմից, օրենսգրքի 130-րդ հոդվածի համաձայն վճիռը կայացվում է գործն ըստ էության լուծելու դեպքում, իսկ մյուս կողմից՝ 110-րդ հոդվածը սահմանում է, որ գործի վարույթը կարճելու մասին նույնպես կայացվում է վճիռ: Այս առումով հարկ է նկատի ունենալ, որ գործի վարույթը կարճելու մասին վճիռը չի կարող միանշանակ համարվել գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Անդրադառնալով նախադատելիության ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակության հարցերին՝ հարկ է նկատի ունենալ հետևյալը.

**Նախ**՝ նախադատելիության կանոնների սահմանումը գտնվում է օրենսդրի լիազորությունների շրջանակներում, քանի որ ի վերջո օրենսդիրն է որոշում նախադատելիության այս կամ այն դրույթի ընդունման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով նաև ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների ապահովման հնարավորությունը,

**Երկրորդ**՝ դատավարական տեսանկյունից նախադատելիության ինստիտուտը ապահովում է արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը, ինչպես նաև ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը,

**Երրորդ**՝ նախադատելիության ինստիտուտը ենթադրում է, որ այն հանգամանքները, որոնք ճանաչվում են նախադատելի հանգամանքներ, հաստատվել են դատարանի կողմից մրցակցային դատավարության կանոններով սահմանված կարգով:

Վճռաբեկ դատարանը, իրացնելով օրենքների միատեսակ կիրառություն ապահովելու սահմանադրաիրավական իր գործառույթը, արտահայտել է իրավական դիրքորոշում, ըստ որի՝ «...վճիռների նախադատելիության կանոնները միևնույն են ինչպես վարչական, այնպես էլ քաղաքացիական դատավարությունում, հետևաբար քաղաքացիական գործեր քննելիս վարչական գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտերով հաստատված հանգամանքները, ինչպես այլ քաղաքացիական գործերով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները, ևս ունեն նախադատելի նշանակություն» (թիվ Ա.ԲՄԴ/0209/02/13 քաղաքացիական գործով վճռաբեկ դատարանի 18.07.2014թ. որոշում):

Նախադատելիության հարցի վերաբերյալ առկա են նաև ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք այլ որոշումներ:

Մասնավորապես, թիվ 3-93 (ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ



դատարանը նախադատելիության ինստիտուտի վերաբերյալ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «Վճռաբեկ դատարանը հատկապես կարևորություն է տալիս ապացուցման առարկայի՝ **վեճի լուծման համար նշանակություն ունեցող** հանգամանքների ճիշտ որոշման հարցին, քանզի դատարանի կողմից ապացուցման առարկայի սահմանների կամայական (առանց դատավարական նախադրյալի՝ հայցվորի կամահայտնության) ընդլայնումը բերում է այդ գործով կայացված դատական ակտով հաստատված որոշակի հանգամանքների նախադատելիության բացառման:

...

նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով ունեն նախադատելի նշանակություն քննվող այլ գործի համար, բացառությամբ այն **բացառիկ** դեպքերի, երբ՝

ա) այդ հաստատված հանգամանքը վերաբերելի չէ նախկինում քննված քաղաքացիական գործով հայցի առարկային (չի դասվում հաստատման ենթակա հանգամանքների շարքը) և/կամ

բ) այդ հանգամանքը հաստատվել է ֆորմալ դատավարական կանոնների կոպիտ խախտմամբ կամ կողմերից մեկի՝ դատավարական հնարավորությունների սահմանափակվածության պայմաններում»:

Այս առումով ՀՀ սահմանադրական դատարանը փաստում է, որ դիմողի վկայակոչումն այն մասին, որ ինքը վստահ էր, որ կարճման մասին վճռով հաստատված ցանկացած հանգամանք հանդիսանում է այլևս ապացուցման կարիք չունեցող փաստ, անհիմն է:

Այն պարագայում, երբ դատարանը կարճում է գործի վարույթը՝ հիմքում դնելով այն հանգամանքը, որ վեճը ենթակա չէ դատարանում քննության, ապա դատարանը հայցվորի նյութաիրավական պահանջին ըստ էության իրավական գնահատական չի տալիս, այլ դատարանի դատողությունները, դատարանի կողմից իրավունքի կիրառման գործընթացը և դրանց հիման վրա ձևավորված եզրահանգումն ուղղված են պատճառաբանելու և հիմնավորելու գործի վարույթն այդ հիմքով կարճման ենթակա լինելու հանգամանքը: Ուստի գործի վարույթը կարճելու մասին դատարանի վճռի պատճառաբանական մասն ուղղված է ոչ թե որոշակի հանգամանքներ հաստատելուն, այլ գործի որոշակի հանգամանքների համադրման, վերլուծության և եզրահանգման միջոցով հիմնավորելուն, որ տվյալ վեճը ենթակա չէ տվյալ դատարանում քննության:

Մահմանադրական դատարանը գտնում է, որ դատարանի՝ վեճը ենթակա չէ տվյալ դատարանում քննության հիմնավորմամբ գործի վարույթը կարճելու մասին վճիռն ուղղված չէ որոշակի հանգամանքներ հաստա-

տելու, հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «դատարանի վճռով» եզրույթը չի վերաբերում այն դեպքերին, երբ դատարանը կարճում է գործի վարույթն այն հիմքով, որ վեճը ենթակա չէ դատարանում քննության (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետ):

Հարկ է արձանագրել նաև, որ գործի վարույթը կարճելու վերաբերյալ դատական ակտի տեսակն արդեն իսկ հստակեցված է ՀՀ վարչական դատավարության գործող օրենսգրքով, որի 97-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ գործի վարույթը կարճելու վերաբերյալ կայացվում է որոշում:

10. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի՝ վիճարկվող 4-րդ կետի դրույթի վերլուծությունից հետևում է, որ վճռաբեկ դատարանի որոշման միջոցով օրենքի միատեսակ կիրառության ապահովմանը նպաստելու հանգամանքը հիմնավորելու համար օրենսդիրը բողոքաբերին հստակ պահանջ է առաջադրում՝ մեջբերել բողոքարկվող դատական ակտի և վճռաբեկ դատարանի որոշման հակասող մասերը և կատարել համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի և նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի իրավակարգավորումը՝ վճռաբեկ բողոքում հիմնավորում ներկայացնելու, համապատասխան դատական ակտը կցելու, հակասող մասերը մեջբերելու և համեմատական վերլուծություն կատարելու պահանջների մասով, ընդհանուր առմամբ, համադրելի է ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1293 որոշմամբ հետազոտված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համանման իրավակարգավորմանը:

Հետևաբար, հաշվի առնելով ՄԴՈ-1293 որոշմամբ քննության առարկա իրավակարգավորման և սույն գործով իրավակարգավորման՝ անձի վրա դրված պարտականությունների մասով բովանդակային համարժեքությունը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումները կիրառելի են նաև սույն գործով քննության առարկա իրավակարգավորման նկատմամբ:

Սահմանադրական դատարանը հիշյալ որոշման մեջ նշել է, որ «... օրենսդրի՝ վճռաբեկ բողոք ներկայացնելու դեպքում պատշաճ իրավական հիմնավորում ներկայացնելու պահանջն իրավաչափ է, քանզի այն

ներառում է այնպիսի բաղադրատարրեր, ինչպիսիք են բողոքարկվող դատական ակտի՝ վկայակոչվող դատական ակտին հակասող մասերը մեջբերելը, բողոքարկվող դատական ակտի և վկայակոչվող դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ համեմատական վերլուծություն կատարելը: Հիշյալ համատեքստում հիմնավորում ներկայացնելու իրավական պահանջն ինքնին չի արգելափակում անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման հնարավորությունը՝ հաշվի առնելով այն, որ նման պահանջով անձի վրա չի դրվում օբյեկտիվ իրականության մեջ առկա հնարավորությունների հաշվառմամբ անիրագործելի պարտականություն: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն չի հանգեցնում նաև իրավունքի էության խախտման»:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը գտնում է, որ բողոքարկվող դատական ակտի և նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ համեմատական վերլուծության պահանջն ինքնին իրավաչափ է:

Այլ է հարցը, թե որքանով է այդ պահանջն իրավակիրառ պրակտիկայում ընկալվում դրա սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան: Այս առումով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել նաև, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի իրավակարգավորման տրամաբանությունը՝ «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթի մասով, համադրելի է ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1322 որոշմամբ հետազոտված՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համանման իրավակարգավորման տրամաբանության հետ: Հետևաբար, Սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումները կիրառելի են նաև սույն գործով քննության առարկա իրավակարգավորման նկատմամբ: Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1322 որոշմամբ, մասնավորապես, արձանագրել է.

- «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ինքնին պետք է գնահատման առարկա դառնա իրավակիրառի կողմից, սակայն այդ գնահատումը պետք է իրացվի միայն հայեցողության իրավաչափության շրջանակներում՝ այնպես, որ այդպիսի գնահատումը հնարավորինս օրինական և արդարացի ընկալվի,

- հաշվի առնելով Եվրոպական դատարանի այն իրավական դիրքորոշումը, որ օրենքի կանխատեսելիության, որոշակիության և հստակության սկզբունքի երաշխավորումը, ի թիվս այլնի, կոչված է նաև կանխելու, բացառելու «կամայականության վտանգը» (Case of Hilda Hafsteinsdottir v. Iceland, application no.40905/98, 08.06.2004), ՀՀ սահմանադրական դատարանը

րանը գտնում է, որ «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթի կամայական մեկնաբանությունը գործնականում կարող է ստեղծել միննույն իրավիճակներում իրավունքի սուբյեկտների նկատմամբ տարբեր վերաբերմունքի դրսևորման վտանգ,

- «Կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակության իրավաչափ ընկալման համար կարևոր է, որ բողոքաբերի կողմից վկայակոչվող՝ վճռաբեկ դատարանի դատական ակտերը վերաբերելի լինեն, այսինքն, բողոքարկվող դատական ակտը և վճռաբեկ դատարանի վկայակոչվող դատական ակտը կամ ակտերն ունենան նույնանման փաստական հանգամանքներ: ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ նման պարագայում հակասող մասերի մեջբերում կատարելը և բողոքարկվող դատական ակտի ու նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ համեմատական վերլուծությունը՝ դրանց համադրման արդյունքում անհամապատասխանության փաստումը, ինքնին հանդես են գալիս որպես հիմնավորում առ այն, որ բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը, ըստ բողոքաբերի, հակասում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը: Իսկ իրական հակասության առկայությունը պարզելու և գնահատելու իրավական հնարավորությունը տվյալ դեպքում վճռաբեկ դատարանի բացառիկ իրավասության շրջանակներում է: Ուստի, անընդունելի է իրավակիրառ պրակտիկայում այս դրույթի այնպիսի ընկալումը, որի պարագայում ստացվում է, որ հակասող մասերի մեջբերում կատարելը և առկա հակասության վերաբերյալ համեմատական վերլուծությունն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմաններ են: Բողոքի հիմնավորվածության վերաբերյալ դատարանի բացարձակ հայեցողական գնահատականը կարող է իրական խոչընդոտ հանդիսանալ անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացման համար: Վեճի առարկա իրավանորմի՝ «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթն ինքնին վճռաբեկ բողոքի հիմնավորման պահանջի իրացումն է: Դիմումը քննության ընդունելու փուլում նման վերլուծության բնույթի ըստ էության գնահատմամբ չի կարող մերժվել՝ արգելափակելով դատարանի մատչելիությունը»:

11. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն վճռաբեկ բողոքը քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով ներկայացնելու դեպքում վճռաբեկ բողոք բերած անձը վճռաբեկ բողոքում

պետք է նշի այն նյութական կամ դատավարական իրավունքի նորմը, որը խախտվել է՝ հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա: Իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը որպես վճռաբեկ բողոքն ընդունելու պայման նշում է առերևույթ դատական սխալ թույլ տրված լինելու հանգամանքը, որ կարող էր ազդել գործի ելքի վրա:

Այս նորմերի համադրված վերլուծությունից բխում է, որ տվյալ հիմքով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար նախ անհրաժեշտ է նշել այն նյութական կամ դատավարական իրավունքի նորմը, որը խախտվել է: Իսկ վիճարկվող «... հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա» արտահայտության սահմանադրաիրավական բովանդակության իրավաչափ ընկալման համար կարևոր է մատնանշել նյութական կամ դատավարական իրավունքի խախտման իրավական համարժեք հիմքը (այդպիսիք, մասնավորապես, նախատեսված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածներում), կատարել վերաբերելի հանգամանքների և նշված իրավական հիմքի համադրություն՝ փաստելու այդ հիմքի առկայությունը, ցույց տալ պատճառահետևանքային կապը խախտման և գործի ելքի միջև, որը ենթադրում է նաև վերլուծություն առ այն, որ եթե չլիներ այդպիսի խախտում, ապա կկայացվեր այլ ելքով ակտ:

Հետևաբար, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ նման պարագայում **նյութական կամ դատավարական իրավունքի խախտման իրավական համարժեք հիմքը վկայակոչելը, վերաբերելի հանգամանքները և այդ իրավական հիմքը համադրելը՝ նպատակ ունենալով փաստելու այդ հիմքի առկայությունը, նյութական կամ դատավարական իրավունքի խախտման և գործի ելքի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը ներկայացնելը (այն ներառում է նաև վերլուծություն առ այն, որ եթե չլիներ այդպիսի խախտում, ապա կկայացվեր այլ ելքով ակտ) ինքնին հանդես են գալիս որպես հիմնավորում առ այն, որ խախտվել է նյութական կամ դատավարական իրավունքի նորմը, և որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա: Իսկ իրական հակասության առկայությունը պարզելու և գնահատելու իրավական հնարավորությունը տվյալ դեպքում վճռաբեկ դատարանի բացառիկ իրավասության շրջանակներում է:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ «... հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա» արտահայտությունը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ինքնին պետք է գնահատման առարկա դառնա իրավակիրառի կողմից, սակայն այդ գնահատումը պետք է իրացվի միայն հայեցողության իրավաչափության շրջանակներում՝ այնպես, որ այդպիսի գնահատումը հնարավորինս օրի-

նական և արդարացի ընկալվի: Հակառակ պարագայում, այդ արտահայտության կամայական մեկնաբանությունը գործնականում կարող է ստեղծել միևնույն իրավիճակներում իրավունքի սուբյեկտների նկատմամբ տարբեր վերաբերմունքի դրսևորման վտանգ:

12. ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2004 թվականի մայիսի 12-ի թիվ R(2004) 6 հանձնարարականի դրույթներին, որոնց համաձայն՝ ազգային դատական համակարգերի արդյունավետության խնդիրները պետք է դիտարկել, մասնավորապես, բողոքների ընդունման և քննության ընթացակարգերն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների ապահովման համատեքստում, ինչպես նաև ներպետական համակարգերում դատական բողոքները պետք է հանգամանալից ու հիմնավոր քննության առարկա դառնան:

Ընդհանրացնելով վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ անձի դատական պաշտպանության իրավունքի լիարժեք ապահովման և վճռաբեկ դատարանի մատչելիության երաշխավորման նպատակով անհրաժեշտ է վճռաբեկ բողոքի ընդունելիության հարցում խուսափել հայեցողության բացարձականացումից ու ավելորդ ձևականությունից և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորումները կիրառել վերը շարադրված իրավական դիրքորոշումներին համապատասխան:

Միաժամանակ, հաշվի առնելով ՀՀ դատական իշխանության համակարգում վճռաբեկ դատարանի՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված գործառնական տեղը և դերը, խնդրի առավել կանոնակարգված և կանխատեսելի լուծումը կարող էր իրականացվել նաև վճռաբեկ դատարանի կողմից՝ «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթի, «... հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա» արտահայտության ընկալման չափանիշների վերաբերյալ նախադեպային որոշման շրջանակներում: Նման պարագայում կհստակեցվեին նաև դատարանի հայեցողության սահմանները և դատարանի մատչելիության հարցում կերաշխավորվեր կանխատեսելիությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «դատարանի վճռով» եզրույթն այն մասով, որով չի ներառում «վեճը ենթակա չէ դատարանում քննության» հիմնավորմամբ գործի վարույթը կարճելու մասին դատարանի վճիռը, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի՝ «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ բողոքարկվող դատական ակտի և նույնաբնույթ փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ համեմատական վերլուծությունը կամ դրանց համադրման արդյունքում անհամապատասխանության փաստումն ինքնին հանդես է գալիս որպես հիմնավորում առ այն, որ բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը, ըստ բողոքաբերի, հակասում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցի լուծման փուլում նման վերլուծության բնույթի ըստ էության գնահատմամբ չի կարող վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել:

3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «... հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա» արտահայտությունը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտման իրավական համարժեք հիմքը վկայակոչելը, վերաբերելի հանգամանքները և այդ իրավական հիմքը համադրելը՝ նպատակ ունենալով փաստելու այդ հիմքի առկայությունը, նյութական կամ դատավարական իրավունքի խախտման և գործի ելքի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը ներկայացնելը (այն ներառում է նաև վերլուծություն առ այն, որ եթե չլինեք այդպիսի խախտում, ապա կկայացվեք այլ ելքով ակտ) ինքնին հանդես են գալիս որպես հիմնավորում առ այն, որ խախտվել է նյութական կամ դատավարական իրավունքի նորմը, և որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա դիմողների նկատմամբ կայացված վերջնական դատական ակտերը նոր հանգամանքների հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի՝ «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթը և ՀՀ քաղաքացիական

դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «... հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա» արտահայտությունը դիմողների նկատմամբ կիրառվել են սույն որոշման եզրափակիչ մասի երկրորդ և երրորդ կետերում բացահայտված սահմանադրախրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ:

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

27 դեկտեմբերի 2016 թվականի  
ՍԴՈ-1334





**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ  
ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐԻ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԱՏԱԿԱՐԱՐՎՈՂ ՌԱԶՄԱԿԱՆ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

24 հունվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին»

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 3(87)/2017  
97

Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների, դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի հոկտեմբերի 13-ին Երևանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ռազմատեխնիկական համագործակցության զարգացման մասին» պայմանագրի շրջանակներում մատակարարվող ռազմական նշանակության արտադրանքի առկայության և նպատակային օգտագործման նկատմամբ հսկողության իրականացման կարգի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2016 թվականի դեկտեմբերի 13-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը և պարզաբանումները, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ը Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ռազմատեխնիկական համագործակցության զարգացման մասին» պայմանագրի շրջանակներում մատակարարվող ռազմական նշանակության արտադրանքի առկայության և նպատակային օգտագործման նկատմամբ հսկողության իրականացման կարգի մասին համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2016 թվականի հոկտեմբերի 13-ին՝ Երևանում:

2. Համաձայնագիրը ստորագրվել է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև 2013 թվականի հունիսի 25-ի ռազմատեխնիկական համագործակցության զարգացման մասին պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում մատակարարվող ռազմական նշանակության արտադրանքի առկայության և նպատակային օգտագործման նկատմամբ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ Կողմեր) կողմից անհրաժեշտ հսկողության իրականացման նպատակով:

Համաձայնագիրը գործում է Պայմանագրի շրջանակներում մատակարարվող ռազմական նշանակության արտադրանքը Կողմերի կողմից օգտագործելու ամբողջ ժամանակահատվածի ընթացքում:

3. Ըստ Համաձայնագրի՝ Պայմանագրի շրջանակներում ռազմական նշանակության արտադրանք մատակարարող Կողմն իրավունք ունի դրա առկայության և նպատակային օգտագործման նկատմամբ հսկողություն իրականացնել, իսկ այն Կողմը, որի տարածք մատակարարվում է ռազմական նշանակության արտադրանքը, անհրաժեշտ պայմաններ է տրամադրում վերջինիս հսկողությունն իրականացնելու համար (1-ին հոդվ.):

4. Համաձայնագրի իրագործման համար Կողմերի լիազորված մարմիններն են՝ Հայկական կողմից՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, Ռուսական կողմից՝ ռազմատեխնիկական համագործակցության դաշնային ծառայությունը: Համաձայնագրի իրագործման համար Հայաստանի Հանրապետության լիազորված կազմակերպություններն են՝ պետական կառավարման հանրապետական այն մարմինները, որոնք իրենց կազմում ունեն գորքեր և զինվորական կազմավորումներ, ռազմական նշանակության արտադրանքի հետ կապված գործունեություն իրականացնելու հատուկ թույլտվություն (լիցենզիա) ունեցող, ինչպես նաև յուրահատուկ սպրանքների (աշխատանքների, ծառայությունների) նկատմամբ արտաքին առևտրային գործունեություն իրականացնելու իրավունքի վկայականներ ունեցող կազմակերպությունները (4-րդ հոդվ.):

5. Մատակարարող Կողմի լիազորված մարմնի ներկայացուցիչը և (կամ) լիազորված կազմակերպության ներկայացուցիչն իրավունք ունեն (ունի) ներկա գտնվելու սույն Պայմանագրի շրջանակներում կնքված կոնտրակտներով մատակարարվող ռազմական նշանակության արտադրանքի դուրսգրման, ոչնչացման (օգտահանության) ժամանակ (5-րդ հոդվ.):

6. Ըստ Համաձայնագրի՝ մատակարարող Կողմի լիազորված մարմինը հսկողության իրականացման նպատակով նախապես դիվանագիտական ուղիներով հսկողություն իրականացնելու մասին հայտ է ներկայացնում մյուս Կողմի լիազորված մարմնին, որում նշվում են հսկողություն իրականացնելու ենթակա ռազմական նշանակության արտադրանքը, դրա իրականացման ժամկետները և հսկողության ընթացքում օգտագործվող տեխնիկական միջոցները (6-րդ հոդվ.):

7. Համաձայնագրով նախատեսվում է հսկողությունն իրականացնել 2002 թվականի նոյեմբերի 5-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև զադտնի տեղեկատվության փոխադարձաբար պաշտպանության մասին» համաձայնագրի դրույթների հաշվառմամբ և պահպանելով այն Կողմի օրենսդրությամբ նախատեսված ռեժիմային պահանջները, որի տարածք

մատակարարվում է ռազմական նշանակության արտադրանքը: Հսկողության խմբի անդամները հսկողության իրականացման ժամանակահատվածում պարտավոր են պահպանել այն Կողմի օրենսդրությունը, որի տարածք մատակարարվում է ռազմական նշանակության արտադրանքը (9-րդ հոդվ.):

8. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության սկզբունքով, ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- տրամադրել անհրաժեշտ պայմաններ առաքող Կողմին ռազմական նշանակության արտադրանքի առկայության և նպատակային օգտագործման նկատմամբ հսկողություն իրականացնելու համար (1-ին հոդվ.),

- հսկողության նպատակով ձևավորել հսկողության խումբ՝ կազմված ՀՀ արտաքին գործերի և պաշտպանության նախարարությունների, լիազորված մարմնի և լիազորված կազմակերպության ներկայացուցիչներից (6-րդ հոդվ.),

- երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինը, ռազմական նշանակության արտադրանքը Հայաստանի Հանրապետության տարածք առաքելու պարագայում, չի հրաժարվի հսկողության խմբին ընդունելուց (7-րդ հոդվ., մաս 1),

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինը, ռազմական նշանակության արտադրանքը Հայաստանի Հանրապետության տարածք առաքելու պարագայում, հսկողություն իրականացնելու մասին հայտը ստանալուց հետո հսկողության իրականացման վայրը, ժամկետները և ընթացակարգերը համաձայնեցնի առաքող Կողմի լիազորված կազմակերպության հետ և դիվանագիտական ուղիներով առաքող Կողմի լիազորված մարմնին ուղարկի հսկողության իրականացման հնարավորության հաստատում (7-րդ հոդվ., մաս 2),

- ներկայացնել հայտում նշված ռազմական նշանակության արտադրանքը, ինչպես նաև դրա նպատակային օգտագործումը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը (8-րդ հոդվ.),

- Հայաստանի Հանրապետության հսկողության խմբի անդամների կողմից հսկողության իրականացման ժամանակահատվածում պահպանել մյուս Կողմի օրենսդրությունը, որի տարածք առաքվում է ռազմական նշանակության արտադրանքը (9-րդ հոդվ.),

- իր միջոցների հաշվին ֆինանսավորել հսկողության իրականացման հետ կապված ծախսերը, եթե առաքումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կողմից, իսկ հսկողության խմբի անդամների կեցության, սննդի, տրանսպորտային և միջազգային (միջքաղաքային) կապի միջոցների օգտագործման հետ կապված ծախսերի վճարումը հսկողու-

թյան իրականացման ընթացքում կատարել ստացող Կողմի ներքին գներով ներկայացված հաշիվների հիման վրա, (10-րդ հոդվ.) և այլն:

9. Ըստ Համաձայնագրի՝ հսկողության իրականացման արդյունքները ձևակերպվում են երկկողմանի ակտով, որտեղ նշվում են՝ հսկողության խմբի անհատական կազմը և այն Կողմի ներկայացուցիչների ցանկը, որի տարածք մատակարարվում է ռազմական նշանակության արտադրանքը, այն փաստաթղթերը, որոնց հիման վրա իրականացվում է հսկողություն, հսկողության օբյեկտները, իրականացման ժամկետները և արդյունքները:

Ակտը կազմվում է երկու հավասարազոր օրինակից, ստորագրվում է հսկողության խմբի անդամների կողմից և այն Կողմի լիազորված մարմնի ու լիազորված կազմակերպության ներկայացուցիչների կողմից, որի տարածք մատակարարվում է ռազմական նշանակության արտադրանքը (12-րդ հոդվ.):

Համաձայնագրով նախատեսվում է, որ առաքված ռազմական նշանակության արտադրանքի ոչ նպատակային օգտագործման կամ դրա բացակայության հաստատված և ակտի մեջ գրանցված փաստերը հիմք են հանդիսանում կոնտրակտների համապատասխան դրույթների կիրառման, ինչպես նաև նմանատիպ խախտումների կանխմանն ուղղված միջոցների մշակման վերաբերյալ Կողմերի լիազորված մարմինների կողմից խորհրդակցությունների և բանակցությունների անցկացման համար (13-րդ հոդվ.):

10. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն Համաձայնագրում հղում է կատարվում 2013 թվականի հունիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ռազմատեխնիկական համագործակցության զարգացման մասին» պայմանագրին, որը վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2013 թվականի դեկտեմբերի 4-ին՝ ԱԺՈ-098-Ն որոշմամբ, ինչպես նաև 2002 թվականի նոյեմբերի 5-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև գաղտնի տեղեկատվության փոխադարձաբար պաշտպանության մասին» համաձայնագրին, որը վավերացվել է ՀՀ Նախագահի 2003 թվականի հունվարի 9-ի ՆՀ-1255-Ն հրամանագրով և ուժի մեջ է մտել 2003 թվականի հունիսի 23-ից:

Ընդ որում, քննության առարկա Համաձայնագրի կնքումը բխում է հատկապես «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև 2013 թվականի հունիսի 25-ին կնքված՝ «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ռազմատեխնիկական համագործակցության զարգացման մասին» պայմանագրի 9-րդ հոդվածի պահանջներից, համաձայն որի.

«...Պայմանագրի շրջանակներում ռազմական նշանակության արտադրանք մատակարարող Կողմն իրավունք ունի վերջինիս առկայության և նպատակային օգտագործման նկատմամբ հսկողություն իրականացնելու, որի կարգը Կողմերը կսահմանեն լրացուցիչ համաձայնագրով:

Այն Կողմը, որին սույն Պայմանագրի շրջանակներում մատակարարվել է ռազմական նշանակության արտադրանք, այդ արտադրանքը մատակարարող Կողմի համար ապահովում է անհրաժեշտ պայմաններ՝ ռազմական նշանակության արտադրանքի առկայության և նպատակային օգտագործման նկատմամբ հսկողություն իրականացնելու համար»:

11. Վաճառվող զենքի **նպատակային օգտագործման** նկատմամբ հսկողություն իրականացնելու ինստիտուտի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերջինս բխում է ՄԱԿ-ի շրջանակներում ընդունված մի շարք իրավական ակտերում (1991թ. դեկտեմբերի 6-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված 46/36H հոչակագրում, «Ձենքի միջազգային առևտրի մասին» ՄԱԿ-ի 2013թ. պայմանագրում, 2000 թվականին Նորբեյյան խաղաղության մրցանակակիրների կողմից առաջարկված և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված՝ «Ձենքի մատակարարման վարքագծի միջազգային օրենսգիրք» վերստառությամբ փաստաթղթում) ամրագրված հիմնարար սկզբունքների պահպանման անհրաժեշտությունից, ինչի դեպքում միայն պետությունները պետք է իրականացնեն զենքի վաճառքի գործարքները:

Միաժամանակ, միջազգային իրավունքում ամրագրված սկզբունքների վերլուծությունը վկայում է, որ վաճառող պետության կողմից **վաճառված զենքի նպատակային օգտագործման նկատմամբ հսկողության իրականացումը պետք է հետապնդի հետևյալ նպատակները.**

ա/ զերծ մնալ զենքի վաճառքից, եթե.

- նման վաճառքը կիսախտի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից սահմանված և պետության կողմից ստանձնված պարտավորությունները, մասնավորապես զենքի էմբարգոները,

- նման վաճառքը կիսախտի միջազգային համաձայնագրերով պետության կողմից ստանձնված այն պարտավորությունները, որոնք, մասնավորապես, վերաբերում են սովորական սպառազինության փոխանցմանը կամ դրա անօրինական շրջանառության կանխմանը,

- վաճառքի մասին որոշում կայացնելու պահին վաճառող պետությունը հավաստի տեղեկացված է, որ այդ զենքը կամ ռազմամթերքն օգտագործվելու է ցեղասպանության ակտ, մարդկության դեմ կատարվող հանցագործություն, 1949թ. Ժնևյան կոնվենցիաների լրջագույն խախտումներ, քաղաքացիական օբյեկտների կամ քաղաքացիական բնակչության

վրա /որոնք որպես այդպիսիք պաշտպանության տակ են/ հարձակվելու կամ միջազգային համաձայնագրերով սահմանված այլ ռազմական հանցագործություններ կատարելու նպատակով,

բ/ եթե բացակայում են զենքի վաճառքի համար խոչընդոտ հանդիսացող վերոհիշյալ հանգամանքները՝ ղեկավարվելով վաճառող պետության հսկողական ազգային համակարգով, օբյեկտիվ և անխտրական կերպով գնահատել հավանականությունը, թե արդյոք ք զենքը և զինամթերքը՝

- կնպաստի խաղաղությանը և անվտանգությանը, թե՛ կվնասի դրանց,

- կարող է օգտագործվել հումանիտար իրավունքի խախտմանն ուղղված հանցագործության կատարմանը կամ դրա աջակցմանը, մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավունքի նորմերի լրջագույն խախտմանը կամ դրա աջակցմանը, միջազգային կոնվենցիաներով կամ ահաբեկչության մասին, ինչպես նաև անդրազգային հանցագործությունների մասին արձանագրություններով հանցագործություն համարվող գործողությունների կատարմանը կամ դրանց աջակցմանը:

Քննության առարկա Համաձայնագրի շրջանակներում, քանի որ այլ պարզաբանումներ առկա չեն, Սահմանադրական դատարանը Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների սահմանադրականությունը՝ **«նպատակային օգտագործման նկատմամբ հսկողություն»** դրույթի առնչությամբ, դիտարկում է միջազգային իրավունքի վերոնշյալ սկզբունքների համատեքստում:

12. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ քննության առարկա Համաձայնագրում «մատակարարող կողմ» հասկացությունը վերաբերելի է առևտրական գործարքի արդյունք հանդիսացող ռազմական նշանակության արտադրանքի «վաճառող կողմ», «առաքող կողմ», իսկ «մատակարարվում է», «մատակարարված», «մատակարարվող» հասկացությունները վերաբերելի են «առաքվում է», «առաքված», «առաքվող» հասկացություններին: Հասկացության այս մոտեցումն է առկա նաև քննության առարկա Համաձայնագրի ռուսերեն տարբերակում:

Ելնելով գործի քննության արդյունքներից, հիմք ընդունելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2016 թվականի հոկտեմբերի 13-ին Երևանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ռազմատեխնիկական համագործակցության զարգացման մասին» պայմանագրի շրջանակներում մատակարարվող ռազմական նշանակության արտադրանքի առկայության և նպատակային օգտագործման նկատմամբ հսկողության իրականացման կարգի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

24 հունվարի 2017 թվականի  
ՍԴՈ-1335





**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2016  
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ՓԱՐԻԶՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ  
ՄԻՋԵՎ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ  
ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ» 2013 ԹՎԱԿԱՆԻ  
ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ  
ԿԻՐԱՐԿՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

24 հունվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության միզրացիոն պետական ծառայության պետ Գ. Եզանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆ 3(87)/2017 105

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև 2016 թվականի հոկտեմբերի 27-ին Փարիզում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում ստորագրված համաձայնագրի կիրարկող արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2016 թվականի դեկտեմբերի 19-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում ստորագրված համաձայնագրի կիրարկող արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2016 թվականի հոկտեմբերի 27-ին՝ Փարիզում:

Արձանագրությունը բաղկացած է ներածությունից, 14 հոդվածներից և հավելվածից:

2. Արձանագրության նպատակն է Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության միջև գոյություն ունեցող հարաբերությունների շրջանակներում դյուրացնել «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում ստորագրված և 2014 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) իրագործումը:

Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի նոյեմբերի 11-ի ԱԺՈ-091-Ն որոշմամբ (ՄԴՈ-1113):

3. Արձանագրությամբ սահմանվում են՝ ա) Համաձայնագրի կիրարկման համար իրավասու մարմինները՝ հետընդունման դիմումներ ներկայացնելու, ստանալու և դրանց ընթացք տալու, վերադարձի վկայական տրամադրելու և հարցազրույց կազմակերպելու, տարանցման դիմումներ ընդունելու և դրանց ընթացք տալու, սույն Արձանագրության մեկնաբանության հետ կապված դժվարությունները կարգավորելու նպատակով (1-ին հոդվ.), բ) սահմանային անցակետերը (2-րդ հոդվ., 2.1 կետ), գ) երրորդ երկրների քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունման համար առերևույթ ապացույցի լրացուցիչ փաստաթղթերը (4-րդ հոդվ.), դ) հարցազրույցների կազմակերպման կարգը (5-րդ հոդվ.), ե) հետընդունման արագացված ընթացակարգը (6-րդ հոդվ.), զ) ուղեկցությամբ վերադարձի պայմանները (9-րդ հոդվ.) և այլն:

4. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների միջոցով դիվանագիտական ուղիներով մյուս Կողմի իրավասու մարմիններն անհապաղ տեղեկացվեն սահմանային անցակետերին վերաբերող ցանկացած փոփոխության մասին (2-րդ հոդվ., 2.2 կետ),

- ապահովել, որպեսզի Հայցող ՀՀ իրավասու մարմինն էլեկտրոնային կամ ցանկացած այլ ժամանակակից տեխնիկական միջոցով Հայցվող ֆրանսիական կողմի իրավասու մարմինն ներկայացնի Համաձայնագրի 8-րդ հոդվածի համաձայն կազմված հետընդունման դիմումը՝ օգտագործելով Համաձայնագրի 5-րդ հավելվածին կցված ձևաթուղթը (3-րդ հոդվ., 3.1 կետ),

- ապահովել, որպեսզի Համաձայնագրի 11-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Հայցվող ՀՀ իրավասու մարմինը հետընդունման դիմումի վերաբերյալ իր պատասխանն էլեկտրոնային կամ ցանկացած այլ ժամանակակից տեխնիկական միջոցով հաղորդի Հայցող ֆրանսիական կողմի իրավասու մարմինն 12 օրացուցային օրվա ընթացքում, ինչպես նաև ապահովել, որպեսզի Հայցվող ֆրանսիական կողմի դրական պատասխանի դեպքում Արձանագրության 1-ին հոդվածի 1.3-րդ կետում նշված իրավասու մարմինն անմիջապես և ամենաուշը 3 աշխատանքային օրվա ընթացքում անվճար տրամադրի վերադարձի վկայական (3-րդ հոդվ., 3.2 կետ),

- ապահովել, որպեսզի ըստ Համաձայնագրի 9-րդ հոդվածի 3-րդ կետի՝ եթե Համաձայնագրի 1-ին և 2-րդ հավելվածներում կամ Արձանագրության 3 և 4-րդ հոդվածներում թվարկված փաստաթղթերից ոչ մեկը չի կարող ներկայացվել, կամ դրանց իսկությունը կասկածի տակ է, Հայցող ՀՀ իրավասու մարմինները հետընդունման ենթակա անձի քաղաքացիությունը

հաստատելու համար, այդ մասին նշելով Համաձայնագրի 5-րդ հավելվածում նշված հետընդունման դիմումի մեջ, խնդրեն հարցազրույցի կազմակերպում Հայցվող ֆրանսիական կողմի դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններից դիմումն ստանալուց հետո ամենաուշը 5 աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաև ապահովել, որպեսզի հարցազրույցի արդյունքում համապատասխան անձի քաղաքացիության հաստատման դեպքում Հայցվող ՀՀ կողմի դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններն անմիջապես և ամենաուշը 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրեն վերադարձի վկայական, իսկ անձի քաղաքացիությունը չհաստատվելու դեպքում հարցազրույցի արդյունքը հարցազրույցի գրավոր արձանագրության ձևով, հետընդունման դիմումի հետ միասին ամենաուշը 3 աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել Հայցող ֆրանսիական կողմին (5-րդ հոդվ., 5.1, 5.3 և 5.4 կետեր),

- Ֆրանսիայի Հանրապետության տարածքից անմիջականորեն ժամանող օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության մերձսահմանային շրջանում սահմանն անօրինական հատելուց հետո Համաձայնագրի 1-ին հոդվածում սահմանված ձևով արգելանքի վերցնելու դեպքում, որպես Հայցող կողմ արագացված ընթացակարգով հետընդունման դիմումը ներկայացնել Հայցվող ֆրանսիական կողմի իրավասու մարմիններին, համապատասխան անձին արգելանքի վերցնելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում՝ էլեկտրոնային կամ ցանկացած այլ ժամանակակից տեխնիկական միջոցով (6-րդ հոդվ., 6.2 կետ),

- Երրորդ երկրի քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի տարանցման դիմումը Հայցող ՀՀ իրավասու մարմնի կողմից նախատեսված տարանցումից ոչ ուշ, քան 48 ժամ առաջ՝ էլեկտրոնային կամ ցանկացած այլ ժամանակակից տեխնիկական միջոցով փոխանցել Հայցվող ֆրանսիական կողմի իրավասու մարմնին, ինչպես նաև երրորդ երկրի քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի տարանցման Հայցող ֆրանսիական կողմի իրավասու մարմնի դիմումին Հայցվող ՀՀ իրավասու մարմնի միջոցով պատասխանել նախատեսված տարանցումից ոչ ուշ, քան 24 ժամ առաջ (8-րդ հոդվ., 8.2 կետ) և այլն:

5. Սույն Արձանագրությունը չի ազդում Կողմերի՝ միջազգային այլ պայմանագրերից բխող իրավունքների, պարտավորությունների և պարտականությունների վրա (12-րդ հոդվ.):

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմա-

նադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև 2016 թվականի հոկտեմբերի 27-ին Փարիզում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում ստորագրված համաձայնագրի կիրարկող արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

24 հունվարի 2017 թվականի  
ՄԴՈ-1336



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2016 թվապսակի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ՓԱՐԻԶՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ  
ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

24 հունվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայության պետ Գ. Եգանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դրնրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի հոկտեմբերի 27ին Փարիզում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 3(87)2017

միջև միգրացիոն գործընկերության վերաբերյալ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2016 թվականի դեկտեմբերի 19-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. Քննության առարկա համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2016թ. հոկտեմբերի 27-ին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև:

Համաձայնագրի նպատակն է զարգացնել Հայաստանի և Ֆրանսիայի միջև համագործակցությունը և գործընկերությունը միգրացիայի բնագավառում՝ հիմք ընդունելով կողմերի ազգային օրենսդրությունը և ստանձնած միջազգային համապատասխան պարտավորությունները:

2. Համաձայնագրի համաձայն Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները.

- տրամադրել հարյուր ութսունից (180) մինչև երկու հարյուր յոթանասուն (270) օր ժամկետով ժամանակավոր կացության քարտ ֆրանսիացի ուսանողներին, ովքեր ցանկանում են մեկնել Հայաստան՝ այստեղ գտնվող ձեռնարկությունում կամ հայկական կառույցում կամ ընկերությունում երեքից մինչև առավելագույնը ինն ամիս ժամկետով գործնական պրակտիկա անցնելու նպատակով (հոդված 2, կետ 2.2),

- զարգացնել կողմերի միջև 18-ից 35 տարեկան հայ կամ ֆրանսիացի երիտասարդ մասնագետների փոխանակումներ, ովքեր մուտք են գործում աշխատաշուկա կամ արդեն իսկ ունեն որոշակի մասնագիտական փորձառություն (հոդված 3, կետ 3.1),

- տրամադրել ֆրանսիացի երիտասարդ մասնագետներին տասներկու (12) ամիսը չգերազանցող վավերականության ժամկետով ժամանակավոր կացության քարտ, և երկարաձգել այդ ժամկետը աշխատանքային պայմանագրի երկարաձգմանը համապատասխանող ժամկետով՝ չգերազանցելով կացության քանչորս (24) ամիս առավելագույն ժամկետը (հոդված 3, կետ 3.4),

- ձեռնարկել միջոցներ, որոնք կապահովեն երիտասարդ մասնագետների՝ իրենց ծագման երկրներ վերադարձի արդյունավետությունը (հոդված 3, կետ 3.4),

- բարձր որակավորում ունեցող ֆրանսիացի մասնագետներին ՀՀ տարածք մուտք գործելուց հարյուր ութսուն (180) օրը լրանալուց հետո տրամադրել ժամանակավոր կացության քարտ՝ մեկ տարի ժամկետով և այնքան անգամ երկարաձգելու հնարավորությամբ, որքան անհրաժեշտ է աշխատանքային պայմանագրի տևողությունից ելնելով (հոդված 4, կետ 4.3),

- ֆրանսիացի մասնագետի ամուսնուն և երեխաներին տրամադրել նույն կացության քարտը, ինչը տրամադրվել է որակավորում ունեցող մասնագետին (հոդված 4, կետ 4.4),

- Համաձայնագրի 2-րդ, 3-րդ և 4-րդ հոդվածներում նշված անձանց, ում թույլատրվել է բնակվել ՀՀ տարածքում, հնարավորինս սեղմ ժամկետներում տրամադրել ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված մուտքի արտոնագիր և կացության քարտ, և հնարավորինս արագ կարգավորել ի հայտ եկող դժվարությունները (հոդված 5, կետ 5.1),

- ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ուղղված Հայաստանի Հանրապետությունում այն հայ ուսանողներին և մասնագետներին (բացառությամբ Համաձայնագրում նշված որակավորված մասնագետների) սոցիալական և տնտեսական վերաինտեգրման հնարավորություն ընձեռելուն, ովքեր Ֆրանսիայում հաստատվել են օրինական ձևով և իրենց մասնագիտական փորձառությունը Ֆրանսիայում ավարտելով՝ կամավոր վերադառնում են Հայաստան, ինչպես նաև Ֆրանսիայում անօրինական գտնվող Հայաստանի այն քաղաքացիներին, ովքեր կարող են օգտվել կամավոր վերադարձի ֆրանսիական օգնության գոյություն ունեցող համակարգից և ներկայացնել Հայաստանում իրենց վերաինտեգրմանն աջակցելու ծրագիր (հոդված 6, կետ 6.1),

- ձեռնարկել կոնկրետ միջոցներ և ցուցաբերել նախաձեռնություն անօրինական ներգաղթը կանխարգելելու կամ դրա դեմ պայքարելու հարցերում, մասնավորապես, զարգացնել տեխնիկական համագործակցությունը, ամրապնդել օպերատիվ տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաև խրախուսել անօրինական ներգաղթի դեմ պայքարի ոլորտում կիրառվող լավագույն փորձը (հոդված 7, կետ 7.1),

- պայքարել գործունեություն ծավալող հանցավոր խմբավորումների ցանցերի դեմ՝ անդրասահմանային անօրինական փոխադրումների վերաբերյալ ռիսկերի վերլուծությունների և տեղեկությունների փոխանակման, ինչպես նաև հանցավոր խմբավորումների ցանցերի կապակցությամբ օպերատիվ բնույթի տվյալների փոխանակման միջոցով (հոդված 7, կետ 7.1),

- պայքարել փաստաթղթերի կեղծարարության դեմ՝ վերծանող սարքերի շնորհիվ հայտնաբերված կեղծ և կասկածելի ճամփորդական փաստաթղթերի վերաբերյալ տեղեկությունների փոխանակման միջոցով,



կանխելու համար կեղծած փաստաթղթերի օգտագործումը, ինչպես նաև հայտնաբերող սարքերի մասին միմյանց խորհրդատվություն տրամադրելու միջոցով (հոդված 7, կետ 7.1),

- պայքարել անհիմն բժշկական պատճառաբանությամբ կացության իրավունք ստանալու դեպքերի դեմ՝ տեղեկությունների փոխանակման միջոցով (հոդված 7, կետ 7.1),

- ստեղծել Համաձայնագրի կիրառումը վերահսկող համատեղ Կոմիտե (հոդված 8):

3. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում յուրաքանչյուր Կողմի կողմից այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն ավարտելու մասին դիվանագիտական ուղիներով փոխանցված վերջին ծանուցման ամսաթվին հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրվանից:

4. Մահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են ՀՀ Մահմանադրությամբ պետության առջև դրված սահմանադրաիրավական խնդիրներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Մահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Մահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2016 թվականի հոկտեմբերի 27ին Փարիզում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև միգրացիոն գործընկերության վերաբերյալ համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Մահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Մահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

24 հունվարի 2017 թվականի  
ՍԴՈ-1337



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ԲՈՒՐԱԲԱՅՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ ԵՎ  
ՎԵՐԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

24 հունվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ Հ. Մխիթարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց <<2015 թվականի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 3(87)2017

հոկտեմբերի 16-ին Բուրաբայում ստորագրված՝ Արտակարգ իրավիճակների կանխման և վերացման բնագավառում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ>> գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 19 դեկտեմբերի 2016թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**:

1. Արտակարգ իրավիճակների կանխման և վերացման բնագավառում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին համաձայնագիրն (Համաձայնագիր) ստորագրվել է 2015 թվականի հոկտեմբերի 16-ին Բուրաբայում՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների բարօրության ու անվտանգության նկատառումներով արտակարգ իրավիճակների կանխման և վերացման բնագավառում համագործակցության նպատակով:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- որպես հայցվող Կողմ հանդես գալու պարագայում՝ կարճ ժամկետում ուսումնասիրել հայցող Կողմի դիմումը և տեղեկացնել նրան տրամադրվող օգնության տեսակների և ծավալի, ինչպես նաև տրամադրվող օգնության պայմանների մասին, իսկ օգնություն ցուցաբերելու անհնարինության դեպքում՝ այդ մասին տեղեկությունն անհապաղ ուղարկել հայցող Կողմին (հոդված 5, կետ 2),

- ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու ՀՀ տարածքում առաջացած արտակարգ իրավիճակի տեղափոխումն այլ Կողմերի տարածքներ, իսկ այդպիսի տարածման սպառնալիքի առկայության և սեփական ուժերով դրա կանխման անհնարինության դեպքում այդ մասին տեղեկացնել այլ շահագրգիռ Կողմերին (հոդված 5, կետ 3),

- որպես հայցող Կողմ հանդես գալու պարագայում՝ տեղեկացնել օգնություն ցուցաբերող կազմավորման ղեկավարին արտակարգ իրավիճակի գոտու աշխատանքների կոնկրետ տեղամասերում ստեղծված

իրադրության մասին և անհրաժեշտության դեպքում անվարձահատույց հիմունքներով ապահովել օգնություն ցուցաբերող կազմավորմանը թարգմանիչներով, կապի միջոցներով, տրանսպորտով, ապահովել անվտանգությունը և կազմակերպել բժշկական օգնության տրամադրում (հոդված 6, կետ 2),

- որպես հայցվող Կողմ հանդես գալու պարագայում՝ ապահովել, որպեսզի օգնություն ցուցաբերող կազմավորման սարքավորումները լինեն բավարար արտակարգ իրավիճակի գոտում ոչ պակաս, քան 72 ժամ վթարափրկարարական և այլ տեսակի աշխատանքներ ինքնուրույն կատարելու համար, իսկ որպես հայցող Կողմ հանդես գալու պարագայում՝ պաշարների սպառման դեպքում օգնություն տրամադրող կազմավորմանն ապահովել անհրաժեշտ միջոցներով՝ իր աշխատանքները շարունակելու համար, եթե Կողմերը լրացուցիչ այլ բան չեն պայմանավորվել (հոդված 6, կետ 3),

- երաշխավորել, որ սարքավորումների և ապահովման նյութերի տեղափոխումը ՀՀ պետական (մաքսային) սահմաններով, այդ թվում՝ տարանցումը ՀՀ տարածքով, կատարվի առաջնահերթ (նախապատվության) կարգով՝ առանց մաքսատուրքերի, գանձումների, հարկերի վճարման, ինչպես նաև՝ առանց նման վճարում ապահովելու և ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման՝ պայմանով, որ Կողմերը կատարել են ոչ սակագնային կարգավորման միջոցների ներդաշնակեցում, ինչպես նաև, եթե մաքսային մարմիններին տրամադրված է տրամադրող Կողմի կողմից հաստատված սարքավորումների և ապահովման նյութերի ցանկը՝ հաստատումով, որ նշված սարքավորումներն ու ապահովման նյութերը տեղափոխվում են արտակարգ իրավիճակների կանխման և/կամ վերացման և օգնություն ցուցաբերող կազմավորման կենսաապահովման նպատակով (հոդված 8, կետ 1),

- երաշխավորել, որ սարքավորումների և ապահովման նյութերի մաքսային ձևակերպումը կատարվի առաջնահերթության (նախապատվության) կարգով (հոդված 8, կետ 2):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2015 թվականի հոկտեմբերի 16-ին Բուրաբայում ստորագրված՝ Արտակարգ իրավիճակների կանխման և վերացման բնագավառում Ան-

կախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

24 հունվարի 2017 թվականի  
ՍԴՈ-1338

## ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԻՐՔ



ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 3(87)2017

«Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոնի հոգաբարձուների խորհրդի նախագահ, պրոֆեսոր Գ. Հարությունյանի նախաձեռնությամբ եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի օրհնությամբ հեղինակային կոլեկտիվը հրատարակման է նախապատրաստում «Սահմանադրական մշակույթի արժեքանական ակունքները քրիստոնեությունն առաջինը պետական կրոն ընդունած ժողովրդի հազարամյա տարեգրության ծալքերում» երկհատորյակը:

Աշխատանքի նախապատրաստմանը ներգրավված են աշխարհիկ եւ հոգեւոր տարբեր մասնագետներ, որոնց հերթական աշխատանքային հանդիպումը տեղի ունեցավ **2017թ. հունիսի 21-ին**:

Հեղինակային խմբի եւ խմբագրակազմի աշխատանքները համակարգում է պրոֆեսոր Գ. Հարությունյանը: Խմբագրակազմում ընդգրկված են Երեւանի պետական համալսարանի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ Արթուր Վաղարշյանը, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Արտակ Մովսիսյանը, Վեհափառ Հայրապետի ներկայացուցիչ Շահե ծայրագույն վարդապետ Անանյանը:

Երկհատորյակի տարբեր բաժինների թեմաներ են ներկայացնելու՝ Արտակ Մովսիսյանը, Ազատ Բոգոյանը, Ալեքսան Հակոբյանը, Աշոտ Ոսկանյանը, Արման Եղիազարյանը, Գագիկ Հարությունյանը, Գեղամ Բաղալյանը, Գրիգոր Թանանյանը, Հայրապետ Մարգարյանը, Նարինե

Միրզոյանը:

Այս ծավալուն աշխատությունն ընդգրկելու է հայկական հնագույն թագավորություններից /Արատտայից-Ուրարտու/ մինչև մեր ժամանակների հանրային հարաբերությունների զարգացման տարբեր ծայքերն ու Աշխարհաժողովների եւ ապա՝ Ազգային-եկեղեցական ժողովների հրավիրման անհրաժեշտությունը, կազմակերպման առանձնահատկությունները, ընդունված կանոնական սահմանադրությունների իրավագիտական դերն ու նշանակությունը: Համակողմանի համեմատական վերլուծության շրջանակներում ներկայացվելու են Վաղարշապատի, Աշտիշատի, Շահապիվանի, Դվինի, Կարնո, Աղվենքի, Պարտավի, Մանազկերտի, Շիրակավանի, Անիի, Հարքի, Լոռու, Չագավանի, Շուղրիի, Հռոմկլայի, Տարսոնի, Սիսի, Ադանայի ազգային-եկեղեցական ժողովները, «Կանոնագիրք հայոց»-ը, Սահակ Պարթևի, Դավիթ Ալավկաորդու, Ներսես Շնորհալու, Մխիթար Գոշի, Սմբատ Սպարապետի իրավագիտական ժառանգությունը, Լեհահայոց եւ Աստրախանի հայոց դատաստանագրքերը, Շահամիրյանների «Որոգայթ փառաց»-ը, Արեւմտահայոց ազգային Սահմանադրությունը:



Երկհատորյակը թարգմանաբար ներկայացվելու է նաև անգլերենով՝ միջազգային լայն հանրությանը հաղորդակից դարձնելով հայ իրավական ու սահմանադրական մշակույթի ձեւավորման ու զարգացման ողջ տարեգրությանը:

Աշխատությունը տպագրության կներկայացվի 2018 թվականի գարնանը:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ



**Հուլիսի 4-ին** ՀՀ սահմանադրական դատարանում աշխատանքային հանդիպում ունեցան ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը եւ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Ա. Թաթոյանը:

Հանդիպման ընթացքում քննության առարկա դարձան ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 75-80 հոդվածների՝ թե՛ գործող օրենսդրության մեջ, թե՛ իրավակիրառ պրակտիկայում ապահովման հետ կապված հիմնախնդիրներն ու դրանց հաղթահարման հնարավոր մոտեցումները:

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ ԵՎԻՐՎԱԾ

**Հուլիսի 4-ին** Սահմանադրական դատարանում բացվեց գեղանկարիչ Ռուդիկ Պետրոսյանի կտավների ցուցահանդեսը: Այն նվիրված էր ՀՀ Սահմանադրության օրվան:

Սահմանադրական դատարանի նախագահ, ցուցահանդեսի կազմակերպման նախաձեռնող Գ. Հարությունյանը «Սահմանադրություն եւ մշակույթ» բնորոշ վերտառությունը տվեց այս միջոցառմանը, որի գաղափարը ծնվել էր պետական գործչի եւ գեղանկարչի մտերմության արդյունքում, եւ առիթն էլ Ստրասբուրգում Գ. Հարությունյանի «Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը եւ ժամանակի մարտահրավերները»

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3(87)2017



մենագրության անգլերեն լեզվով հրատարակության գրքի շնորհանդեսն էր, որին մասնակցող Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թ. Յագլանդը հետևյալ ձևակերպումն արեց. «Սահմանադրական մշակույթը հայկական բրենդ է դառնում»:



Եվ ահա Ռուդիկ Պետրոսյանը կերտեց «ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՆՈՒՆՐԸ» եռանկարը, որն այսօրվա ցուցահանդեսում առանձնակի տեղ էր զբաղեցնում:

Եռանկարի աջ կողմում Գրիգոր Լուսավորիչն է եւ Տրդատ թագավորը: Նրանք ապագային սեւեռված հայացքով խորհրդանշում են Հայաստանում քրիստոնեության՝ որպես պետական կրոն ընդունելու խորհուրդը եւ հայ ժողովրդի արժեհամակարգային կողմնորոշումը: Կենտրոնում 365 թվականի Աշտիշատի ժողովի վերացարկված ընկալմամբ պատկերումն է, որտեղ բացառիկ վարպետությամբ ներկայացված են. ա/ժողովուրդը՝ ինքնաճանաչման եւ սահմանադրորեն ապրելու հաստատակամությամբ, բ/արդարադատության խորհրդանիշի ներդաշնակությունը հանրային տրամադրությանը, գ/ստեղծված հանրային մթնոլորտում իմաստունների ձեռամբ Սահմանադրության արարումը: Այս բոլորն ամփոփում են «սահմանադրություն» հասկացության վերաբերյալ 1837 թվականին Վենետիկում հրատարակված՝ Նոր բառգիրք հայկազյան լեզվի եզակի բնորոշումը. «Որոշումն սահմանաց եւ Տեսչութիւն վերին»: Չախ կողմում Պատմահայր Մովսես Խորենացին է, ով բացառիկ գնահատական է տվել Աշտիշատի ժողովի ընդունած Կանոնական սահմանադրությանը՝ «կանոնական սահմանադրութեամբ հաստատեաց զողորմածութիւն», ինչը մագաղաթի վրա ներկայացնում են հրեշտակները:

Ցուցահանդեսում Ռուդիկ Պետրոսյանի մոտ երեսուն կտավների շարքում ներկայացված էին նաև նրա դստեր՝ նկարչուհի Մերի Պետրոսյանի կտավներից:



Արարողության մասնակիցներին ներկայացվեց նաև ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանի եւ Երեւանի պետական համալսարանի պրոֆեսորներ Հ. Սարգսյանի, Ռ. Գեւորգյանի հեղինակած «Սահմանադրականություն. ախտորոշման, մշտադիտարկման եւ կառավարման խնդիրներ» նոր լույս տեսած գիրքը:

### ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ

**Հուլիսի 4-ին** ՀՀ սահմանադրական դատարանում տեղի ունեցավ ՀՀ Նախագահին առնթեր սահմանադրական բարեփոխումների իրավական ապահովմանն աջակցող մասնագիտական խորհրդակցական խորհրդի հերթական նիստը:

Խորհրդի քննարկման առարկա դարձան «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի նախագծի նախապատրաստման հետ կապված մի շարք հարցեր, ինչպես նաև սահմանադրական փոփոխությունների կատարման արդյունքում ընդունման, փոփոխման կամ լրացման ենթակա օրենքների, նախագծերի մշակման ընթացքի վերաբերյալ ՀՀ Նախագահի 2016 թվականի փետրվարի 10-ի թիվ 170 Ա հրամանագրով եւ ՀՀ կառավարության 10. 03. 2016 թվականի թիվ 245 Ա, 06. 04. 2016 թվականի թիվ 359 որոշումների համաձայն, 2015 թվականի սահմանա-

դրական փոփոխություններից հետո ընդունման, փոփոխման կամ լրացման ենթակա օրենքների մշակման ընթացքի վերաբերյալ հարցեր: Բացի այդ, քննարկվեցին ՀՀ արդարադատության նախարարի ներկայացրած եւ խորհրդատվական եզրակացություն պահանջող մի շարք հարցադրումների հետ կապված հարցեր:

Խորհուրդը դրանց վերաբերյալ ընդունեց համապատասխան եզրակացություններ:

## **«ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ**

**Հուլիսի 6-ին**, ՀՀ Նախագահին առընթեր Սահմանադրական բարեփոխումների աջակցման խորհրդում «ՀՀ Սահմանադրական դատարանի մասին» օրենքի նախագծի քննարկումից առաջ, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ արդարադատության նախարարության, Ազգային ժողովի պետական-իրավական եւ մարդու իրավունքների պաշտպանության հարցերի հանձնաժողովի հետ, Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ, Սահմանադրական դատարանում սկսվեց նախագծի աշխատանքային քննարկում:



Նախագծի հետագա քննարկումների ընթացքում, անշուշտ, հաշվի կառնվեն նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի գործող օրենքի հիման վրա եղած վերջին տարիների հարուստ փորձը, նաեւ ՄԴ անդամների նոր առաջարկությունները: Գերագույն նպատակն է ունենալ առավել

կատարյալ նախագիծ:

Հատուկ այս ծրագրի քննարկմանը մասնակցելու համար հրավիրված էր Լայպցիգի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի պետական եւ վարչական իրավունքի պրոֆեսոր, Սաքսոնիայի սահմանադրական դատարանի դատավոր, դոկտոր **Քրիստոֆ Դեզենհարթը**: Նա ներկայացրեց «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ իր դիտարկումները:



Քննարկումներն ընթացան կարծիքների փոխանակմամբ եւ հարց ու պատասխաններով:

Հուլիսի 7-ին ՄԴ աշխատակազմի համար կայացան սեմինար, ուր, պարոն **Քրիստոֆ Դեզենհարթի** մասնակցությամբ, քննարկվեցին Սահմանադրական դատարանում դիմումների ընդունման, քննության, որոշումների կատարման ապահովման, նոր իրավասությունների իրացման եւ շատ այլ առանձնահատկությունների վերաբերյալ հարցեր:

### ՄԵՄԻՆԱՐ ԳԵՐՄԱՆԱՑԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՀՀ սահմանադրական դատարանի ու «Հարավային Կովկասում իրավական և դատական բարեփոխումների համար խորհրդատվություն» (GIZ) ծրագրի (ղեկավար՝ **Վարդան Ղողոսյան**) համագործակցությունը տարիների պատմություն ունի՝ ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի համար պարբերաբար կազմակերպվում են ՄԴ գործառույթ-

ներին առնչվող եւ գերմանական առաջավոր փորձը տարածող սեմինարներ, որոնց մասնակցում են Մահմանադրական դատարանի անդամներն ու աշխատակազմը:

Հերթական սեմինարը **հուլիսի 7-ին** էր՝ վերոհիշյալ ծրագրի աջակցությամբ եւ Լայպցիգի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի պետական եւ վարչական իրավունքի պրոֆեսոր, Մաքսոնիայի սահմանադրական դատարանի դատավոր, դոկտոր **Քրիստոֆ Դեզենհարթի** մասնակցությամբ: Քննարկման դրվեց **«Մահմանադրական մարմինների միջեւ նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի լուծումը սահմանադրական դատարանի կողմից»** թեման:



Սեմինարը բացեց ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը՝ կարեւորելով երկու կառույցների միջեւ արդեն ավանդույթ դարձած համագործակցությունն ու քննարկվելիք թեմայի արդիականությունը:

**Քրիստոֆ Դեզենհարթը** ներկայացրեց **«Մահմանադրական մարմինների միջեւ նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի լուծումը Գերմանիայում»** թեմայով զեկուցումը:

Զեկուցման շուրջ ծավալվեց աշխույժ քննարկում, պրոֆեսորին առաջադրված հարցերին սպառիչ պատասխաններ տրվեցին:

**«Մահմանադրական մարմինների միջեւ նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի լուծումը ՀՀ սահմանադրական փոփոխությունների համատեքստում»** թեմայով զեկուցումով հանդես եկավ ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, պրոֆեսոր **Գ. Հարությունյանը**:

Ջեկուցման շուրջ զեկուցողների եւ սեմինարի մասնակիցների միջեւ ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակում:

Ամփոփելով սեմինարի արդյունքները, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը շնորհակալություն հայտնեց օգտակար քննարկման համար եւ այն կարեւորեց «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի մշակման համատեքստում:

## ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Վենետիկի Հանձնաժողովն իր անդամներից ստեղծել է հատուկ պատվիրակություն, որը «ՀՀ դատական օրենսգրքի» նախագծի վերաբերյալ Հանձնաժողովի համար նախապատրաստել է մասնագիտական կարծիք:



Հանձնախմբում, որպես համազեկուցողներ, ներգրավված են Ջոհան Հիրշվելդը, Նիկոլա Էսանուն, Գուիդո Նեփի Մոդոնան եւ ԵԽ Քարտուղարությունից Գրիգորի Դիկովը:

**Հուլիսի 10-ին** պատվիրակությունը հանդիպում ունեցավ ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանի հետ:

Քննարկման առարկա դարձան օրենսգրքի սկզբունքային նշանակություն ունեցող հայեցակարգային մի շարք հարցեր:

Հանդիպմանը մասնակցում էին ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների իրավական ապահովմանն աջակցող մասնա-

գիտական խորհրդակցական խորհրդի անդամներ Միրանուշ Սահակյանը և Գագիկ Ղազինյանը:

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՉՈՐՐՈՐԴ ԿՈՆԳՐԵՍԸ ՎԻԼՆՅՈՒՍՈՒՄ



**Սեպտեմբերի 11-ին** Լիտվայի Հանրապետության մայրաքաղաք Վիլնյուսում մեկնարկեցին Սահմանադրական արդարադատության համաշխարհային կոնֆերանսի՝ «Իրավունքի գերակայությունը և սահմանադրական արդարադատությունը ժամանակակից աշխարհում» խորագրով չորրորդ Կոնգրեսի աշխատանքները, որին մասնակցում էին աշխարհի իննսուն երկրների սահմանադրական արդարադատության մարմինների պատվիրակություններ:

Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը Կոնգրեսում գլխավորում էր ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, Նոր ժողովրդավարության երկրների սահմանադրական վերահսկողության մարմինների կոնֆերանսի նախագահ Գ. Հարությունյանը:

Սեպտեմբերի 11-ին, Կոնգրեսի շրջանակներում, պարոն Հարությունյանի նախագահությամբ, կայացավ Նոր ժողովրդավարության երկրների սահմանադրական վերահսկողության մարմինների կոնֆերանսի մասնակիցների հանդիպումը, որտեղ քննարկվեցին կազմակերպության գործունեությանն առնչվող հիմնահարցեր:

Նույն օրը Կոնգրեսի շրջանակներում կայացավ նաև Եվրոպական սահմանադրական դատարանների կոնֆերանսի անդամ երկրների

պատվիրակությունների հանդիպումը:

Մեպտեմբերի 11-ին գումարվեց Մահմանադրական արդարադատության համաշխարհային կոնֆերանսի բյուրոյի նիստը՝ մասնակցությամբ Նոր ժողովրդավարության երկրների սահմանադրական վերահսկողության մարմինների կոնֆերանսի նախագահ Գ. Հարությունյանի: Բյուրոյի նիստի շրջանակներում որոշվեց Համաշխարհային կոնֆերանսի հաջորդ հինգերորդ Կոնգրեսն անցկացնել 2020 թվականին, Ալժիրում: Հաստատվեց Կոնֆերանսի քարտուղարության հաշվետվությունը, և քննարկվեցին Կոնգրեսի լիագումար նիստերի կազմակերպմանն առնչվող հիմնահարցեր:

Մեպտեմբերի 12-ի առավոտյան, Լիտվայի Հանրապետության նախագահ տիկին Դ. Գրիբաուսկայտեի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի փոխնախագահ պարոն Լինոս-Ալեքսանդր Միցիլիանոսի, Վենետիկի Հանձնաժողովի նախագահ պարոն Ջիանի Բուֆիբիոյի մասնակցությամբ, տեղի ունեցավ Կոնգրեսի պաշտոնական բացման արարողությունը, որին հաջորդեցին Կոնգրեսի լիագումար նիստերը:

13 սեպտեմբերի 2017թ.

### ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՉՈՐՐՈՐԴ ԿՈՆԳՐԵՍՆ ԱՎԱՐՏԵՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ



Վիլնյուսում ընթացող Մահմանադրական արդարադատության համաշխարհային խորհրդաժողովի չորրորդ կոնգրեսի շրջանակներում անցկացվեց «Օրենքը և պետությունը» խորագրով լիագումար նիստը, որի շրջանակներում պրոֆեսոր Ալեքսանդրու Տենասեն ազգային զեկույցների



հիման վրա ներկայացրեց համալիր համեմատական վերլուծություն:

Լիազումար նիստին ընդդիմախոս զեկույցով հանդես եկավ ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Հարությունյանը (զեկույցի ամբողջական տեքստը հասանելի է **համացանցային հեռկայալ հղումով [www.concourt.am](http://www.concourt.am)**):

Կոնգրեսի շրջանակներում հաջորդիվ անցկացվեց «Օրենքը և անհատը» խորագրով լիազումար նիստը: Ձևավորված պրակտիկայի համաձայն, Կոնգրեսում առանձին լիազումար նիստի շրջանակներում քննարկվեց սահմանադրական դատարանների անկախության հիմնախնդիրը:

Կոնգրեսի եզրափակիչ նիստում լիազումար նիստերի զեկուցողների կողմից ամփոփվեցին լիազումար նիստերի ընթացքում քննարկված հարցերը:

Կոնգրեսն ավարտվեց Վիլնյուսի կոմյունիկեի ընդունմամբ, որում ամփոփվեցին Կոնգրեսի հիմնական արդյունքները:

### ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻ ՀՐԱԺԵՇՏԻ ԱՅՅԸ



**Հոկտեմբերի 12-ին** ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց Հայաստանում Բրազիլիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան **Էդսոն Սարինյո Դուարտե Մոնտեյրոին**:

Դեսպանը հանգամանալից ներկայացրեց երկկողմանի կապերի զարգացման ուղղությամբ իր պաշտոնավարման տարիների ընթացքում կատարած աշխատանքները, շնորհակալություն հայտնեց աջակցության համար:

Դեսպանի խնդրանքով պարոն Հարությունյանը ներկայացրեց սահմանադրաիրավական բարեփոխումների ընթացքը Հայաստանի Հանրապետությունում, կարեւորեց Բրազիլիայի Գերագույն դատարանի ու ՀՀ սահմանադրական դատարանի համագործակցությունն ու հետագա զարգացումը,

դեսպանին հաջողություններ մաղթեց նրա նոր աշխատանքում:

## ԵՐԵՎԱՆՅԱՆ 22-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Հոկտեմբերի 19-20-ը, «ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ» թեմայի քննարկումով, կայացավ Երեւանյան 22-րդ միջազգային խորհրդաժողովը:

Խորհրդաժողովի կազմակերպիչներն են՝ ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ, «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԻՋՈՑՈՎ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ (ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ), ՆՈՐ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ, «ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ, Աջակցությամբ՝ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ:



Խորհրդաժողովը բացեց ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ **Գագիկ Հարությունյանը**:

Նա ողջունեց ու բարի գալուստ մաղթեց խորհրդաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր սիրահոժար արձագանքել են հրավերին իրենց մասնակցությունը բերելով արդեն ավանդույթ դարձած Երեւանյան 22-րդ խորհրդաժողովին, որը նվիրված է սահմանադրական արդարադատության առանցքային հարցերից մեկի քննարկումներին: Անցած տարիներին տարբեր երկրներից Երեւանյան միջազգային խորհրդաժողովի մասնակիցների թիվը վաղուց հազարից անցել է: Ձեւավորվել է գործընկերների եւ համախոհների հսկայական բանակ:



Նա վստահություն հայտնեց, որ Երեւանյան խորհրդածողովներն իրենց հետքն են թողել սահմանադրական արդարադատության բազմաթիվ հիմնախնդիրների լուծման, օրենսդրական ու կառուցակարգային բարեփոխումների, մեր երկրում սահմանադրական օրինականության հաստատման գործում, եւ ներկա խորհրդածողովում հնչող զեկուցումներն ու քննարկումները կամբողջականացնեն հիմնախնդրի առնչությամբ առաջադիմական մոտեցումները եւ հնարավորություն կտան լավագույնս գտնել նաեւ սահմանադրական դատարաններում նման գործերի քննության առանձնահատկությունները հաշվի առնող դատավարական լուծումներ: Շեշտեց նաեւ այս տարվանից «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական Կենտրոնի ստեղծումը, որի հիմնադիր անդամներ են աշխարհի 19 երկրներից մեծ ճանաչում գտած թվով 45 սահմանադրագետներ համոզմունք հայտնելով, որ Կենտրոնը կդառնա աշխարհում սահմանադրական ժողովրդավարության հաստատման ու սահմանադրական մշակույթի ամրապնդման կարեւոր դրոշակակիրներից մեկը: Դրա վկայություններից մեկն էլ այն է, որ Կենտրոնը միջազգային լայն ընդգրկում ունեցող իր առաջին խորհրդածողովը կհրավիրի այս տարվա նոյեմբերի 17-18-ին Հռոմում, Սուրբ աթոռի հետ համագործակցաբար:

Պարոն Հարությունյանը շնորհակալություն հայտնեց Վենետիկի Հանձնաժողովին՝ երկարամյա համագործակցության համար, մասնավորապես շեշտելով, որ «Դեռեւս 1997 թվականից լինելով այս հանձնաժողովի անդամ, իսկ հետագայում նաեւ հանձնաժողովի բյուրոյի անդամ, առանց վարանելու կարող եմ ասել, որ միջազգային պրակտիկայում բացառիկ է Վենետիկի հանձնաժողովի դերակատարությունը հատկապես իրավունքի

գերակայության հաստատման, ժողովրդավարական գործընթացների ամրապնդման ու, մասնավորապես, սահմանադրական դատարանների կայացմանը ցուցաբերած աջակցության գործում: Ողջունում եմ իմ վաղեմի գործընկերոջն ու բարեկամին, Վենետիկի հանձնաժողովի փոխնախագահ տիկին Հերդիս Թորգեիրսդոտին եւ հանձնաժողովի քարտուղարությունը ներկայացնող Տատյանա Միշելովային՝ այս խորհրդաժողովին մասնակցություն բերելու համար»:



ՍԱՀՄԱՆԱՂԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴՆՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ ♦ 3(87)2017

Շարունակելով իր ողջույնի խոսքը, պարոն Հարությունյանն ասաց. -Ձեզանից շատերը նաեւ հիշում եմ, որ Սահմանադրական դատարանների առաջին համաշխարհային Կոնգրեսը կայացավ 2009 թվականին Քեյթաունում՝ Հարավաֆրիկյան Հանրապետությունում: Եվ այսօր շատ խորհրդանշական է, որ սահմանադրական դատարանների Երեւանյան 22-րդ միջազգային խորհրդաժողովին մասնակցում է նաեւ Հարավաֆրիկյան Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ, իմ լավ բարեկամ պարոն Մոգոնգ Մոգոնգը:

Մեզ հետ են նաեւ սահմանադրական արդարադատության մարմինների պատվիրակություններ Ալժիրից, Բուլղարիայից, Բելոռուսից, Եթովպիայից, Լատվիայից, Խորվաթիայից, Ղազախստանից, Ղրղզստանից, Մակեդոնիայից, Չեռնոգորիայից, Ռուսաստանի Դաշնությունից, Սերբիայից, Վրաստանից, Տաջիկստանից:

Շնորհակալություն եմ հայտնում մեր բոլոր հյուրերին ու մաղթում բարի գալուստ Հայաստան:

Ցանկանում եմ բոլորիս անունից շնորհավորել Ղազախստանի սահմանադրական խորհրդի նախագահ, իմ լավ բարեկամ Իգոր Ռոզովին՝ մեկ ամիս առաջ Նոր ժողովրդավարության երկրների սահմանադրական

դատարանների միջազգային կոնֆերանսի նախագահ ընտրվելու կապակցությամբ:



Առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնում Լիտվայի Սահմանադրական դատարանի պաշտոնաթող նախագահ պարոն Գունարս Կուտրիսին, Վրաստանի սահմանադրական դատարանի պաշտոնաթող նախագահ պարոն Գեորգի Պապուաշվիլուն, Չեռնոգորիայի սահմանադրական դատարանի պաշտոնաթող նախագահ տիկին Դոսանկա Լոպիչիչին՝ իմ հրավերը չմերժելու եւ այս խորհրդաժողովին ներկա գտնվելու համար:

Ցանկանում եմ իմ շնորհակալությունը հայտնել նաեւ Հայաստանի Հանրապետությունում Եվրոպայի խորհրդի պատվիրակության ղեկավար տիկին Վուտովային՝ մեր խորհրդաժողովում ողջույնի խոսքով հանդես գալու պատրաստակամության համար:

Երախտապարտ եմ նաեւ Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանությանը եւ գերմանական GIZ կազմակերպության երեւանյան գրասենյակին՝ մշտապես մեր կողքին լինելու եւ Երեւանյան միջազգային կոնֆերանսների կազմակերպմանն աջակցելու համար:

**Խորհրդաժողովում ողջույնի խոսքերով հանդես եկան Վենետիկի հանձնաժողովի փոխնախագահ Հերդիս Քյորուլֆ Թորգեիրսդոտիրը, ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Սաթիաս Քեպերը, Հայաստանում ԵԽ պատվիրակության ղեկավար Նատայա Վուտովան:**

Առաջին նիստում (Նախագահում էր Լատվիայի սահմանադրական դատարանի նախագահ **Ինետա Ջիեմելեն**) զեկուցումներով հանդես եկան

Սաքսոնիայի սահմանադրական դատարանի դատավոր **Քրիստոֆ Դեգենհարթը**՝ «Սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերով գործերի քննության առանձնահատկությունները» եւ Սերբիայի Հանրապետության սահմանադրական դատարանի դատավոր **Տոմիսլավ Ստոյկովիչը**՝ «Ընդհանուր դատարանների հետ վեճերում սահմանադրական դատարանի դերը. Սերբիայի Հանրապետության սահմանադրական դատարանի փորձը»:

Հարց ու պատասխաններով քննարկվեցին զեկուցումներում արծարծված թեմաները:



Ընդմիջումից հետո իրենց զեկույցները ներկայացրեցին Ղազախստանի Սահմանադրական խորհրդի նախագահ **Իգոր Ռոզովը**՝ «Ղազախստանի Հանրապետության սահմանադրական խորհուրդը իշխանությունների բաժանման համակարգում», Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի փոխնախագահ **Սերգեյ Մավրինը**՝ «Ռուսաստանի սահմանադրական դատարանի դերը սահմանադրական վեճերի հաղթահարման գործում», ՀՀ սահմանադրական դատարանի անդամ **Ալվինա Գյուլումյանը**՝ «Սահմանադրական վեճերը և սահմանադրական դատարանի դերը համեմատական տեսանկյունից»:

Առաջին նիստն ավարտվեց հարց ու պատասխաններով, թեմաների քննարկումներով:

Երկրորդ նիստում (նախագահում էր Վենետիկի հանձնաժողովի փոխնախագահ **Հերդիս Քորուլֆ Թորգեիրսդոտիրը**), զեկուցումներով հանդես եկան Լատվիայի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ **Ինետա Ջիմելեն**՝ «Սահմանադրական ինքնության հիմ-

քերի պաշտպանությունը սահմանադրական դատարանի կողմից», Արդատանի Գերագույն դատարանի սահմանադրական պալատի դատավոր **Զոլպոն Օսմունովան**՝ «Սահմանադրական դատարանի դերը սահմանադրական կոնֆլիկտների հաղթահարման գործում» եւ Բելոռուսի սահմանադրական դատարանի նախագահ **Պյոտր Միկլաշնիչը**՝ «Պետական իշխանության սահմանադրաիրավական կարգավորումները»:

Հարց ու պատասխաններով, թեմաների քննարկումներով ավարտվեց առաջին օրվա աշխատանքը:



**ԵՐԵՎԱՆՅԱՆ 22-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆ ԱՎԱՐՏԵՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ**

Հոկտեմբերի 20-ին, «Սահմանադրական դատարանների դերը սահմանադրական կոնֆլիկտների հաղթահարման գործում» թեմայի քննարկումով, իր աշխատանքները շարունակեց Երեւանյան 22-րդ միջազգային խորհրդաժողովը:

Երրորդ նիստը նախագահում էր ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ **Գագիկ Հարությունյանը**:

Ձեկուցումներով հանդես եկան Հարավաֆրիկյան Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ **Մոզոնգ Մոզոնգը** «Վեճերի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի դերը Հարավաֆրիկյան Հանրապետությունում», ՀՀ սահմանադրական դատարանի անդամ **Ֆելիքս Թոխյանը** «ՀՀ սահմանադրական դատարանի դերը սահմանադրական վեճերի հաղթահարման գործում» եւ Չեռնոգորիայի սահմանադրական դատարանի դատավոր (ՄԴ պաշտոնաթող նախագահ) **Դեսենկա Լոպիչիչը** «Չեռնոգորիայի սահմանադրական դատարանի դերը իրավական կարգի պաշտպանության գործում» թեմաներով:



Մասնակիցների կարծիքների փոխանակմամբ Խորհրդաժողովն ամփոփեց երկօրյա քննարկումները:



Ամփոփիչ ելույթով հանդես եկավ նիստը նախագահող, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ **Գագիկ Հարությունյանը**: Նա ուրախու-



թյամբ վկայեց, որ երկօրյա երկխոսությունը, այն է՝ «Սահմանադրական դատարանների դերը սահմանադրական կոնֆլիկտների հաղթահարման գործում» կարևոր թեմայի քննարկումը, հաջողությամբ կայացավ: Երկօրյա Խորհրդաժողովը հնարավորություն տվեց իմանալ, թե այս կամ այն երկրում կոնֆլիկտները կարո՞ղ են, արդյո՞ք, հանգեցնել սահմանադրական ճգնաժամի, եթե ժամանակին չհաղթահարվեն: Այդ հաղթահարման մեջ Սահմանադրական դատարանները իրապես պետք է ունենան նկատելի դերակատարություն: Առավել ուշադրություն պետք է դարձնել անձի՝ սահմանադրական ինքնության հարցին: Անձի սահմանադրական ինքնությունն առաջին հերթին պայմանավորվում է նրանով, որ նա՝ է քաղաքացիական որակների կրողը, եւ Սահմանադրությունն առաջին հերթին անձի՝ սահմանադրական արժեքանությունն է, եւ սահմանադրական արժեքները պետք է կյանքի կոչել նրա հիմնական սկզբունքները երաշխավորելու ճանապարհով:



Պարոն Հարությունյանը խորհրդաժողովի մասնակից գործընկերների հետ իր այս համոզմունքները կիսում էր՝ աշխարհի 117 երկրի սահմանադրություններն ուսումնասիրողի՝ իրավունքով: Ըստ նրա, սահմանադրական ճգնաժամերից խուսափելու ուղին սահմանադրական կոնֆլիկտների հաղթահարումն է, եւ պետք է կարողանալ նաեւ իրավական դիրքորոշումներով նպաստել օրենսդրության եւ Սահմանադրության այնպիսի փոփոխությունների, որոնց արդյունքում երաշխավորված կլինի Սահմանադրության գերակայությունը: Բացառիկ կարևոր է, որպեսզի յուրաքանչյուր անհատի, յուրաքանչյուր քաղաքացու սոցիալական վարքագծի հիմքում, պետության յուրաքանչյուր քաղաքական ինստիտուտի քաղաքական վարքագծի՝ հիմքում, հանրային իշխանության հանրային վարքագծի՝ հիմքում ընկած լինի իրավունքի գերակայությունը:



ՍԱՀՄԱՆԱՐԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ ♦ 3(87)/2017

Պարոն Հարությունյանը խորհրդաժողովի մասնակիցներին կրկին շնորհակալություն հայտնեց իրենց ներկայության եւ կարեւոր հարցերի քննարկմանն ակտիվ մասնակցության համար: Նա իր խոսքի ավարտին, ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ սահմանված «Արդյունավետ համագործակցության եւ սահմանադրական արդարադատության ոլորտում ունեցած նշանակալի դերակատարման համար» ՀՀ սահմանադրական դատարանի ոսկե հուշամեդալով պարգևատրման ներկայացված անձանց հանձնեց պարգևները:

Պարգևատրվեցին՝ Վենետիկի Հանձնաժողովի փոխնախագահ **Հերդիս Քյորուլֆ Թորգեիրսդոտիրը**, Նոր ժողովրդավարության երկրների սահմանադրական դատարանների միջազգային կոնֆերանսի նախագահ, Ղազախստանի Հանրապետության սահմանադրական խորհրդի նախագահ **Իգոր Ռոզովը**, Լատվիայի սահմանադրական դատարանի նախագահ **Ինետա Ջիեմելեն**, Հարավաֆրիկյան Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ **Մոզոնգ Մոզոնգը**, Բելոռուսի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ **Պյոտր Միկլաշնիչը**, Լատվիայի սահմանադրական դատարանի պաշտոնաթող նախագահ **Գունարս Կուտրիսը**, Վրաստանի ՄԴ պաշտոնաթող նախագահ **Գիորգի Պապուաշվիլին**, Չեռնոգորիայի ՄԴ պաշտոնաթող նախագահ **Դեսանկա Լոպչիչիչը**, ՌԴ ՄԴ փոխնախագահ **Սերգեյ Մավրինը**, ՌԴ ՄԴ փոխնախագահ **Օլգա Խոխրյակովան**, Սաքսոնիայի սահմանադրական դատարանի դատավոր, պրոֆեսոր **Քրիստոֆ Դեգենհարթը**:

Դրանով Երևանյան 22-րդ Խորհրդածողովն ավարտեց իր աշխատանքները:



Խորհրդածողովի մասնակիցներին ընդունեց ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը:

Խորհրդածողովի շրջանակներում հյուրերն այցելեցին Մատենադարան, Ծիծեռնակաբերդ, Ազգային պատկերասրահ, «Զվարթնոց» պատմամշակութային թանգարան, Փարաջանովի թանգարան:



*ՀՀ ՄԴ մամուլի ծառայություն*

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության  
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝  
Երևան, Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 011-588-171  
E-mail: armlaw@concourt.am.  
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 10.11.2017թ.  
Դասիչ՝ 77754  
Գրաչափը՝ 70X100 1/16  
Տպաքանակը՝ 400

ՀՀ ՄԴ տեղեկագիրը ՀՀ  
բարձրագույն որակավորման  
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի  
ատենախոսությունների հիմնական արդյունքների  
և դրույթների հրապարակման համար ընդունելի  
հրատարակությունների ցուցակում

Вестник Конституционного Суда Республики Армения N 3(87)2017  
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 3(87)2017  
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 3(87)2017